Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Սկրկբ
469

ПЕРЕПЛЕТНО-ПЕРЕУПАЛЬНАЯ
МАСТЕРСКАЯ
А. Г. ПОЛЯКОВА
МОСКОВСК. УЛ Д. ПАСОЕВА
ВЪ АСТРАХАНИ

ՍՄՐԹ
469
348

ԿԵՐԱՅՈՒՐ

ԿԱՏԱՐԱՅԻՆ

Թարգմանեալ յառաջագոյն 'ի լատին լեզուէ 'ի հայ բարբառ 'ի ձեռն Պարգանայ ուրուն կրօնաւորի։

Լուսապա նորոգ շարադրեալ ըստ հայկաբանութեանն կարգի՝ յաւելմամբ 'ի նոյն և այլ ևս վկայութեց և բացատրութեց 'ի Արիզայեան տէր Յովհան վանանդեցի վարժապետ Քահանայէ Օշիւռնոյ աբ Սահմանոս եկեղեցւոյն 'ի հոգեւորապէս Հաշակուն դասուց քահանայից։

Յամի տեառն 1822։ 'ի 16 յուլիսի։

Երկրորդ տպագրութիւն

Հրամանաւ Լուսաւորչական Հայոց Սեւանդորին Սրբոյ Էջմիածնի։

'ի Տպարանի Էջմն Գրիգորի Լուսաւորչին Գրոյ,

Ի ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿԷ'Ն
ԷՋՄԻԱԾԻՆ։

1858 = ՌՅԷ։

469-2009
4096
41
Кр 472

Պատկաղարդ Երջանիկ Տեառն Տեառն Սահ-
մանոսի բարեկարգ Ազգ Եպիսկոպոսի մեծի
Օ միւռնոյս և համայն վիճակաց սորին ուղերձ
նուիրանայ պատկառաւոր իմն խոնարհութիւն։

Հրամանացն վեհագունից զօրինաւոր և զկա-
րելին պատուիրողաց զհպատակութեանն բե-
րել զհանդէս օրէնք են ասորադրելոց։ Բան-
զի յինքնիշխան հեղինակութէ ամենատեառն
հատատուն հրամանաւ սրբազանն պողոս. եբ-
բայեց", ԺԳ.17, ունկնդիր լինել առաջնորդաց և
հպատակուի ցուցանել պատուիրէ։ Այս կարի
յիրաւունս, զի ամենայն բարեկարգ կառավա-
րութեանցն արմատ է վեհագունիցն զկարելին
հրամայել, և հպատակացն պարզամիտ հնազան-
դութեամբ 'ի կատարումն զինքեանս մատու-
ցանել։ Ապա զի՞նչ այլ ինչ աղաւաղիչ կայցէ
բարեկարգութեան քան զհպատակացն չբերիչ
հնազանդութեամբ յօրինաւոր հրամանս վե-
հագունից։ Զսան այնորիկ և նուաստախոհ ան-
ձինս փոքրկութեան յԱռաքելաշունչն հրամա-
նէ սրբազնութեան ձեր 'ի յարդարումն բա-
նիս կոչեցեալ՝ մանաւանդ 'ի կատարումն հրա-
մանաց քան 'ի տկարութիւն մատաց հայելով՝
յանձն առի զտեսարակս զայս կերակուր քահա-
նայից անուանել 'ի յատակ ոճ հայկական լեզ-
ուի յարմարադրել, զոր վարդան ոմն սբ.եղայ
թարգմանեալ էր յառաջագոյն 'ի լատին լեզ-
ուէ։ Այլ զայս ինչ յայտնի խոստովանիմ, զի
յայսմ սակաւաբիրտն աշխատութեան ոչ մի-

այն զշարադրութիւնս առաջին բանիցն փոփոխեցի, այլ և զբաղում ևս նոր վկայութիւնս և բացատրութիւնս և իմաստս իսկ ՚ի նոյն յաւելի՝ մինչև մարթ լինիլ ասել նորոգ շարադրեալ, թէպէտ և հիմն եղեալ էր նախագոյն։ Զ՚որ և բազում ակնածութեամբ նուիրեալ բազմապայծառդ ձեր սրբազնութեան՝ յանձնեմ լիահանձար իմաստութեան ձեր դատաստանի։ և միամ համակ բարեմաղթս զերջանկագոյն կենաց և յամենայն սրտէ։

Բազմբանէան ՀԵՐ ՍՐԲԱԶՆՈՒԹԵԱՆ
հոռոմպիի ծառայ Մ՚ԻՐԶԱՅԵԱՆ
ՏԵՐ ՅՈՎՀԱՆ Վ՚ԱՆԱՆԴԵՑՈՒ
Վ՚ԱՐՔԱՊԵՊ ՀԱՅԱՆԱՅ Զ՚ՀՈՌՈՄԱՅ ԱՌԵՐԲ Ամենանոս Եպիսկոպոս։



Մոսիսյանների Գրադարան
Սերբերգեանց
Ազատաբեր

Յաղագս պարտուց Յոհանայիս։

Վերագոյն է յոյժ պատիւն քահանայական, և զամ պատիւս յինքեան պարունակէ։ Վասն զի պատուոյն գերազանցութիւն յայտ է 'ի պաշտամանէն, որ առեալ է ումեք, ուստի որքան 'ի բաձրագոյն աստիճանի է պաշտօնն, այնքան և ս 'ի գերագոյն պատիւ հանդիսանայ նորուն պաշտօնեայ։ Ուրդ՝ պաշտօն քահանայութիւն, որ է մատակարարութիւն եօթանց խորհրդոց որ եկեղեցւոյ, կարի յոյժ բարձրագոյն է և մեծ. վասն զի կարգեալ է որդեգրել զմարդիկ հօրն երկնաւորի, և ժառանգաւոր անանցական բարեաց՝ն կացուցանել զհաւատացեալս յանփոխանորդելի փառս արքայութեան։ Ապա ուրեմն և պատիւն քահանայական, որով և քահանայն իսկ մեծ է և բարձրագոյն։ Այլ այս՝ զի հեղինակն քահանայութեան է նոյն ինքն քահանայա-

պեան յաւիտենից տէրն մեր յիսուս, որ մարմնա-
ւիկ անօրէնութեամբ շրջեալ 'ի յերկրի՝ իշխանութիւն
իւրոյ և պատուոյ փոխանորդս 'ի մարդկային
զարմէ ընտրեալ որոշեաց, և բազմահրահանգ
բանիցն կրթութեամբ 'ի կատարելութիւն ճշմարտոյն
ածեալ գիտութեամբ՝ գեղեցիկն ծաւալեաց 'ի նա-
զնորհս հոգւոյն սրբոյ. և պատարագ հաճոյական
հոր իւրում կամաց քահանայապետաբար զին-
քըն մատուցեալ 'ի քաւութիւն մեղաց ամենե-
ցուն՝ զնոյն իսկ զկիրակաւէան խորհուրդ մարմ-
նոյ և արեան իւրոյ իսկապէս կատարել ճշ-
գրիչն հրամայեաց։ Զ այս արասջիք առ իմոյ յի-
շատակի. զուկ" • Եբ, 19։ Զոր՝ յայսոսիկ ողջամիտ
և յատակ խորհրդով հայեցեալ՝ յայտնի տեսա-
նեմք զբարձրութիւն քահանայականն պատուոյ • և
անտարակոյս հաւատամք, թէ քահանայապետն
խոստովանութեամբ մերոյ յիսուս այնպիսի պատուով
զքահանայն կամեցաւ պատուել, որ զնամ պա-
տիւս պարունակէ զերկնաւորս և զերկրաւորս։
Զայլ զի սոյն այս առաջարկութիւն առաւել
ևս բացայայտ և պայծառ 'ի լոյս ընծայեսցի՝
կամք են ինձ ատանօր ընտրանօք առաջի առ-
նել զանդժրելի վկայութիւս ճշմարտութեանն
սրբոյն • և զհիմնաւոր բանսն առաջին սբ հար-
ցըն եկեղեցւոյ • ուչ 'ի բարձրամտութի՝ այլ 'ի
զգաստութի դասուց քահանայից • և 'ի յակնա-
ծութի ժողովրդականացն խմբից. զի առաջ է
անհագիւտ, ոչքան 'ի բարձրութի հասանիցին,
կալ զանձն քոյ 'ի խոնարհութեան։

Գլուխ առաջին։

Թէ արքայական է քահանայութիւնն պարտ։

Զուցէ անախորժ ինն թուէսցի այս ըստ աշխարհի բարձրաստիճան փառաւորելոյ, և յաչաղելի զքահանայութեանն կացուսցէ պատիւ. սակայն առանց իրաւանց ամենեքին՝ և մարդկային փառասիրութեան խորհրդով. վասն զի միշտ և յամենայն դարս գեր 'ի վերոյ պատուել փառաւորեցաւ քան զամենայն աստիճանս՝ քահանայութեանն վիճակ, թէ բնական օրինօք և թէ գրաւորական՝ առ հրէայս և առ հեթանոսս։ Ուստի և 'ի բաղում՝ գտաւառս նոքին իսկ քահանչք էին թագաւոր, որոց հարկս տալ հրամայէր աստուած իբրև թագաւորաց. ոչ ընթեռնումք 'ի պատմութիւնս։ Որոց և ասայի իսկ աւետարերէ հաստատութեամբ. Կա. 6։ Որ 'ի յեռ աւետարանելոյ զլուսաւորութիւն սուրբ եկեղեցւոյ նորս երուսաղէմի, և զընծայսն ամենայն թագաւորաց, սպառնալով իսկ 'ի Է. 12. թէ թագաւորք՝ որք քեզ ոչ ծառայեսցեն, կորիցեն. ապա զօծումն հոգւով սրբով մարգարէագրէ յայցելութիւն և 'ի վերին թարութիւն որդւոցն եկեղեցւոյ. և զայլս ամենայն հովիւս և մանկակալս և այգեգործս աբարեալ՝ յարէ զկնի։ Բայց դուք քահանայք առաւն կոչեցիք, և պաշտօնեայք աստուծոյմերոյ անուանեսջիք, զզօրութիւնս ազգաց կերի-

ջինք, և մեծութեամբ նոցա սքանչելի լինիցին։
Այլ՝ դատաւորքն ժողովրդեն որպէս 'ի բա-
ղում գաւառս քահանայք էին 'ի հնումն. վա-
սն որոյ և Հրամայէր աստուած Իսրայէլացւոց.
Թ օրինաց. ԺԷ. 9։ Երթայցես առ քահանայ-
սն և քննեալ պատմեսցեն քեզ զդատաս-
տանն և արասցես ըստ Հրամանին, զոր պատ-
մեսցեն քեզ. և զգուշացիր յոյժ՝ առնել ըստ
ամի որպէս Հրամայեսցի քեզ ըստ օրինացն և
ըստ դատաստանին՝ զոր ասասցեն քեզ, արաս-
ցես. և մի՛ խոտորեսցիս 'ի բանէն, զոր պատ-
մեսցեն քեզ՝ մի՛ յաջ և մի՛ յահեակ. և մարդ-
ն, որ առնիցէ հպարտութեամբ առ 'ի չլսե-
լոյ քահանային, մեռցի. և բարձցես զչարն յիս-
րայէլէ։ "Այնպէս և վասն Ահարոնի ասէ. յԵկ-
էսի". խե. 21։ Այս նմա (աստուած) զկարող-
զութիւն 'ի կատարանս դատաստանաց, ու-
սուցանել զյակոբ վկայութիւն, և օրինաց իւ-
րովք տալ զլոյս Իսրայէլի. նոյնպէս և 'ի նորու-
մն։ Մենայն իշխանութեանցն հեղինակ էտ
քահանային զԱստուածային զայս իշխանութի՝
Հրամայեալ 'ի մատթ". Ժբ. 18։ Ամենասեմ ձեզ,
զոր միանգամ կապիցէք յերկրի, եղիցի կա-
պեալ յերկինս. և զոր արձակիցէք յերկրի, ե-
ղիցի արձակեալ յերկինս։ Քահանայ էր Մել-
քիսեդեկ՝ միանգամայն և թագաւոր. արդ՝ ա-
սա՛ ինձ յաղագս որոյ 'ի նոցանէ բարձրագոյն
գոյն հաչակի 'ի սուրբ գիրս. ոչ ապաքէն յա-
ղագս քահանայութե՛, որ և արքայաբար յաղ-

թողին զքահանայական նուէրսն մատուցանէր յօրինակ պատարագին քրիստոսի զՀայր և զգէ-
նի։ Ծնն՝։ ԺԴ։ 18։ Լուսոյ և զքահանայութիւն միածնին որդւոյն ըստ նորա կարգին հաստատէ
Հայրն երկնաւոր։ Դու ես ասէ քահանայ յա-
ւիտեան ըստ կարգին մելքիսեդեկի՝ և ասէր ընդ-
յաջմէ քումմէ։ սաղմ՝՝ ՃԹ։ 4։ Ընդ՝ յայսցանէ
ամենեցուն։ և յայլոց սոցին նմանեաց հաւաս-
տի է։ թէ քահանայականն պատիւ՝ արքայական
պատիւ է։

Դ-ԼԸ-Ի ԷՒԼՐԾԻ։
Թէ հաճանայ էր ՝ի վերոյ էն հան պէտրէի, և էն հը.
ր-ԷՂԱԿ։

Դերունակ բարձրութիւն քահանայական ա-
սիճանի ոչ զկայ առնու գերազանցել միայն
զմարդկամբ, այլ վերաթեւեալ ՝ի բարձունս՝
և զանմարմնոցն դասուց պատուովք սուրբ
արկանէ։ Ընդ՝ զգերազանցել նոցա քան զմարդ-
կիկ յայտնագոյն բացայայտեաց ասէրն մեր, յոր-
ժամ առաց ընտրեալոց իւր աշակերտաց՝ ՝ի յովՀ՝՝
ԺԵ։ 17։ Դուք ոչ էք յաշխարհէ, այլ ես ընտ-
րեցի զձեզ յաշխարհէ։ Այս և յառաջքանզայն
յորժամ կամէր երանել ՝ի փիլիպպեայ կեսա-
րիայ, ԵՀարց աշակերտացն՝ մատթ՝՝, ԺԶ։ 13։
Օ՞ ոք ասեն զինէն մարդիկ՝ թէ իցէ որդի մար-
դոյ։ Օ՞ երբոյ առեալ զպատասխանին ըստ կար-
ծեաց հաստատակացն՝ ԵՀարց անդրէն։ Իսկ դուք

զ՝ոք ասէք զինէն՝ թէ ից եմ։ Լբրու ասիցէ, մարդիկ աշխարհի ըստ մարմնոյ խորհելով՝ բազմապատիկ ինչ ասեն վասն իմ, վերին իմաստութեան ո՛չ գոլով ծանօթ. իսկ դուք՝ որ ընտրեալ որոշեցայք յաշխարհէ. և խորին խորհրդոց երկնից դասայք մակացուք և խորհրդաղգայք, զի՞նչ ասէք վասն իմ. որով յայտնապէս եցոյց, թէ ըստ բարձրութեան աստիճանի գերագոյն են նոքա քան զամենայն մարդիկ։ Այսպէս և զոր ասէ սրբապատն պողոս յԵբր". Ե.Ի։ Ամենայն քահանայապետ 'ի մարդկանէ առեալ՝ կայ յաճախոյս կողմն անդր, մեկնիչ ումն մեծարու այսպէս մեկնաբանէ։ Ամենքն՝ ամ քահանայապետ 'ի հասարակ վիճակէ մարդկան վերառեալ՝ և յաճախոյս կողմն անդր հաստատուն կացեալ, գեր ամենցուն բարձրութիւն պատուոյ ածային է և վեհագոյն։ Զի ի եթէ որոշմամբ իմն որդիք այ ասէին հրեայք առ հեթանոսաց, ապա քանի՞ առաւել քահանայք առ հասարակ մարդկամբքն բարձրագոյն հռչակման են արժանաւորք, զաճայինսն 'ի յերկրի ասա օրինաւոր իմն իշխանութեամբ տիրապէս գործելով։

Այլ առաւել ևս 'ի վեր տարեալ զբանս՝ ըստ ուղիւ ապացուցանեմք թէ ո՛չ միայն գերազանց են մարդկան, այլ և հրեշտակ ինչ մարմնաւոր սպասարկու ածային մեծ վայելչութեամբ։ Զո՛ւր՝ զինչ ասէ Աղաքիայ. Բ. 7։ Հրեշտակ տէրն զօրութեանց է. (քահանայն) յորոյ մեկ

նուէ՝ ասէ՝ ՝ԲՆ ՅՈՎՀԱՆ ՈՍԿԷ՝ քահանայն իսկապէս հրեշտակ է՝ այ. այսինքն աւետաւոր և պատգամաբեր. զի բարեխօսէ՝ ի մէջ այ և մարդկան։ Ա՛հա և սրբազան աւետարանիչն յովհ՝. աւ. Եօթն եկեղեցեացն եպիսկոպոսունս գրեալ՝ ի դիմաց այ՝ հրեշտակս անուանէ զնոսա. գրեա՝ ասէ՝ առ հրեշտակն Եփեսացւոց եկեղեցւոյն, և այլն։ Զմանապէս և սուրբն Պողոս որոշեալ կամելով զերկրաւոր հրեշտակս՝ զքահանայն ասեմ, յերկնայնոցն՝ ասէ, Եթէ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ, և այլն։ Ուստի և պատուէր հրամանի ևս կնքէ կանանց սքօղել զգլուխս իւրեանց՝ ի մէջ եկեղեցւոյն վասն հրեշտակաց. ա՛ կոր՝. ԺԱ. 10։ ուր զքահանայս անուանէ հրշտակս, և պատուիրէ կանանց ծածկել զգլուխս իւրեանց, զի մի՝ բայերեսս աստուծոյ նոցա տրասեսցէ զՀայեցուածս քահանայից։

Յայս յարմարել և զոր ասէ՝ ՝ԲՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ՝ ի յայտ՝. ԺԴ. 4. չէ՝ անդէպ ինչ. զոր թէպէտ մեր թարգմանութիւնքն՝ թէ՝ ՝ՈՐՔ ԵՆ, որք ընդկանայս ո՛չ խառնակեցան, և են կուսանք. սակայն՝ լատինն ընթեռնու, որք ո՛չ կանայս առնեն և արանց լինին. իբրև զհրեշտակս՝ այ են։

Յայս միտ ասէ՝ Հերոնիմոս. կեանք է հրեշտակային կեալ՝ ի մարմնի իբրև զանմարմին. այսինքն մարդ գոլով երկրաւոր և հողազանգուած՝

հրեշտակօրէն սանձել զմարմնական ցանկութեանցն բերմունս, և ողջախոհ կենաց զտեսն խորհիլ հանապազ։ Եւ ահա զսոյն նահատակութիւն համակ նահատակին կուսակրօն քահանայք մշտամարտս հանդիսիւ, որում և գերազոյն քան զհողանիւթ բնութիւն ամբարձեալ 'ի սպասաւորել երկնաւոր գառին, և ընդ նմա լինիլ յաւերժեան փառաց՝ լինին արժանաւորք։

Վասն ամ ինչ պարտաւոր են քահանայք՝ թէ կուսակրօնք և թէ որք ըստ աշխարհի, լի և անթերի արդեամբք կատարել, և յանձին ունիլ զչարեալն յատկութիւն հրեշտակայ, որք են գիտութիւն, ողջախոհութիւն, բանաւոր հօտին պահպանութիւն և առ ՅԾ հրեշտակութիւն մեղաւորաց։ Որ զի արժանի աթոռակցութեանն լինելով քան և չորից երիցանց շուրջ զաթոռն գառին պատ բ։ զորեալոց՝ 'ի յերկնաւորացն անտի զուարթնոցն պաշտեսցին յաւիտեանս և պատուով քան զերկրաւոր թագաւորս։

Ոչ՝ տեռ ինձ ասասնօր զհրաշափառագոյնն, զոր քահանայապետն յաւիտենից շնորհեաց քահանայից։ քանզի ոչ շատացաւ միայն զմարդկային բնութեան պատուով գերազանցել և 'ի հրեշտակական փառսն վերառնուլ, այլ և քան զնոսին իսկ զանմարմին զօրութիւն գեր 'ի վերոյ բարձրացոյց։ Վասն զի հրեշտակք հոգիք են հարկաւորք, այսինքն արբանեկողք, որք առքին

'ի սպասաւորութի ժառանգաւորացն փրկութե։
Եբր՝։ ա։ 14։ Իսկ քահանայք՝ ժառանգակիցք
և եղբարք են քա՛հ։որք և զհրեշտակս իսկ դա-
տին ըստ պողոսի։ ա՝կորն՝։ զ։3։ Մի՛չ գիտեք՝ թէ
զհրեշտակս դատիմք, թող թէ զերկրաւորս։
Բայց եթէ յայտնագոյն ևս կամիս գիտել
զգերակայութի քահանայից 'ի վերայ հրեշտակաց,
զգաստութիւ մտայ հայեաց 'ի սերովբէն, որ թէ
պէտ և լուսանիւթ անսխալ գոյացութի, և սի-
բաւոր անցուրտ ջերմութիւ երեքբերեան օրհ-
նութիւն անդուլ սիրաբանիչ, և քան զնա՛մ վեր-
նոյն դասակցութիս ա՛ծային մեծ վայելչութիւ հպա-
ւոր մերձակայ, այլ սակայն 'ի սպասաւորութիւ
անդր մաքրութիւ շրթանցն եսայեայ կայծակամբն
առ 'ի սեղանոյն՝ որ օրինակ էր անչափոթ միա-
ւորութեան ա՛ծութիւ և մարդկութիւն քա՛ի, ուն-
լեացն կարօտացաւ. որ զանհամարձակութիւն ու-
նի նշանակ 'ի կոչմանէ սերովբէին։ իսկ առ-
քահանայս նկատեալ՝ զձիրս սիրոյ և հաւատոյ
նշանակէ։ որովք յանմատչելին խորհուրդ ար-
ժանապէս մերձենան։ Իսկ քահանայն զձշմար-
տութիւն այնմ օրինակի զխորհուրդն սարսա-
փելի ինքնին կատարէ, ձեռօքն շօշափէ, բե-
բանովն ճաշակէ և մատամբքն արժանաւորաց
զնոյն մատակարարէ։

Յառաջ մատչի սատանօր և այլ իմն վկայութի
յա՛ծաշունչ գրոց զհրեշտակականն դասուք գե-
բաշանցութե քահանայից յայտարար։ հրեշտա-

կարդան մինչեւ ամեներ երբեմն, զի բան սարկուն սատանայ հակառակէր յեսուայ քահանայի, և ոչ ժպրհեալ հայհոյութեան դատաստանին հանդուրժել՝ սատեսցէ, ասէր՝ի քեզ տէր։ զհակառակուեն վրէժխնդրուի ոչ ինքնին՝ի վրէ նը թափելով։ Ի աքար՝՝, գ։ 1։ յուդայ։ ա։ 9։ Եակ քահանայն՝ և զերկնային անգամ ըզ հրեշտակս, որք հակառակ ինչ առաքելաքարոզ աւետարանին խօսիցին, ի շխանուէր իւրով դընէ՝ի նզովս։ Եթէ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ՝ աւելի քան զոր աւետարանեցաքն ձեզ՝ նզովեալ եղիցի։

Ասան այնորիկ արդարև վեհագոյն հրեշտակայ է։ ոչ և աչն՝՝ Երեսէս շնորհալին վկայէ՝ի բանն, որ առ քահանայս՝ յասելն, հրեշտակեան գերաշխարհիկ զօրութեանն՝ գեր՝ի վերոյ է այս առուիճան։ ընդ՝՝։ Երես 46։

Զոլոխ։ Երրորդ։

Ոչ հաճանայ են տիրելի և բարեխնամ այ։

Ընդուգական է այս պատիւ և անոլորտ սիրոյն ոչ պարգևք բարձրուեն։ զի որ ինքնիշխան տէր է և առեանակալ թագաւոր, և չունի զոք յարտաքոց հաւասար ինքեան։ մանաւանդ զի՝ և երկինք ոչ են անարատ առաջի նորա, յովբ՝՝։ ժե։ 15։ Այս և որքան և ազնուագոյն իմն իցէ սաեղծուած, անարգագոյն է քան զորդի։ ըստ պողոսի։ Երր՝՝։ գ։ 5։ 6։ Սակայն և այնպէս բա-

զում անգամ ախորժ հաճուք բարեկամ ին-
քեան անուանեաց զքահանայս, և արար իսկա-
պէս, յորժամ յայն սատիճան պատուոյ ձեռ-
նադրեալ զնոսա՝ ասաց. յօհ. ԺԵ. 14։ Ոչ ասեմ
բարեկամ իմ էք. ոչ ևս կոչեմ զձեզ ծառայս.
զի գերազանցուեն պատուոյ՝ զոր ետուս ձեզ,
ոչ է վայելչական. այլ զձեզ կոչեցի բարե-
կամ, ևն։ Զի այլուր ևս 'ի զուկ". ԺԲ. 4. ա-
սէ։ Բայց ձեզ սիրելեաց իմոց ասեմ. մի՛ զար-
հուրիք յայնցանէ, և այլն։

Ի վերայ այսր գերակայուն համակ սքանչա-
ցեալ գոչէ գրիգոր հայրապետն հռոմայ. ով
սիրալի հաճուն ազգային առատ բարուն՝ որով
բարեկամ անուանէ զմեզ, որք ծառայ լինելոյ
անգամ չունիմք արժանաւորութիւն։ Որքան
բարձրուն է այս՝ քահանայից բարեկամ լինել
ոչ, մեծ է յիրաւի և ամենամեծ այսանակ վար-
ձուց հատուցումն։ Բաղադրս այսր և զգեր-
պայծառագոյնն մագիթէր 'ի հօրէ փրկիչն ամե-
նայնի. Ձայր՝ կամիմ, զի ուր ես եմ, և նոքա
ընդիս լցեն, զոր ետուրն ինձ։ յոհ". ԺԷ. 24։

Այլ ասիցէ ոք թերևս. զիարդ և որովք օրի-
նակաւ պատուէ ազգս քահանայս իբրև զսիրե-
լիս և զբարեկամս, լուիցէ. Զի ի եթէ 'ի բա-
րեկամանն հասարակ է ամ ինչ, ազ ոչ միայն
զբնուն, զշնորհայ և զփառացն բարիս հաղոր-
դեալ քահանայից, այլ և՝ որ ամբաւագոյն զար-

մացման և սիրոյ է արժանաւոր, զնշխանութիւն քահանայագործելոյ զմարմին և զարիւն իւր զանապական, և հոգեզուարճ փափկութիւն վայելել 'ի նմին, սիրողապէս միանալ ընդ նմա, և լինել ՝ուծ շնորհօք, անմեկնելի բնակելով յ՝ուծ։

Խսկական յաւակութիւն է բարեկամաց մտերիմ հարազատութիւն և անկեղծ սիրով զարտի իւրենց զծածուկն բանալ իրերաց. և ահա մեծապանչ արդեամբք ելից կատարեց զսոյն մարդացեալն ՝ուծ, ոչ և յայտնի վկայէ զանձնէ, յոհ՝. ԺԵ. 15։ Օ՝ամ՝՝ զորս լուայ 'ի հօրէ իմմէ, ծանուցի ձեզ։ Որ՝՝ անհաս և անպատում խորութիւն խորհրդոյն ՝այ. յառաջին ստեղծման անդ զմարդն 'ի հողոյ, խորհրդակցութիւն ՝նբ երրորդութիւն զայն վերապատուէ. իսկ յերկրորդ արարչութիւն ատ զառաջինն զծնունդն 'ի հոգւոյ՝ անհաղորդ բնութիւն իւրոյ և անհաս խորոցն խորհրդակիցս և բարեկամն առնէ։

Յամակ հաճոյական և լի հրճուանօք է ապաքէն սեղանակցութիւնն բարեկամաց, և սեղանն հաստատակայ. ուստի և դաւիթ ՝ոչ այլ իւիք լաւագոյն ևս փոխարինութիւն երախտահատոյցն լինել կարողացաւ գերհաւատարիմ բարեկամին իւրում յոփնաթանու՝ յետ դարձուցանելոյ առորդի նորա մեմփիբոսթէ զամենայն անդան ատ՝ ՝ուղայ հաւուն իւրոյ՝ քան եթէ ասելով նմա և դու ուտիցես հաց հանապազ 'ի սեղանի իմում։

ք։թագ"։թ։7։ Նոյնպէս և Համան հրաւիրեալ 'ի
ճաշ ընդ արքային Աշտաշիսի՝ ոչ թէ օրքա-
նեօք պարծէր, կրկնել և կրկնեալ զայս բան,
վաղիւ ընդ արքայի ճաշել հրաւիրեցայ, ասէր։
ե։ Բայց տես ինձ դու։թէ օրքան և բազմա-
պատիկ առատութիւն շնորհեաց մեզ զսոյն բարե-
կամն մեր ք։ա։զի յետ կերակրելոյ իւրով իսկ
մարմնով և արեամբ զքահանայան նոր օրինացս
'ի սեղան անդր վերնատան՝ հաստատուն և ան-
դարձ խոստմամբ ասաց առ նոսա։զուկ"։իբ։29։
Այլ ես ուխտեմ ձեզ, որպէս և Հայրն իմ ուխ-
տեաց ինձ զարքայութիւն։ Զի ուտիցէք և ըմպի-
ցէք 'ի սեղանն իմ յարքայութիւն իմում, և նըս-
տիցիք յերկոտասան աթոռս դատել զերկոտա-
սան ազգն Իսրայէլի։ Ով առատ պարգևացն,
բարէ անհատ և անչափ սիրոյն՝ մարդկիկ երկ-
իւղոք յերկնային սեղան անդր վայելելք, բարեկամք
և սիրելիք այնմ լինիլ արժանաւորին, որ անհուն
հեռաւորութիւն 'ի բացեայ անհաղորդ է յարարա-
ծոց, զի ո՞նմանեսցի տեառն յորդիս այ։ասէ
ապաշխարգուն։ձը։8։ Բայց և այնպէս ախորժ
հաճութիւն սիրեաց փառաւորիլ 'ի խորհուրդս
սքոյ իւրոց։ հեշտ և բաղձալի համարեցաւ լի-
նիլ ընդ որդիս մարդկան։ և մարմնաւիկ անօ-
րէնութիւն ընդ իւր ածուն զհողեղէնս անշփոթ
խառնեալ զբնութիւն՝ ետ իշխանութիւն որոց ընկա-
լանն զնա՝ որդիս այ լինիլ։ ծնանելով ոչ 'ի կա-
մաց մարմնոյ, այլ 'ի հոգւոյն սքոյ ըստ հոգւոյ։

Հայեաց արդ ոմ քահանայ, հայեաց հոգեպէտ յատակ տեսուլթիւն 'ի բարձրուն քու�դ աստուծանին, և զգոյշ լեր. բարեկամ ես այնմ, որ անսահման բացակայութիւն 'ի բացեայ մեկուսացել ըստ համեմատութեան չունի իւր ընկեր. նմին յարմարեա զանձնդ մաքրութիւն, և զաստուծային զգեցիր արքունի: Սիրելի կոչեցար, և ես անշամանդաղ անսասուեր սիրոյն, մի' յերկրաւոր վայելչութեան սէր զհոգւոյդ բաղձանս ձգտեցուցաներ: 'Ի սեղան անդր այ՝ զանմահարարն կերակուր ահա վայելես, մի' ընդ այսս կաքաւեր մարմնապարար որկորսատութիւն, զի մի' արքայական խնջոյից սեղանակցութեն՝ համանայ հասցէ քեզ պատիժ. և չարագոյն ևս քան զնորայն, որքան մեծագոյն է և ոչ՝ սեղանն այ քան զարտաշխին:

Գլուխ Չորրորդ:

Թէ քահանայքն էին ոչ:

Զ ամենայնիւ հրաշափառագոյն և զաստուածագոյն պատուոյ մեծութիւն, և զգերակայ լրումն ճոխութիւն բացայայտէ սոյն այս դրութիւն ունել քահանայից. և կարի քաջ, զի թէպէտ յանկարելեացն է դասակարգի, զի մարդ հողածին և մահկանացու, և բազմապատիկ ևս տկարութիւն վարակեալ՝ յայնչափ և յայնպիսի պատիւ բարձրացի, մինչև զանհաղորդական զայն անուն ընդունել. բայց սակայն խնամք սիրոյն այ՝ աննախանձ ինն հաճութիւն կարելի արար և դիւրին,

և արդեամբք իսկ կատարեաց, որպէս քաջայայտ է և անժխտելի 'ի բազում՝ տեղեաց սուրբ գրոց։

Զ"ԸՆ՝ իշխանութիւնն Թողլոյ զմեղս՝ գործէ աստուծոյ. մի այնորիկ յասէն քրիստոսի ցանդամալոյծն։այր դու՝ Թողեալ լիցին քեզ մեղք քո. սկսան դպիրքն և փարիսեցիքն խորհիլ և ասել, ո՞ է սա, որ խօսի զհայհոյութիւնս. ո՞վ կարէ Թողուլ զմեղս, բայց միայն աստուած։ զսուկ"։Ե։21։Զբ սակայն՝ զաստուածական զայս իշխանութիւն շնորհեաց քահանայից աննահանջելի իմն հրամանաւ՝ ասելով. յովհ"։Ի։23։Զոհէք հոգի սուրբ. եթէ ումեք Թողուցուք զմեղս, Թողեալ լիցի նոցա. և եթէ զուրուք ունիցիք, կալեալ լիցի։Զղեա 'ի պատիժ քարուԹեան աքայաբու և եղաբելի և այլոց ևս հեատելոց 'ի ուեառնէ՝ 'ի խնուլ զաղբիւրս երկնային ջրոց, մի անգամ փակեաց զերկինս, և անդրէն երբայ. բայց քահանայն յաւուրն բիւրիցս կարօղ է փակել զնոյն և բանալ, զի 'ի ծոցոյ բարձրելոյն հոսեսցին մշտապէս գեաք շնորհաց՝ ողողումն տալ բանաւոր երկրի, զի զբարեացն բերցէ զպտուղս առաքինաբար, յաւորժաբար պարարումն աստուծոյ. վասն որոյ և յիրաւի է աստուած ասել զքահանայս, որք զգործան այս առնեն 'ի յերկրի 'ի ձեռն շնորհաց նորա։

Բնաւական էր թէպէտ այս միակ վկայութի՛ն հաստատուի բանիս, այլ սակայն յաւելցուք ՝ի նոյն և զքանի վկայութիս ևս. որով մի՛ ինչ ասել ունիցի, որ կամին դիմախօսել: Արդարդէն դաւիթ որդիս աստուծոյ անուանէ զքահանայս՝ յասելն. սաղմ. իբ. Աստուցէք տո՛ն որդիք աստուծոյ. մատուցէք տեսուն զորդիս խոյոց: Այս ևս՝ սաղմ. ճա. Ես՝ ասացի, թէ՝ աստուածք էք: Այս թէ՝ ես ասացի, թէ՝ աստուածք էք: Այս ոչ ամենեքին զմարդկանէ ասին, որք աստուածային իմն իշխանութեամբ պանծանան: Զոյր սակս և ինքն իսկ պատուէ յոյժ զքահանայս, և կամի զի պատուեսցին և ՝ի մարդկանէ. և արգելու ընաւին մեղանչել ՝ի նա: Ասայնմ. սաղմ, ճդ. 15: Զի՝ մերձենայք յօծեալս իմ. ևն: Այս թէ՝ որ շօշափէ զնա, շօշափէ զբիբս աչաց իմոց: Այս և պատուիրէ հոգւով սրբով յասելն. բոլորով սրտիւ երկիր յայ, և պատուեա՛ զքահանայս: Այս այլուր՝ պատուեա՛ ասէ զքահանայս: Որպէս և ինքն իսկ հեղինակն քահանայութեան առ ՝ի մեծարանս պատուոյ քահանայից երկնից առաքեաց առ նոսա զբորոտան: Զ որս թաղս և գլխէր լինիլ չար և կեղծաւոր, սակայն և այնպէս ասաց. զոր ինչ ասասցեն ձեզ, արարէ՛ք և պահեցէ՛ք:

՝Ի դէպ է յաւելուլ և զայն. զի նոյն ինքն մարդասէրն ՝ի գերագոյն հպատակութիւն հնազանդի միշտ քահանային, և ըստ կամաց նի

և հրամանի խոնարհեալ ինչանէ խսկապէս 'ի նշխար մարմնոյ իւրոյ և 'ի գինի արեանն։ Զ.ե-լրագոյն է, գերագոյն է և անզուգական այս պատիւ և իշխանութիւն, զոր ետ քահանայից աստուած և տէրն բոլորեցուն։

Յաղագս որոյ կամի աստուած և խնդրէ ճանաչել քահանայից զբարձրագոյն իւրեանց և զանչափական պատիւ, և հանապազ 'ի նոյն խոկալ ամենայն զգուշութեամբ։ Ուստի ձեռնադրեալ ամենատրն մեր զՇՆՈՐՀԱԼՆ յաստիճան քահանայութեան, և տուեալ նոցա իշխանութիւն սրբագործել զմարմին և զարիւնիւր զանապական, ասաց առ նոսա։ գիտէք՝ զինչ արարի ձեզ։ Իբրու թէ ասել, ծաներուք, թէ յոր աստիճան արդեօք բարձրացայք, և ըստ այնմ գնացէք յամենայն սրտէ և բաբեկարգութեամբ։

Ասա բարձրութեն պատուոյ աւաղելի յոյժ և թշուառ է արդարև անարգուի քահանայից, եթէ զեղծանիցին 'ի պաշտաման իւրենց։ վասն որոյ զորդիսն հեղեայ որդի աստուծոյ անուանէ ՇՆ զիրն, ըստ լատին ՇԾՆԷՒ, վասն զՀԱՆԱՉԷԼՈՅ նոցա զքահանայականն իւրենց արժանաւորութիւն։ թէպէտ 'ի մերս ՇԾՆԷՒ գրի վասն նոցա այսպէս, Բ. Թագ՝. Բ. 12։ Որդիք հեղեայ քահանայի՝ որդիք ժանաք, և ոչ ճանաչէին զտէր։ Օ՛ի բազմապատիկ անկարգութիս և չարիս գուցանէին 'ի պաշտաման իւրենց։ Յոյր սակս և աստ-

ՀԱՅԿ-ՍՍՌ Ա.

տիկ պատուհասեալ՝ ՉՆՉԵՑԱՆ յերկրէ սպան-
մամբ յայլազգեաց, և զարմուին զրկեցան 'ի քա-
հանայականն պատուոյ և փառաց, որպէս և ըս-
պառնացաւ նոցա առաւուած:

ՊՈՂՐԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ:

Հաստատութիւն հայկական գերագանցութեան բանի-
որքոյ հարց:

Թագմապատիկ են ապաքէն բանք սքոյ յաղա-
գըս գերազանցութեան պատուոյ քահանայից,
որպէս դիոնէսիոս արիսպագացին ասէ. Որ քահա-
նայ անուանէ զոք, իմանալ պարտի զնա այր ա-
մենեւին գերասիաւագոյն և ուծային, և ներհուն
ամ սրբոյ գիտութեան: Այս որպէս իգնատիոս ասէ. քա-
հանայութիւնն գագաթ է և կատար ամենայն
բարեաց, որք են 'ի մարդիկ:

Սքոյն գրիգոր ուծաբան. մի՞ թէ ունայն 'ի պատ-
ուոյ ի՞նչ թուի քահանայութիւն այս, զոր և նո-
քին գերամաքուր պաշտօնեայքն հրեշտակացն
դասք պատուեալ մեծարեն զնա իբրև ո՛չ ի-
ւիք նուազ 'ի պաշտամանց իւրեանց:

Սքոյն ամբրոսիոս. Զիւք ինչ այնպէս գերազանց
յասսի կենաս քան զքահանայս, եթէ որ ինչ
եմքս, զնոյնն մանաւանդ գործով քան պիտակ
անուամբ ճշգրտեսցուք, մի՛ գուցէ եղիցի կո-

չումն՝ ընդունայն, և պատիժն՝ խստագոյն. մի գուցէ լինիցի պատիւն՝ վսեմ, և կեանքն՝ աղտեղի։

Սքն յովհան ոսկեբերան. «Քահանայից է առաւել անօրէնութիւն այնց, որք են յերկրի. նոցա է պարգև այն իշխանութիւն, զոր ամենամեծն աստուած տալ չկամեցաւ ոչ հրեշտակաց և ոչ հրեշտակապետաց. վասն զի ոչ ասաց նոցա՝ զոր կապեսցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակեսցես յերկրիս, եղիցի արձակեալ յերկինս։ Այլ զինչ արդեօք ասասցես զայս լինել, բայց եթէ զամենայն երկնային իրաց իշխանութիւն յաստուծոյ շնորհեալ քահանայից։ Զինչ արդեօք համեմատել կարէ այսմ պատուոյ. զի քահանայն 'ի յերկրի դատաւոր նստի, և աստուած վճռոյ նորա հետևի և հաստատէ. որպէս զի՝ զոր ինչ քահանայն 'ի սուրինս երկիր դատեսցէ, նա 'ի բարձունս զնոյն իրաւացուսցէ։

Զարձեալ ասէ, եթէ զմտաւ ածցէ ոք, թէ որքան մեծ իցէ խորհուրդ հաղորդութեան, հաւաստասցէս իմանայ, թէ որքան պատուոյ և իշխանութեան են արժանացեալ քահանայք շնորհօք հոգւոյն սրբոյ։ Զմտաւ ած ո՛վ քահանայ, թէ յորպիսի պատիւ ընտրեցար, և զորպիսի քաղցրութիւն սիրոյ վայելես. յայն՝ զոր հրեշտակք տեսեալ զարհուրին և համարձակ հայիլ չկատարին վասն սո՛ 'ի նմանէ արտասանելոյ

հաւատոյ ի. սովին ահա անանիմք մեք, և ի
սոյն վայելեմք, և մի մարմին եմք քրիստոսի։
Լուիցուք ուրեմն ով քահանայք, թէ որպիսի
սեղանոյ եմք արժանացեալ և զարհուրեսցուք։
Այս մեզ լիանալ ի մաքուր մարմնոյ իւրմէ, և
ինքն իսկ զենել իւրովն առաջի եդ մեզ։ Այս
ընդ որքան դասապարտուք անկանիլ կայ մեզ,
որ այսպիսի կերակրով պարարել զայնպիսի մե-
ղաս գործեմք, մինչ լինել մեզ գայլ ի յու-
սել զգառն։ Հաւասար և բաձրապատիւ են ա-
պաքէն զորս քահանայն մատակարարէ. վա՜ զի
ոչ մահկանացու ոք, ոչ հրեշտակ, և ոչ այլ ինչ
ստեղծական արարողուն զկարգ քահանայութեն
կատարէ, այլ ինքն ՅԾ. վա՜ այնորիկ թագաւոր
կոչել պատուի է զքահանայն, և յաւէտ հաստա-
տուականագոյն. վա՜ զի յորժամ վա՜ երկնաւոր
բարեացն ինչ իցէ, թագաւորին օրէնք դիմել
առ քահանայն, և ոչ քահանային առ թագա-
ւոր։ Զգոսանինոս ասէ. ով արժանաւորութիւն
մեծարու քահանայից ի ձեռս որոց իբրու յար-
գանդի կուսին ներմարմնանայ որդին այ. ով սբ
և երկնաւոր խորհրդոյն, զի ձեօք գործեն ի մի
ում վայրկենի հայր և որդի և հոգին սբ։ Այ՜
որ յերկինս բնակի, ի ձեռս գոսանի ձեր ի
խորհրդեան սեղանոյն։ Անբէ երջանիկ այսմ
կրթուէ, և իսկական խնդութիւն աշխարհի. ով
մեծի ամենայարգ այսմ սրբութիւն. քա՜ զքա՜ շշա-
փիէ ձեռօք, այսինքն՝ քահանայն զորդին այ, ո-
րում զուարճութի և զբօսանք են կալ ընդ որ-

դիս մարդկան, որ չէ՛ տուեալ հրեշտակաց, զբ-
նորհեալ է մարդոյն։ Զարձեալ ասի. քահա-
նայն զանձառելի զայս խորհուրդ կատարէ, և
հրեշտակք առ ընթեր կան նմա իբրև զպաշտօ-
նատար՝ի վր այսր օրինակի ապշին երկինք, հի-
անայ երկիր, սասանի մարդ, զարհուրին դևք,
սարսափի սատանայ, և հրեշտակայինն վսեմութի
յաւէտագոյնս յարգաւորէ։ Զու զարձեալ ա-
սէ։ Զթէ երանեալ է արգանդն, որ զքա՛ յին-
քըն տարաւ ինն ամիս, ապա երանելի են և սիրուք
այնոցիկ, զորս օթևան իւր ընտրէ յամ աւուր-
ըս որդին այ։ Զու եթէ երանեալ են ստինքն,
որք կաթն ջամբեցին մանկանն յա՛ի, երանեալ
են և բերանքն, որք ճաշակեն՝ի մարմնոյ նորա,
և ըմպեն յարենէն։

Զլուխ Վ. Էջերորդ։

Օ՛ ամենաւոր դաւորութիւն՝ քի ընդ տահանայն՝ է սուրբ
հաղորդութեան։

Զայն ինքն յաւիտենական ճշմարտութի՛ն ասէ
մեր յա՛ քա՛ որ վասն մեր մարդ եղև, և զՀայրն
ստուգե անմեղութիւ՛ մարմնոյն խայտառակեաց,
անիսիսին վճռեաց յասելն. յովհ. գ. 57։ Որ ուտէ
զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնա-
կէ, և ես՝ի նմա։ Վ՛ այնորիկ և աբեն Զ՛ օրդս յայն
խրախուսեալ՝ մեծայոյս իմն հաստատութիւ՛ սրբ-
ոյ բարբառի. կենդանի եմ այսուհետև, ոչ ես,
այլ կենդանի է յիս քա։ Զվ գերամաքուր ա՛ծ-

ային այսր միաւորութեան, յորում լիապէս ի մըն կատարի ստուգութիւն բանից տեառն, զոր ասաց 'ի մաթ". ԺԹ.6։ Ապա ուրեմն ոչ են երկու, այլ մի մարմին։ Զոր Թէ՝ Եղեցին երկոքեն 'ի մարմին մի։ Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ 'ի քո և յեկեղեցի։ Եփեսայ". Ե.32։ Զ ի անդամք եմք մարմնոյ նորա, 'ի մարմնոյ նորա և յոսկերաց նորա։ անդ.30։ Զոր՝ զայսոսիկ հրաշափառագոյն և կատարէ նոյն ինքն խորհրդոյս կարգադրիչն 'ի որ հաղորդուէ, ախորժ տենչանօք միաւորեալ ընդ արժանապէս 'ի նոյն մատչելոցն։ Ապա կարի յոյժ սքանչելի է և զարմանաւոր, մարդոյ հողեղինի յայնքան գերբունակ պատիւ վերանալ, մինչև զանհպելին 'ի սրով բէից զաստիցին կայծակունս մաքրաբար ճաշակելով միաւորիլ ընդ նմա անքակ միութեաբ։

Զեն կիւրեղ յայսր վերայ օրինակաւ խօսեցեալ ասէ, զորօրինակ 'ի վերայ հալեալ մոմոյ այլ և մոմ արկեալ՝ զուգախառնի ընդ նմա հարկաւորապէս. նոյնպէս և որ ուստէ զմարմին առն և ըմպէ զարիւն նորա՝ այնպէս միաւորի ընդ նմա, մինչև քո 'ի նմա լինել, և նմա 'ի քո։

Այնպէս և աբն գրիգոր նիւսացին ասէ. ոչ փոքր ինչ խմոր զամ զանգուածն խմորեալ՝ յինքն զարձուցանէ, և ինքեան նմանեցուցանէ, նոյնպէս և յորժամ մարմինն քո 'ի մեզ լինի ընկալեալ, փոխարկէ զմեզ բոլորովին յին

քըն դարձուցանէ։

Աբեն յովհան ոսկեբերան։ Օ մեզ ընդ ինքեան՝ եթէ մարթ է ասել, ի մի զանգուած խառնել միացոյց. և այս՝ ոչ միայն հաւատով, այլ և ի բաղիս իւր ինքեան մարմին առնելով։ Եւ այլ ուր. Ընդ՝ զի մի՝ սիրով միայն լիցուք այսպիսի, այլ՝ իրօք և ընդ խառնել միաւորեսցուք ընդ մարմնոյ նորա, յայանագոյնս կատարեաց զնոյն ի ձեռն Հաշակման մարմնոյ իւրոյ, զոր մեզ առատաձեռնեաց. ուստի և մեք զայսպիսեաւ պարեմք, յորմէ սարսին հրեշտակք ի տեսանելն։ (Բանդը և ախորժ ես քան զնամ քաղցունը անուշակ՝ ողորմած ոճ իմ յու։)

Յայս սակս իսկ սրբուհին Անգինէս քաղցրաբանէր, մարմին նր միացեալ է ընդ մարմնոյ մերում, և արիւն նորա զարդարեաց զծնօտս մերս։

Գլուխ. ԵՕՆԵՐՈՐԴ։

Թէ որպան Ձգիր համար պահանջեցի ի տարանուիրեալ յաւուրն դատաստանի։

Որ թէ՝ սրբան և որպիսի տարբերութիւն լինիցի անդանօր ընդ աշխարհականաց և քահանայից. ոչ, քանզի մանրախոյզ քննութիւն յուզեալ սրոնեսցի յայն առեան ահաւոր զանազանութիւն սկեղն սրբութեան և սկեղն հասարակի։ Բանզի քննելով քննեսցին՝ եմ մասակարարութիւն քահա-

նայիլ ըստ իւրաքանչիւր պաշտման խիստ և ա-
նաչառ։ Ընտեսցի պատարագն, թէ վասն ոյր
պատճառի մատեաւ յայն ահաւոր և սարսա-
փելի խորհուրդն. յինչ վախճան, որովք կեր-
պիւ, սր հոգւոյ, որպիսի ջերմեռանդութիւն,
որքան մաքրութիւն։ Ընտեսցի մատակարարութիւն
խոստովանութեան, զլիջողութիւն ակնոցն, խստութիւն
խեղդողական։ Ընտեսցի անընտրող արձակու-
մըն, անարժան հաղորդեցուցանելն։ Ընտեսցի
անտես առնելն յայցելութիւն զհօտն, անդար-
ման՝ զվիրաւորն։ Ընտեսցի զբաղութիւն յաշխար-
հային, և անփոյթ մնալն զհոգևորաց։ Ընտես-
ցի կամակար ծուլութիւն 'ի կատարել զսահմա-
նեալ ժամերգութիւն, ամբոխեալ և անջերմե-
ռանդ մտօք վայրապար ինն բարբանջել, և քը-
նէած թմրութիւն կիսաբաց առոգանել։ Ընտես-
ցի ցսփ ձայնարձակութիւն, ինքնահաւանութեամբ,
և զվախճան՝ որ 'ի քրիստիրաքր պաշտօնն այ
'ի փառս մարդկին յեղանակել։ Ընտեսցի արտա-
սուքն հեղեալ պղտոր կեղծաւորութեամբ 'ի
մատակարարութեանէ սրբազան խորհրդոց, և աներե-
ւոյթ ջերմեռանդութիւն թափուր 'ի սիրոյն այ։
Զ. Մեանգամայն ասցից. քննեսցի ամ խորհուրդ
'ի սրտի, ամ շարժումն 'ի մարմնի, ամ թերութի
յանդամս, ամ արատ 'ի հայեցուածս. զի արտա-
անունք տեսն (այսինքն ամենանուրբ քննութիւնս
ըստ դասասուանի) ամ հեռաւորութիւն քննեսցէ
զորդիս մարդկան. որոչ ըստ պաշտամանցն բարձ-
ութիւն ցուցանեն եւ անդն բարեպաշտութիւն։ Ոչք

ընկալ՝ել զտաղանդ շնորհաց 'ի յանաչառանանձն
յուլանան յարգել ըստ արժանւոյն, որում շատ
տուաւ, շատ խնդրեսցի 'ի նմանէ, և որում բա-
զում աւանդեցաւ, առաւել ևս պահանջեսցեն
'ի նմանէ, ասէ տէր։ զուկ։ ԺԲ։ 48։

Հայեաց ասա յընկալելդ շնորհ, ո՛վ քահանայ,
զմտաւ ած։ զի քեզ աւանդեցան ամ դանձք ի-
մաստուն և գիտուն, որք են 'ի քո։ քեզ տուաւ
իշխանութի՛ 'ի վերայ մարմնոյն քի, թէ ճշմարտին և
թէ խորհրդականին։ քեզ յանձնեցաւ փականք
արքայութեան փակել և բանալ զայն ժողովրդոյ։
Ա՛պա աւեթ և 'ի մի՛ առ զզօնաւոր խմբզգու-
շութիւն, մի՛ գուցէ վնասակ և դիպուած արքային
բաղդատարայ քեզ պատահեսցի 'ի ժամու ել-
մանդ յաշխարհէ։ մի՛ գուցէ և յուսնկն եղկեալ
հոգւոյդ գուժեսցէ ոստիկանքս հրեշտակ յան-
ժամ։ կշռեցար 'ի կշիռս, և գտար պակասել։
դանի։ Ե։ 27։ Որում զհետ գայ ճշգրտիւ և ա-
հաւոր այն հրաման պատուհասի, զոր ունի ա-
սել ամենարդար դատաւորն քրիստոս։ Ո՛ ծա-
ռայդ անպիտան հանէք 'ի խաւարն արտաքին,
անդ եղիցի լալ և կրճել ատամանց։ մաթ։ ի։
30։ Լի՛ տրտմութեամբ անհնարին դառնութե
ողբոց է ձայնս 'ի վերայ մեր, քահանայք աս-
տուծոյ։ զարթիցուք 'ի շուայտութենէ արբեցու-
թենէ, զգօնացուք 'ի թմրութենէ մնացս և
հոգւոյ։ Ո՛ի բարեխնամօղն տէր՝ ահաւոր կա-
ղեալ գատաւոր, սատանիկս որոտայ։ և ոչ ոչ

զարհուրեալ հալեալ սպառեսցի։ Զ ամենա-
խորժ քաղցրութի սիրոյն յանսանելի դառնու-
թիւն անվերջ սպառնալեացն յեղանակէ. և ոչ
ոչ սարսեալ ընդարմացի։ Յեղբայրութեան
իւր պատուոյն զրկեալ տարագրեալ 'ի մշտակայ
գերութիւն դիւացն արտաքսէ. և ոչ ոք կէն-
դանւոյն ոչ անշնչացի։ Զու մեք 'ի վերայ այսր
ամենայնի 'ի քուն թանձրութե համակ ընդար-
մացեալ՝ մնամք կամակորութ 'ի մեղս չարութե։

Զուարթուք քահանայք՝ զահարկու սպառնալիս
հոգւոյն այ, զոր սպառնայ բանիւ սուիոնեայ.
ա. 12։ Զու եղիցի յաւուր յանմիկ, քննեցից
զերուսաղէմ ճրագաւ, և խնդրեցից զվրէժ յա-
ռանցն, որք արհամարհեցին զպահպանութիւնս
իւրեանց. և այլն։ Այս է, ըստ ամենայն ճիշդ
քննութեան դատեալ յանդիմանեցից զյանց-
մունս քահանայից, որք քաղաք էին աստուծոյ
շինելք 'ի բարձրակատարն լերին գերագոյն աս-
տիճանի. և չարաչար գործովք աղտեղեալ զնոյն՝
ապականեցին զպահպանութիւնս իւրեանց և
զպաշտօնս արհամարհելով. յորս սակս և քան
զսատանայ ապերախտ են և թշուառական։

Յայսր վերայ երկիւղագինս բարբառի սրբա-
զանն պետրոս. ա պետ. դ. 17։ Ժամանակ է ա-
սէ՝ սկիզբն լինելոյ դատաստանին 'ի տանէն աս-
տուծոյ. այսինքն 'ի քահանայից։ Զու մարգարէն
ոմանք ասատիկ և սպառնայ 'ի դիմաց աստուա-

Ծոյ. Ե. 1։ Ուստուք քահանայք, և անսացէք։ քանզի ընդ ձեզ է դատաստան։ զի որոգայթ եղերուք դիտանոցին. և իբրև զվարմ ձգեալ 'ի գլուխս գահաւանդի։ Իբրու ասիցէ։ ով քահանայք՝ կարգեցայք լինէն դէտ հովուել և պահպանել ժողովուրդս իմ ըստ օրինաց։ բայց դուք 'ի դիտանոցի անդր եկղեցւոյ որոգայթ և գայթակղութիւն եղէք հօտին իմոյ, զոր 'ի գերողէն գնեցի իմով իսկ արեամբ. և 'ի գլուխս անդր բարձրուեր ձեր ասպիճանի՝ յորում դարձուցիչ լինել ձեզ պարտ էր մոլորելոց, չարութեան ձեր վարուք ցանցեալ 'ի կորուստ որսացայք զթռչունս իմ, զհոգիս ասեմ յիս հաւատացելոց։ Ա՛ ո՛յնորիկ դատաստան անսչառ է իմ ընդ ձեզ, և վճիռ յաւիտենական դատապարտութեա՛ն՝ 'ի կապանս դժոխոյ։ Ո՞հ, աւաղ թշուառութե՛ն, որ պատելոց է զմեզ յայնմ ահեղ և սոսկալի ատենին, եթէ ո՛չ ըզգաստացուք այժմ 'ի ցնորմանէ մտաց։

'Ի դէպ է աստանօր յաւելուլ և զբանս նախապատիւ սուրբ վարդապետացն եկեղեցւոյ, որք միաձայն բարբառին 'ի վերայ այսր։

Զ՚ է Սուրբն յովհան ոսկեբերան ասէ։ Ո՞՚ դարև ամօթ մեծ և խռովութի անհնարին լինցի քահանայից, յորժամ աշխարհականք քան զնա՝ գոցին արդար և հաւատարիմ։ Ա՛ սան որոյ ա՛ սէ առաքեալն պետրոս։ Ա՚. պետր՚. Ա։ 10։ Եզ

բարք՝ առաւել փութասէր եք, զի բարեաց գործովք հաստատուն զձեր կոչումն և զընտրութիւնն պահիցէք. զայս արարեալ՝ ոչ երբէք յանցանիցէք։ Իբրև դարձեալ ասէ. Մեծ է արժանապատուութիւնն քահանայիցս, բայց մեծագոյն ևս եղծումն նոցին և կործանումն, եթէ մեղիցեն։ Անդամք ընդ ելանելն 'ի գագաթն բարձրութեան, բայց յանկմանէն երկիցուք. զի ոչ այնքան ցնծութի է զբարձրագահն տեղի ունել, որքան արամութիւն է և ցաւ անկանիլ 'ի փառաց և 'ի պատուոյ։ Այս է՝ զոր ասէ սրբազան աւետարանիչն յովհաննէս 'ի յայտնութեան։ Ա։ Ասէ՝ զոր ունիս, զի մի՛ ոք առցէ զպսակ քո։

Հերոնիմոս ասէ. Մեծագոյն յոյժ և սաստիկ պատժովք տագնապեսցին քահանայք յաւուրն դատաստանի, և այն՝ ըստ ցուցման տեառն այս. զի որք առաւել առին՝ առաւելագոյնս պատժեսցին 'ի նմանէ։

Իրենարոս ասէ։ Իթէ բարձրագոյն լինել ցանկասցուք և ոչ լաւագոյն՝ ոչ վարձուցայլ՝ պատժոց պատուհասից ակն ունիմք։ Իբրև գրիգոր Հայրապետն Հռոմայ 'ի վերայ այսր բանի զոր ասէ քո՞ 'ի մտա՞" . խդ. 44։ Իշերուք պատրաստք, զի յորում ժամու ոչ ակն ունիցիք՝ գայ որդի մարդոյ։ Զ գուշացուցանէ զմեզ՝ ասէ, խորհիլ մեծաւ հոգունակութեամբ՝ ով եղբարք, զի մի՛ որք առաւել քան զայլս առաք

յաշխարհի. Ծանրագոյն ևս դատիցիմք յարտաքսէն աշխարհի։

Գլուխ, ութերորդ։

Թէ որպան կատարելութիւն և սրբութիւն պահանջի ասնել ճահանային։

Կատարելութիւն և սրբութիւն կնիք են քահանայից. և մանաւանդ երկու թիւք ոսկեասակք և արծաթափայլք, առանց որոց չկարեն բնաւ վերաթիւել 'ի բարձունս կառավարութեան եկեղեցւոյն քրիստոսի։ Սոքօք իբրու հրեշտակային չափովն՝ զոր եղեկիէլ և երանելին յոհաննէս տեսին, չափի տաճարաքուղն վասակն խորհրդոց. և ուղղապէս կանոնաւորի տաճարն խորհրդական սահմանաւ իմն տարբերութեան՝ յանխրատից 'ի հաւատացեալս. որք ոչ ուղղաւորեալ 'ի ձեռն չափուցս՝ մնան 'ի կոխումն հեթանոսաց ըստ օրինակի գաւթին. 'ի յայտ. ԺԱ. 2։ Ապա կարի յոյժ պիտանաւոր է, և ամենեքին 'ի հարկաւորացն՝ զայսոսիկ ունիլ քահանայից։ Զու զայս յայտնապէս ցուցանեն ճշդիւրն և անիսուիսոս բանքն քրիստոսի, զոր ասէ ընտրեալ իւր առաքելոց. և նոքօք՝ ամենայն քահանայից։ Զոր էք ասէ լոյս աշխարհի, զոր էք աղ երկրի, հովիւք ոչխարաց, որսորդք մարդկան, աշակերտք և բարեկամք աստուծոյ. դատաւորք յատենի, և աթոռակիցք տէրութեան։ Զոստի ասէ առաքեալն պօղոս. Ք.

կորնթ.Է.1։ Սրբեսցուք զանձինս մեր յամենայն պղծութենէ հոգւոյ և մարմնոյ. կատարեսցուք զսրբութիւն ահիւն աստուծոյ։ Այլ դարձեալ՝ մի՛ և մի՛ իւիք ասցուք պատճառս, զի մի՛ արատեսցի պաշտօնն մեր. այլ՝ յամենայնի ընծայեցուսցուք զանձինս մեր իբրև զպաշտօնեայս աստուծոյ, և այլն։

Զոյն զայս յայտնի բացայայտեն և բանքն կանոնաց և վարդապետաց սրբոց, և հաստատեն իսկ։ Թէ յոյժ առաւել կատարելութիւն և մաքրութիւն պահանջի 'ի քահանայէ, քան 'ի կրօնաւորէ կամ յաբեղայէ. յորոց առեալ հերոնիմոս՝ գրէ առ բուստիկոս միայնակեաց։ Զոյն պէս կաց ասէ 'ի վանս, զի արժանասցիս լինիլ կղերիկոս. և ուսիր զբաշում ժամանակս. զի յետոյ ուսուսցես։

Զոյն և սուրբն յովհան ոսկեբե՛ն. ասէ. բազում՝ են թէպէտ մարտք և կռիւք կրօնաւորաց, սակայն եթէ բաղտատեսցես ընդ խսկական մատակարարութեանն քահանայութեան՝ այնքան տարբերութի՛ գտցես յերկոցունց միջի, որքան ընդ մէջ ցածագոյն և թագաւորի։

Զայնքան սրբութիւն էր յոմանս 'ի քահանայից հնոյ կատակարանին, զի ցամաքեցոյց զյորդանան. առ 'ի զճանապարհ հորդել տապանակին այ. որպէս զի անվտանգ և անասլթաք իմն կոխեա-

ցեն զերկիր ոսք քահանայից կրէլեաց զսապա-
նակ ուխտ տեառն զօրուէց. և այնպէս ընդ ցա-
մաք յատակն գետոյն էանց սապանակն։ Զար-
ձեալ՝ նոյն մաքուր և անսգամանելի վարք քա-
հանայիցն էր, որ յաջողեաց նոցա միով ձայնիւ
փողոց զպարիսպն երիքովի տապալ կործանել։
Զ. ի ընարեաց զնոսա Ա՛ծ (որպէս և զահարոնն)
յա՛մ կենդանեաց մատուցանել ինքեան պա-
տարագ. և պաշտամամբք հաշտեցուցանել զնա-
ընդ ժողովրդեան իւրոյ. և յա՛ծակոյս կողմանէ
պատգամաբեր լինիլ առ ամենեսին. մանա-
ւանդ՝ որք եկեղեցւոյն քրիստոսի են քահա-
նայք։ Զ ասն այնորիկ պարտաւոր են զլեագոյն
իմն ունել զկատարելութիւն. և եթէ մարթ
ինչ լցէ առել, սպասաւաժանման կատարօժու-
թեամբ պերճազարդ հանդիսանալ ըստ նորուն
իսկ տեառն պատուիրանաց առ դասս ընարել
իւր աշակերտաց. 'ի մատթ Ե. 40։ Զ՝ղերուք
դուք կատարեալ, որպէս և Հայրն ձեր երկնա-
ւոր կատարեալ է։ Զ՝մանապէս և զսրբութիւն
ամենայն մաքրութիւ փայլեցուցանել 'ի հոգի և
'ի մարմին, և յա՛ծային սրբութենն համեմատութի
ամ փութով 'ի վեր ելանել. որպէս և երջա-
նիկն խրատէ պետրոս ասելով. ա. պետ. ա.
15։ Զ՝ստ սրբոյն՝ որ կոչեաց զձեզ, և դուք սրբ
յամենեսեան գնացս ձեր լինիջիք։ Տեսեր արդ
զօրինակն կատարելութեան քո և սրբութեան.
տեսեր զնախատիպն հեղինակ տիրավայել քու-
մըդ գերազանցութեան. պատկառեա՛ յօրինա-

կէդ , և երկիւղած հոգւով յարմարեա՛ զքեզ՝ արդիւնաւորել զոր վասն քո 'ի մատնութեան գիշերի զաղերս քահանայապետին քո առ Հայր։ Յովհ։ ԺԷ 17։ Սո՛ւրբ արա զնոսա ասէ ճշմարտութի՛ւնքով։ զի քո բանդ ճշմարտութի՛ւն է։ Այս թէ ո՛չ՝ զանհնարին կայ քեզ լսել պատժոց սպառնալիս, զկտուրն ընդ մէջս, և զմասնակցութիւնն ընդ անհաւատս արդար իրաւամբք։

Զ՝ սոյն զայս պատուիրեն և կնոնք ամենայն ժողովոց առ հասարակ , և հարկադրեն ամենայն քահանայից ունել զկատարելութիւն յաճային գիտութիւնս և զանբասիր մաքրութիւն վարուց։ և զորս ոչն ունին, կամ ունիլ ո՛չ ջանան, բազմաշան պատուհասիւք 'ի բաց որոշին 'ի պատուոյն և յիրաւանց։ Բանզի որպէս յառաջ են գրերիկոսք պաշտամամբ իւրեանց քան զաշխարհականս , այսպէս և վարուք և կենցաղավարութեամբ իւրեանց գերազանց են (ասեն) և գերազանցեսցին։ Այս այլ ուր վճռեն։ Զգուշացուսցեն եպիսկոպոսք զքահանայս իւրեանց։ զի քաղաքավարութեամբ և բանիւ և գիտութեամբ յառաջադէմք լինիցին քան զժողովուրդն այ։ յիշելով զայն, զոր ասէ աստուած։ Զղերս՝ սուրբք , զի ես սուրբ եմ տէր աստուածդ։" Ժա։44։

Այս յայլում տեղւոջ ասեն . Խորշեսցին և փախիցեն քահանայք նաև 'ի թեթևագոյն յան-

ցանաց, որք ամենամեծ և ծանր են, և համա-
րին հայեցեալ 'ի պաշտօն նոցա։ Եւ այնպիսի
ծանրութիւն կացցեն, զի գործք նոցա և բարք
մեծարանս և ակնածութիւնս արկցեն զամե-
նեքումբք։

Արդ՝ զի անշուշտ ինն և անժխտելի ճշմարտու-
թիւն է այս, մեք յայն կնքեսցուք զբանս, յոր
և սրբազանն պետրոս եպրակացուցանէ։ա։պետ.
բ։9։ Դուք ազգ էք ընտիր քահանայութիւն
թագաւորական, ազգ սուրբ, ժողովուրդ սեպ-
հական. որպէս զի զառաքինութիւնս ձերնուիրի-
ցէք այնմ՝ որ զձեզ 'ի խաւարէն կոչեաց յիւր
զարմանալի լոյսն։ Զ ասն որոյ ամ զգուշութիւն կեն-
ցաղավարեսցուք ի՝ զբարք, և ամենայն ուծահա-
ճոյ առաքինութեամբ կուռ զարդարեսցուք
զմեզ. որպէս զի կարող լիցուք զառաքելոյն ա-
սել համարձակ, մեր առաքինութիւն յերկինս
է։ փիլիպ"։ գ։20։Զ՝ չայել է բնաւ դեգերիլ
մեզ 'ի հրապարակս, ոչ զբօսանուլ 'ի խաղս ան-
ասարանաց. ոչ շուայտիլ 'ի խրախճանս ըմպել-
եաց. ոչ թեթևանալ 'ի խումբս երիտասարդաց,
ոչ ընտանեբար հանապազորդել 'ի մէջ կանանց.
այլ մշտարթուն կանխել յեկեղեցի. 'ի գիրս
թարթափիլ 'ի սենեկի, 'ի հիւանդանոցս յաճա-
խել յայցելութիւն, 'ի հիւրանոցս գնալ ուիս-
տիլ զպանդուխտս, 'ի բանտս դիմել 'ի մխիթա-
րութիւն և անդբաղ մտօք յաղօթարանս ունիլ
զհանգիստ ջերմեռանդ աղօթիւք։

Պաշտ-ի իններորդ։

Թե յանկանչ տահանայից ծանրագոյնս Հաստատութեանն պիտի։

Ահագին է այս ճառ՝ Եղբարք, ահագին է և սարսափելի. քանզի՝ զինչ այլ ևս մեծագոյն ապերախտութիւն. և զինչ այլ վրիժապարտ պատիժ պատուհասից կայցէ արժանաւորս, քան ստեղծուածոյն զստեղծիչ իւր վշտացուցանել։ Ապա քանի՞ առաւել ծանր և ամենածանր, յորժամ՝ որ սրբութեան է կարգեալ պաշտօնեայ, ՀԱՅԻՆ մեծ վայելչութեանն է սպասաւոր, և զփոխանորդութեանն պատիւ կրէ 'ի յերկրի, 'ինոյն յայն Հարազգած յանցմունս ապաշնորհ բարուք վատթարասցի։

Այս այն Հարութիւնն է, զորմէ նախնեաքն տէր գանգատէ, մաղաք. ՀԱ. 6։ Դուք քահանայք էք, որք բամբասէք զանուն իմ (Հարաշար գործովք ձեր) և ասէք, ի՞ բամբասեցաք զանուն քո. Եւայն։ Այս եղեալ՝ սասակագոյնս սպառնայ նոցա պատիժ անարգութեան. անդ 'ի Ք. 2։ Ապաքէ ցից ասէ 'ի վերայ ձեր անէծս, և անիծից զօրհնութիւնս ձեր, և նզովեցից զնոսա, և մի՛ եղիցի 'ի միջի ձերում։ Դու ցանեցիցս զապաւառն ընդ երեսս ձեր՝ զապաւառն տօնից, և բարձիցս զձեզ նովաւ։ Ընդ՝ զայսոսիկ լսելով զՀագին սպառնալիս, զգուշացուք Եղբարք, ըզգուշացուք Հաստատել ինչ յայնպիսեաց. զգոր-

ծել, չխորհիլ, և ոչ բնաւ մերձենալ, յորոց բարերարն մեր վշտանայ. որովք ցնծութիւնն իսկական՝ տրամեալ գանգատի։

Ասան զի՝ եթէ ո՛չ ուղղեսցուք զգնացս մեր 'ի հաճոյս, հայեա՛ց անդրէն 'ի նոյն մարգարէութիւն ա. 7. և տե՛ս, զինչ ասէ առ քահանայս։ Ասատուցանէք (ասէ) 'ի սեղան իմ զհաց պղծութեան՝ և ասէք թէ պղծեցաք։ Գր 'ի բ. 13։ Զոր են ասէ, գործէք. ծածկէք արտասուօք զսեղան իմ. և լալով և քքուով յաշխատութեաց, եթէ արժան ինչ է՞ մի՞ սանգամ հայել 'ի պատարագս ձեր, կամ առնուլ յընդունելութիւն 'ի ձեռաց ձերոց. իբրու թէ՝ չեն ինձ ընդունելի. զոր միանգամ մեղսամած հոգւով մատուցանէք 'ի՞ ոբ սեղան իմ, թէ և բաղում նեղութեամբ լլկեսջիք զձեզ. և արտասուաց վտակօք ծովասցին աչք ձեր. զի զարբութիւն կամիմ, որ սուրբս եմ։

Զանգի եթէ հայր կոչեմք զայն, որ առանց ակնառուն դատի ըստ իւրաքանչիւր գործոց, ապա երկիւղիւ զմեր պանդխտութեան ժամանակս գնասցուք ըստ սրբազանին պետրոսի. ա, պետ. ա. 17։ Ապա թէ ո՛չ՝ իրաւամբք գանգատի զմէնջ և ասէ. մաղաք. ա. 6։ որդի փառաւորէ զհայր՝ և ծառայ երկնչի 'ի տեառնէ. իսկ արդ՝ եթէ հայր եմ, ո՞ւր են փառքն իմ, և եթէ տէր եմ, ո՞ւր է պատիւն իմ։ Արդ՝

զինչ ինչ ասդ արդեօք փառքն աստուծոյ, զինչ այլ, բայց եթէ անստգամանելի վարուք և բարի գործովք մնալ քահանայից 'ի պաշտօն իւրեանց՝ որպէս և տէրն իսկ պատուիրէ, 'ի մատ. Ե. 16։ Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, զի տեսեալ զգործս ձեր բարիս՝ փառաւորեսցեն զհայր ձեր, որ յերկինս է։ Այդ՝ եթէ փառք են աստուծոյ՝ բարութեան գործք քահանայից, և պատիւ նմա՝ երկիւղած հոգւով սպասաւորութիւնն, ապա վատթարութի նոցա և չարաչար զեղծումն՝ վշտայուսիչ և պատճառ հայհոյութեան նորա։ Այնուհետև աստուծոյ վասն ձեր հայհոյի 'ի մէջ հեթանոսաց. ասէր, որ հոգւով խօսէր։

Բայց աւաղ թշուառութեանս մեր և խաւար կորագլուխ այս պատկառանայ, քահանայք և սրբութեան պաշտօնեայք չարաչար զեղծելք պղերգութեամբ. կամ մանաւանդ աներկիւղ ըմբոստութեամբ յօրէնս աստուծոյ՝ զնոյն ինքն զհայր ամենագութ 'ի գանգատ շարժեն ասել երեմիայիւ, զի՞ է զի բաշում ապիրատութիւնս արար սիրելին իմ 'ի տան իմում։ Այս 'ի իդ. 11. ասէ քահանայք պղծեցան. և 'ի տան իմում գտի զչարիս նոցա։ Այս 'ի սաղմ՝ ծդ. 10. Զի թէ թշնամւոյն նախատեալ էր, համբերէի արդեօք և այլն. իսկ դու մարդ հաւասար իմ, առաջնորդ իմ և ծանօթ իմ։ Այպաքէն պարտ էր քաղցրացուցանել ինձ և քեզ կերա-

կուր, զնաչ միաբանութեամբ 'ի տան այ քո։ Ինձ՝ զաշխատաձոյ բարեացն զկատարումն յան. ձին բերելով, և զամենայն զկամս իմ հաւատարմութեամբդ պսակելով՝ զի կերակուր այ է կամաց իւրոց վայելչապէս կատարումն յովն", գ. 34։ Այս քեզ՝ արժանաւոր սպասաւորութիւն 'ի տան իմում 'ի սեղան անդ սրբութեան, 'ի փառս անձին քո զմարմին իմ և զարիւն ճաշակելով, և խսկապէս ընդիս միաւորելով. որ ծայրագոյնն է ամենայն փառաց։

Յաղագս չարաչար վարուց քահանայից այնքան է արդարև վիշտ ստացողին զմեզ յոչէից, մինչև բողոք տայ բառնալ առ երկին և երկիր, և զամենայն արարածս իրաւանց իւրոց դատաւորըս կարգէ։ Ուր(ասէ)երկին, և ունկնդիր եր. կիր. զի որդիս ծնայ և բարձրացուցի, և նոքա զիս անարգեցին։ Եսայ"ա. 2։

Այսինքն է՝ շնորհօք ինձ յորդիս ծնայ զնոսա, մարմնով և արեամբ իմով սնուցի, և 'ի գագաթն ամենայն պատուոյ յաստիճան քահանայութեան բարձրացուցի. իսկ նոքա զիս անարգեցին զծայրագոյն բարիս՝ զաստուած իւրեանց չարեօք և անօրէնութեամբ. եղոկ և վայ մեզ ապերախտիցս, յորժամ դէմ յանդիման ասացի յատենն անաչառ։ Իսկ եթէ յաղագս այսր ապաշնորհ չարութեան զի՞նչ խօսին սուրբ հարք, լուր Յովհաննու ոսկեբերա.

նին։ Ոչ այլ ինչ իրօք առաւել բարկանայ աստ-
ուած, քան ընդ պատուիրն մեղաւորաց և անար-
ժանից քահանայական աստիճանաւ։ Զի դար-
ձեալ՝ ասէ. եթէ յաշխարհականութեան մե-
ղանչէս, ոչինչ յայնպիսի պատժոց կրեսցես.
իսկ եթէ ի քահանայութեան մեղիցես, կոր-
եար աւասիկ։ Զի այլուր ևս ասէ։ Զ ահա-
ւորն ասացից և զսարսափելին. չէ՛ այնքան չար-
րութիւն և յանցանք՝ դիւահարաց լինիլ յեկե-
ղեցին ՅՍ, որքան զաղրութիւն և մեղօք պղծեալ
քահանայից։ Ա՛ սան զի կարի չարագոյն է այս.
որպէս և պօղոս ասէ, զքրիստոս առ ոտն հար-
կանել, և զարիւն նորա խառնակ համարիլ, և
զՀոգին շնորհաց թշնամանել. եբր. ժ. 29։ Ա՛պա
մի՛ ոք անմաքուր հոգւով զերկնային զայն հաց
ճաշակեսցէ իբրև զյուդայ։ Զի այլուրեք ևս
ասէ. եթէ քահանայն գործեսցէ զայսպիսի ինչ,
ծանրագոյն ևս լինին վէրքն յաղագս ընկալեալ
պատուոյն։

Զգոստինոս ասէ, որք անարժանութիւն զքրիս-
տոս պատարագեն, որ թագաւորէ այժմ յեր-
կինս, ծանրագոյն ևս մեղանչեն քան զայնոսիկ,
որք խաչեցին զնա մինչ ջրջէր ի յերկրի։

Զնոյն պատուիրէ զգուշութեամբ և սուրբն
ներսէս շնորհալին ի բանն, որ առ քահանայս.
մի՛ ոք ասէ անարժանութեամբ աստուածային
խորհրդոյն սպասաւորեսցէ. կամ զոք ի ժողո-

վրդենէ անքննաբար հաղորդեցուսցէ, զի մի՛ ընդ
յուդայի և ընդ խաչահանուացն դատապար-
տեսցի։

Այս զբիզոր հայրապետանհռովմայ՝ ո՛չ կարծեմ
ասէ Եղբարք սիրելիք. թէ կրեսցէ քրիստոս
զայնպիսի անարգանս և զայնքան զրպարտուիս
յայլ մարդկանէ, որպէս կրէ 'ի քահանայէց,
յորժամ տեսցէ զնոսա, որք յօրինակ և յուղ-
ղութիւն այլոց 'ի նմանէ կարգեցան, օրինակ
թիւրուէ և ստուգանութեան զինքեանս կա-
ցուցանիցեն։ Այլ ևս՝ յորժամ տեսցէ, զի մե-
զանչեմք, որք զամ մեղս սանձել և արմատա-
խիլ առնել պարտաւորեցաք։

Գլուխ պասնէրորդ։
Թէ զի՞նչ անհաւատ պատճէ Աստուած զքահանայս վ-
ռեղաց։

Զանց ակնառութեան է արդարև վրէժխնդ-
րութիւն դատաստանին աստուծոյ 'ի վերայ
մեղուցեալ քահանայից, և համակ աններելի
վասն ծանրութեանն. որպէս և ասէ 'ի ձեռն
ովսեայ մարգարէի, գ"։ղ։ըստ բազմութեան իւր
եաց, նոյնպէս և մեղան յիս՝ զփառս նոցա յա-
նարգութիւն հաստատեցից։ Ո՞ մեղս ժողովրդեան
իմոյ կերիցեն, և անիրաւութիւնք իւրեանց առ-
ցեն զանձինս իւրեանց։ Այլ եղիցի որպէս ժո-
ղովուրդն, նոյնպէս և քահանայն. և ինդրեցից

զվրէժ 'ի նմանէ, և ըստ Հանապարհաց նորա, և ըստ խրհրդոց նորա հատուցից նմա։ և այլն։ Այս էր աղագաւ սաստիկ և անաչառ վրէժխնդրութեամբ 'ի պատիժ բերի քահանային նա ինքըն ամենաբարի բնուին՝ վասն զի զձեզ (այսինքն է զքահանայսդ) ասէ Ծանեայ յամենայն ազգաց երկրի։ յայն սակս այց արարից ձեզ 'ի վերայ անօրէնութեց ձերոց։ իբրու թէ՝ սաստկութեամբ քննեցից, և անաչառապէս պատժեցից։ Զսոյն և յերկրորդ օրինաց։ իբ։ 63։ ըսպառնայ յասելն։ Որպէս ուրախ եղև 'ի ձեզ տէր՝ բարի առնել ձեզ, և բազմացուցանել զձեզ, նոյնպէս ուրախ լինիցի տէր 'ի ձեզ 'ի սատակել զձեզ։ և ցրուեսցէ զքեզ տէր աստուած քոյ։ Այս յիրաւի զի եթէ յատուկ լիմն պատուով պատուեցան 'ի տեառնէ, ապա և յատկագոյն ևս վրէժխնդրութեամբ պատժին 'ի չպահելն զպատուիրանս աստուծոյ, և չարաչար գործովք 'ի բարձրացուցանելն զնա։ Զ աս՝ն այսպիսի քահանայից ասացեալ է 'ի սաղմոսի։ եղիցին սեղանք նոցա առաջի նոցա յորոգայթ։ Զ ասն զի՝ ոչ միայն վշտացուցիչ է աստուծոյ յանցանք քահանայից, այլ և կարի դժուարաւ մոռանայ զայն Աստուած։

Զանգի այն՝ որ փրկութեամբ մարդկան պարարի, որ վասն դարձման միոյ մեղաւորի ուրախութիւն առնէ հրեշտակաց յերկինս, որ ըզպոռնիկան և զզրկօղս երկնից արքայութեան ժա-

ռանգորդս արար, երդնու վասն մեղայ հե-
ղեայ, և ասէ ՝ թագաւորութեան գ՝. 14։ Երդուսայ
տանն հեղեայ, թէ ոչ քաւեսցի անօրէնութի-
տանն հեղեայ խնկովք և զոհիւք մինչև 'ի յա-
ւիտեան։ Զարհուրեալ և կարի ահագին այս
պատանաւիք։

Ոչ ապաքէն թեթեւագոյն իմն էր մեղքն ոգի-
այ, այլ սակայն աւե՛ թէ ոչքան խստագոյնս
պատժեաց աստուած վասն յանդգնութեան իւրոյ
'ի տապանակին։ Մնացորդաց ժդ. 10։ Զի բար-
կացաւ ահէր սրտմտութեամբ 'ի վերայ աչաց,
և եհար զնա անդ յաղագս ձգելոյ նորա զձեռն
իւր 'ի տապանակն, և մեռաւ անդ առաջի աս-
տուծոյ։ Ոչ ահաւոր և սարսափելի դատաս-
տանացն աստուծոյ՝ ոչ երկիւղ 'ի քէն թա-
գաւորդ աղգաց, ասէ Երեմիա. ժ. 7։ Զոգոյն ա-
պաքէն ամենայն աղգ և աշխարք։

Այլ յուսար ապա՝ ոչ քահանայ անմաքուր՝ մի՛
յուսար երբէք, թէ սպասաւորութիւն քոյ սրբ-
բութեան սեղանոյն, 'ի վիճակ տան աստուծոյ
ընարութեամբ որոշումդ, ևն. կարիցեն օգնու-
թիւն ինչ մատուցանել փրկութեան անձինդ,
այլ մանաւանդ զաղէտս դատապարտութեան
քոյ սաստկացուցանեն։

Տես՝ զինչ ասէ Երեմ, ժա. 15։ Այլ թէ ա-
ղօթք քո և միս նուիրեալ անցուցանիցեն 'ի

քէն զչարիս քոյ։ կամ թէ այսպիսեաք ապրեսցիս, ո՛չ երբէք։այլ՝ անտարակոյս 'ի դատապարտութիւն անձին ուտես, եթէ ո՛չ խարեսցես զմարմին տո՛ն՝ ըստ պօղոսի։ Այլ չխարելն այն է, զի երբեւ 'ի հաստատակ կերակուր մեղսամած հոգւով մերձենաս, և զանբարկանալին բնութի՛ 'ի ցասու�՝ բերես 'ի վերայ քոյ և 'ի վերայ ամ աշխարհի։

Այլ և այլ ինչ աստանօր մեզ ածել զմտաւ, ո՛վ դասք քահանայից՝ զի անօրէնութիւն յանցանաց մերոց և աստ իսկ յաշխարհի ոտնակոխ առնէ զմեզ աշխարհականաց, և զարբազան կարգի մեր պատիւ յանարգութեան աղէտս կործանէ։ և ընդ ծանրաբեռն հարկօք առաջնորդաց տագնապէ և նեղէ, որ առ հաւասչէյ են յաւիտենական անարգու�մերոյ։ Քանզի ցուցեալ այ զամ պղծութիւնս չարեաց յեռապայ քահանայիցն առ մարգարէն եզեկիէլ, ասէ ըսպառնալեօք։ ը։ 18։ Այլ ես արարեալ ընդ նոսա բարկութեամբ, և ո՛չ խնայեսցէ ակն իմ, և ո՛չ ողորմեցայց նոցա, և աղաղակեսցեն յականջս իմ մեծաձայնս՝ և ոչ լուայց նոցա։ Այլ 'ի ձեռն մաղաքիայ մարգարէի յայտնագոյն ևս ասէ։ բ։ Այս պատուէր է իմ առ ձեզ՝ քա՛հանայք, եթէ ոչ լսիցէք, և ոչ դնիցէք 'ի սրտի տալ փառս անուան իմոյ՝ ասէ տէր ամենակալ, առաքեցից 'ի վերայ ձեր անէծս։ և այլն։ Այս ապա ասէ։ես ետու զձեզ արհամարհեալս և լը-

քեանց ընդ ամ աղգս, փոխանակ զի ոչ պահեցիք զՀանուիրս իմ, այլ ակն առնուիք օրինօք։ Ը-դարդ դատաստանաւ, զի որք ոչ ծանեաք զբարձրութիւն շնորհին մեզ պարգևելոյ, պատժիմք նաև սատ 'ի յայս կենս չՀանաչելոյն աշխարհակոնց զպատիւ մեր։ Օ՛ի աղին անՀամացելոյ արտաքս ընկենուլ և կոխան 'ի մարդկանէ լինել՝ վՀաւեցաւ յօրինաբանեալն բերանոյ յաւիտենական ճշմարտութեան։ Ուրդ՝ զի՞նչ արասցուք եղբարք, զի լեցի մեզ աղատութիւն յայսպիսեաց դարուն վտանգից. պահեսցեն զպատուիրանս իմ ասէ աստուած 'ի գիրս զևասցուոց, զի մի՛ անկցին 'ի մեղս, և մեռցին 'ի սրբութեան անդ։ Եւ պատուիրանք նորա անսագտանելի վարք մեր են և սէր։

Ընտիր ոմն էր ահարոն, աստուածախօս էր մովսէս, այլ ութս ինձ դու՝ վասն զի երկմտեցան 'ի հաւատոց 'ի հարկանելն զվէմն գաւազանաւ, պատժեաց աստուած չմտանել յերկիրն աւետեաց։ Թէպէտ և յաչս նոցա թեթև ինչ թուիւր այն մեղք։ Ուրդ՝ ահարոնի էին նաբաթ և աբիուդ, և քահանայապետութիւն, և վերզի ընդ ձեռնադրիչն իւրեանց, հուր օտար եդին 'ի բուրվառս՝ զոր ոչ էր կարգեալ աստուած, յանկարծահաս մահուամբ սատակեցան։ Օ՛ի՞նչ ինչ ապա ոչ անցցեն ընդ նորոյ կտակի քահանայս պատիժք պատուհասից, որք զաստուածային զհուրն վաՀատեն զոգիրն քրիստոս

կամ որք զվավաշոտ բղջախտհուութեան զհուրն պղծալի բուրվառաւ մարմնոյ և մտաց 'ի սե-
ղան տեառն մատուցանեն յանդուգն չարութ-
ողորմելի՜ է այս կուրութիւն մտաց, ողորմելի
և ամենաթշուառ.և մեք կամաւ համբուրեմք
անզգայապէս: Ա՛յլ զի մի՝ պակասեսցին և 'ի
նորոց սատի օրինակք, լուեալ է ապաքէն զան-
ներելի դատաստան պատժոյ ուսոնին. մտաւ
է, թէ զի՞արդ հերձեալ ընդ մէջ արտաքս
հեղաւ փոր յուդայի՝ յաւէտ վասն անարժան
հաղորդութեան 'ի մարմնոյ տեառն.և ընթեր-
ցեալ է զբաղմաց յանցաւոր քահանայից զա-
ղարագահաս զպատիժ: Ա՝ սքանչելագործ ոմն
էր հրեշտակն Եփեսացւոց, մինչև զմեռեալս
անգամ յարուցանել.որում և աստուած վկա-
յէ. յայտնի՛ է. 2: Գ.իսուս ասէ զգործս քո և
զվաստակս քո, և զհամբերութիւն....և համ-
բերեցեր և վշտացար վասն անուան իմոյ և աշ-
խատեցեր.և այլն: Ա՛յլ զի ոչ 'ի ջանս բերիւր
բառնայ 'ի միջոյ զչարութիւնն նիկողայոսի,
տես զինչ ասասցեն նմա: Գ.ամ ես ասէ վաղ-
վաղակի, և շարժեցից զաշտանակս քո (որք են
եկեղեցիք) 'ի տեղւոջէ իւրմէ, եթէ ոչ ա-
պաշխարեսցես: Ա՛յնպիսւոյն ահա այպիսի սատա-
սպառնալեաց. իսկ մեզ զինչ.մերժեցի զքեզ,
զի մի՝ ևս քահանայասցիս ինձ: Ա՝ ասն այնորիկ
փոյթ կալցուք արիանալ 'ի պաշտաման մերում.
ջանասցուք զաղտեղութիւն հանդերձից մերոց
ապիտակացուցանել՝ լուացմամբ 'ի ջուր ար-

տասուաց։ դիցուք դեղ յաչս մեր՝ զուղղահա-
յեցութեան զբարեզարդ ձիրան մեծարելով։
որպէս զի հաճոյական ընդունելութեան տաճն
արժանի գտցուք, որ միշտ առ դուրս կայ և
բաղկեր։ Ի յայտնութիւն սրբուհւոյն Պրիսկիդեայ
(որ կոչս ունի յաղդի Քուանկայ) յաճախագոյնս
գանկատի ՝ուծ վա անօրէնուեցն քահանայից։ և
առ ՝ի ցուցանել զծանրութի մեղաց նոցա՝ քան
զամենայն հրէայս և զհեթանոսս, և քան զամ
մեղաւորս վատթարագոյն անուանէ զնոսին,
ասելով։ կարի յոյժ ասատկագոյն պատիժ դը-
ժոխոց պահեալ կայ նոցա, քան յուդայի։ Ի-
այլ ուրեք կարի սարսափելի անիծիւք լնու
զնոսա։ և ապա սկսանի անիծանել, զոր ինչ ու-
աեն, կամ ըմպեն, և կամ շօշափեն։ Անիծանէ
և զտարերան, որք անուանդս տան այնպիսեաց։
Ի։ և այս յայտնութիւնք քննութեամբ ընկա-
լեալ են յեկեղեցիս լատինացւոց։ ոչ ապաքէն
յաղագս այսպիսի քահանայից գրել է և այն,
զոր ասէ Մովսէս։ Բ։ օրէն։ ԻԲ։ 22։ Հարցէ՛ ըզ-
քեզ ամէր տարակուսանօք, և ՝ի ՝ երմամբ, և սար-
ռուով, և խեթիւք, և երկիւղիւ, և խորշակաւ
և գուռնով, և հալածեսցեն զքեզ մինչև կորուս-
ցեն, և այլն։

Ի։ այց եթէ քննեսցի պատճառն, թէ առ իմ՞
ասատկագոյնն է պատիժ քահանայից, քան զաշ-
խարհականաց։ յայտնի՛ է ահա և դիւրիմաց։
զի ոչ միայն ՝ի ձեռն անուղղայ վարուց և գը-

նացից կորստեան իւրեանց լինին պատճառ, այլ և բաղմաց իսկ ժողովրդոց. որք արեամբն քրիստոսի աղաւաւեալք յարբանեկութենէ չարին՝ յանձնեցան 'ի խնամս հովուութեան նոցա. որով և վէմ գայթակղութեան և պատճառ մեղայ ժողովրդեան եղեալ՝ ունայնացուցանեն զարդիւնս չարչարանաց և խաչի տեառն քրիստոսի։ Սոքա են, որք ըստ սրբազանին պետրոսի ապրդեալ մուծանեն հերձուածս կորստեան. և զորս տէրն գնեաց, զնոսա ուրացեալ՝ ածեն 'ի վերայ անձանց զարագահան կորուստ։ Բ. պետ". Բ. 1։ Սոքա են, որք 'ի մեհենի չարուն բաղմեալ շուայտին 'ի մեղս ըստ պողոսի, և չար օրինակաւ իւրեանց կորուսանեն զտկար եղբայրն, վասն որոյ քրիստոսն մեռաւ։ Ա. կորնթ". Ը. 10։ Այսոսանն այնորիկ և իրաւապէս բաղմապատիկ պատժովք լուծանեն զվրէժ։ Զի եթէ երիցունք՝ որք բարուք պաշտիցեն, կրկին պատուոյ արժանանան, ապա և որք 'ի կորուստ հօտին անկարգանան, նմանապէս սատակագոյն քան զամենայն 'ի պատիժ մատնին։

Տես, զինչ ասէ տուրբն յովհան ոսկե". եթէ քահանայք 'ի մեղս լինիցին, ամենայն ժողովուրդք 'ի նոյն յօժարեալ մեղանչեն անխիղճ, յաղագս որոյ պատասխանի տալ պարտաւորին ոչ միայն վասն մեղաց իւրեանց, այլև վասն մեղաց ամենեցուն։ Այս դարձեալ ասէ. ոչ 'ի տաճարէ եկանեն ամենայն բարիք, նոյնպէս և

'ի տաճարէ բղխեն ամենայն չարիք։ Յորժամ տեսցես զժողովուրդն անխրատութեամբ և անզգամութեամբ վարակեալ, ծանիր՝ թէ 'ի քահանայս տարրացեալ և հաստատեալ են մեղք։

Զ սոյն զայս, և գրիգոր հայրապետն հռովմայ վկայէ։ Աւերումն ասէ և կործանումն ժողովրդեան մանաւանդ վասն մեղաց քահանայից լինի։ Եւ այլուր ասէ։ Տեսանէք արդեօք զաշխարհս, թէ որքան սրախողխող մեռանի, տեսանէք զժողովուրդն, թէ որպիսի պատժովք պատուհասիցն միշտ չարչարի։ Հայեցարուք՝ զիր աղագաւ գործին այսոքիկ, եթէ ոչ վասն մեղաց քահանայից։ Զ 'ի մեք եմք պատճառ մահուան ժողովրդեան, որով կորնչին։ մեզ պարտէր առաջնորդել նոցա 'ի կեանս։ բայց սակայն յաղագս մեղաց մերոց ժողովուրդք գունդագունդ անկան։ զի վասն մերոյ պղերգութեան չէն կրթեալք 'ի կեանս։

Եւ բեռնարտոս ասէ։ Թշուառական կենցաղ քահանայից՝ աւաղական և ողբալի կործանումն եղև տերունի ժողովրդեանն աստուծոյ։

Եւ օգոստինոս ասէ։ Հանդերձեալ է օր դատաստանի վասն քահանայից, յորոց պահանջին ամենայն հոգիք։ Եւ յիրաւի, զի և աստուածխսկ ասէ, զարիւն ծուլութեամբ քով կորուսեալոցն 'ի ձեռաց քոց խնդրեցից՝ ոչ կարգելը

գէտ։ Զ՝ինչ էր պատճառ անհնարին աւեր-
ածոյն Երուսաղէմի 'ի քաղդէացւոց, զի՞նչ
այլ, բայց եթէ մեղացն յանցմունք քահանայից.
որպէս վկայեն մարգարէքն Երեմիա և Եղեկիէլ։
Ուստի զայսոսիկ մեր անշուշտ գիտելով զգաս-
ատցել զարթիցուք 'ի թմրութենէ մեղաց, և
'ի գործս պաշտաման մերոյ զանստգտանելի և
զանբասիր վարս յանձին ստացուք 'ի շինութի
մեր և ամենայն աշխարհի։

Զ՝ՀՐՈՒԽ ՄԵԿՍԱՆԷԲՈՐԴ։
ԹԱՆԷ ՈՐՔԱՆ ՊԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ Է ՔԱՀԱՆԱՅԻՑ ՕՐԻՆԱԿ ԷԱ-
ՐԷԱՑ ՀԻՆԷ ԺՈՂՈՎՐԴԷԱՆՆ։

Ա՝յս պարտաւորութիւն անտի յառաջանայ, զի
ինքնակամ յօժարութեամբ առաջի ՀԱՄ բազ-
մութեան յանձնառու եղեն ՀԱՄ ճգանց և վաս-
տակաց, որք 'ի բարեկեցութեան հօտին քրիս-
տոսի վերաբերին։ Ուխտեցին հաստատուն դա-
շամբք արածել զնոյն, և սնուցանել 'ի փրկա-
ւէտ դարմանս ուղղութեան։ Խստահացան յան-
ձինս կանոն անստերիւր և անշեղ ցուցանել
զինքեանս 'ի բարեկարգութիւն կառավարե-
ցոյն։ Ա՝ՀԿ և իբրու յատակագոյն կնիք պաշտա-
ման իւրեանց պահանջի զայնպիսի ունել ուղ-
ղութիւն, որով կարիցեն կանոնաւորել ժո-
ղովուրդն 'ի վարս, 'ի բանս և 'ի գործս։

Զ՝ՈՒ զինարդ առնել պարտ ի՞նչ, ասիցէ՞ ոք թէ-

բեռ, ըստ այնմ՝ զոր Երջանիկն պետրոս պայմանէ. Լ՝ըածեցէք ասէ՝ որ 'ի ձեզ հօտդ է այ, վերակացու լինիլ, մի՛ իբրև ակամայ, այլ կամաւ ըստ աստուծոյ. մի՛ զշաքաղութեամբ, այլ յօժարութեամբ. մի՛ իբրև տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին. և այնուհետև պետրոս՝ Ա. 2։ Լ՝ըդ՝ եթէ հովիւ քաջ ես և անձնադիր 'ի բարիս հօտիդ, պարտիս արածել բանիւ խրատու և յորդորանաց. պարտիս նպաստել աղօթիւք և օրհնութեամբ, և պարտիս ուղղաւորել բարեկենցաղ գործոցդ օրինակօք։ Հիմ արդեօք զարմանային ամենեքին ընդ վարդապետութիւնն քրիստոսի. զի իբրև իշխանութեամբ ուսուցանէր, և ոչ որպէս դպիրքն և փարիսեցիքն։

Լ՝ու ոչ աղագաւ էր այն վստահութիւն յիշխանաբար վարդապետութիւնն. վասն զի՝ չկայր ինչ ստգտանելի 'ի վարս նորա։ Լ՝ու վասն այնորիկ միայն զբանիցն փարիսեցւոց՝ որ համաձայն էր օրինաց, զկատարումն հրամայէր ունել ժողովրդեն. և ոչ զըստ գործոց նոցա նմանակութիւն։ Լ՝պա զոյշ լեր՝ որ վարդապետ կարգեալ ես խրատու, զի մի՛ ախտաւոր շարժմունքդ չարութեն տացեն օրինակ. և զոր միով ձեռամբդ շինել կամիցիս, միւսովդ քակեսցես 'ի վնաս ժողովրդեն և 'ի դատապարտութի անձին քո։ Լ՝ըկիր յառակէ երկանին իշոյ, զի մի՛ խորտոյշ 'ի ծով անդր դժոխոցն եղեալ՝ անվերջ կապանօք

տուաքարշ ընչանակեսցիս յաղօրիս տանչանաց։ Խրախուսեսցց յաւետիս բերկրական վճռոյն, թէ՝ որ արասցէ և ուսուսցէ, նա մե՛ծ կոչեսցի յարքայութեան երկնից։

Տե՛ս՝ զինչ ասէ հանճարեղն Յուդիթ, ը։21։ ըստ լատին թարգմանութեան։ Դուք էք քահանայք և երիցունք 'ի մէջ ժողովրդեանն այ, և 'ի ձէնչ կախին հոգիք նոցա։'ի բարբառ ձեր ուղղեցէ՛ք զսիրտս նոցա։ Այս սբն պողոս գրէ առ տիտոս։բ։7։ Ամենեցուն զանձն օրինակ կացուցանել գործոյ բարութեան, վարդապետութեամբ զանեղծութիւն ունել, զսրբութիւն և զպարկեշտութիւն։և այլն։ Այս այլուր ասէ։ Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ իբրև ըզպաշտօնեայս քրիստի, և զհաղարապետս խորհրդոցն աստուծոյ։

Զ սոյն զայս և ամ ժողովոցն կանոնք վճռեն։ զբարի վարս ունել քահանայից, 'ի հոգս հօտին տքնիլ, զինքն օրինակ նոցա կացուցանել, ոչ և այն՝ որ գրի։Զի՞ք այլ ինչ՝ որ այնպէս զմարդիկ կրթեսցէ միշտ 'ի բարեպաշտութի և 'ի պաշտօն աստուծոյ, քան զվարս և զկենցաղավարուիս և զօրինակս այնոցիկ, որք զանձինս իւրեանց 'ի պաշտօն խորհրդոցն աստուծոյ կացուցեալ են։ Զի 'ի նոսա իբրև 'ի հայելի պշնուն աչք այլոց, և 'ի նոցանէ առնուն զօրինակ հետևողութե։ Որոյ աղագաւ այնպէս յարդարել պարտ է քահանայից զվարս իւրեանց և զկենցաղ, որք 'ի

վիճակ տեսուն կոչեցեալ են. զի միշտ գծան-
ակացութիւն շարժման, զբարեխառնութիւն
բարուց, և զ լիակատար իմն կրօնաւորութիւն
հոգւոյ յինքենս ցուցցեն.'ի զգեստս, 'ի շարժ-
մունս, 'ի գնացս, 'ի բանս և յայլ ամ հարկա-
ւոր և 'ի բարի ձիրս հոգւոյ:

Զ. Լուսի երիոպասանիերորդ:

Թէ ո՞րչափ հարկաւո՞ր է քահանայից ունել զգիրոնութիւն:

Որք 'ի բարձրագոյն խորհրդոցն կարգեալ են
'ի սպաս պաշտաման, հարկաւոր է նոցա ապա-
քէն զամենակատարն հանճարոյ ունել զգօնու-
թիւն, որպէս զի մի' զեղծումն տգիտաբար 'ի
պաշտօն անդր իւրեանց բերցեն. և փոխանակ
վարձուց՝ դատապարտութեան լիցին արժանա-
ւորք: Տէս ինձ զսերովբէս. հայեաց խորհրդոյ
ակամբք 'ի բաղմաչէայ նոցին լուսափայլութի-
մոաց և գիտութեան, որք վասն զի կարգեալ
են զաստուածային նշուլեցն լուսափայլութի-
հաղորդել ներքին դասակարգութեանց ամե-
նալի ակամբք, ամենուստեք տեսողութե ձրիւք
պատշաճեցան: Զնոյն է իմանալ և յաղագս
քերովբէիից, որք 'ի յաճախութենէ գիտութե
ընկալան զանուն:

Զ. Ինչ են քահանայք, ոչ ապաքէն սրովբէք
երկրաւորք, կարգեալք 'ի լուսաւորութի ժո-
ղովրդեան ըստ աստուածայնոցն պատուիրանաց.
ապա քանի՞ առաւել հարկաւոր է նոցա ունել

զգիտութեան և զիմաստիցն պայծառութիւն
'ի հոգիս իւրեանց, որով կարիցեն բարեպէս
առաջնորդել իւրեանց հօտին։ Զ. Զ՞նչ ասէ մար-
գարէն մաղաքիայ։ Բ։ 7։ Շ՞ր թթունք քահանային
զգուշացին գիտութեան, և օրէնս խնդրեսցեն
'ի բերանոյ նորա, զի հրեշտակ տեառն ամենա-
կալի է։ Զ՞վ դու քահանայ՝ յանձն առեր ու-
սուցանել տգիտաց, մի՛ հեղգանար ուսանիլ
զկատարելն գիտութի, որով կարասցես զպաշտօ-
նըդ փառաւորել։ Զ՞թէ տգիտութիք մարմնաւոր
բժշկաց մահաբեր են բազում անգամ հիւան-
դաց, զի՞նչդ կարասցես դու 'ի դարման բժշ-
կութեան հոգւոց առնել ինչ, յորժամ հեղ-
գանաս 'ի կարևորն գիտութենէ։ Հրամայէր ՅԾ
հնոյ կտակի քահանայիցն մի՛ ըմպել նոցա զգինի
և զգինի, որպէս զի ունիցին զգիտութիւն զա-
տանել 'ի մէջ սրբոց և պղծոց, պարկեշտից և
անպարկեշտից։ զԼա՞։ Ժ։ 9։ Դու զի՞նչ արաս-
ցես արբեալդ ոչ 'ի գինւոյ, այլ՝ 'ի տգիտու-
թենէ, որ չարագոյն է քան զարբեցութիւն,
զի 'ի նմանէ յետ սակաւու լինի զգաստանալ,
իսկ 'ի կամաւոր կուրութէ ոչ բնաւ երբէք։

Լ՞ուր՝ զի՞նչ ասէ յովհ՞ան։ «Քահանային ոչ
միայն զօրէնս գիտել պատշաճի։ այլ և վասն օ-
րինացն պատասխանի տալ։ Զ՞ս այլուր։ Զ՞նչ
է սիրտ քահանայից։ բայց եթէ տապանակ կտա-
կարանաց։ յորում վարդապետութիւնն ծաղկի
ընդ գաւազանին ահարոնի։ և տախտակք օրի-

նայն կան 'ի պահեստ, և այլն։

Սրբազանն պողոս առ իւրն տիմոթէոս զսոյն պատուէր ասէպ յեղյեղէ, կրթել զանձն 'ի կարևոր գիտութիւն, ունել զհանճար 'ի կրաստամբութիւն հակառակացն, հանապազորդել յուսումն սուրբ գրոց, յորում վարժեալն էր 'ի մանկութեան, և այլն։ որք զամենայնիւ հարկաւորութիւն ունել ցուցանեն յայնմ քահանային։ Այլ վայ մեզ։ զի յանտանելի տգիտութեան պաշարեալ տեսանին արդէն եկեղեցականք։ Այս վասն այնորիկ սպառնայ աստուած մեզ յիմարելոցս 'ի ձեռն ովսէայ։ գ։ 6։ Զոր մերժեցեր ասէ զգիտութիւն, մերժեցից և ես զքեզ, զի մի' ևս քահանայասցիս ինձ, և մոռացար զօրէնս Աստուծոյ քո, մոռացայց և ես զորդիսն քո։

Լսեմք՝ ասէ սուրբն 'Ներսէս շնորհալին, զոմանց սուտ քահանայից, զի ոչ յայլ ուսմանէ են տգէտ յաղագս հեղգութեան, մանաւանդ թէ վասն անհաւատութեան, այլ և զսաղմոսն դաւթի ոչ գիտեն բովանդակ։ Այս սքն 'Ներսէս լամբրոնացին ողբայ հառաչանօք, և յետ բազմաց բանից զսուտս սրբութեան արարաք ասէ վաճառարան։ մեք խորշիմք 'ի նոյն մասնել, և զմանկունս անիմաստս ածեմք ոչ բաշխել մեզ զգիտութիւն մարմնոյն քրիստոսի, այլ օտարացն զնոյն վաճառել։ Աստուածաց

արժանի բանք ։

Բայց՝ յիրաւի ոչ այսպէս լինէր, եթէ կուռն ջանիւ փոյթ ունէին եպիսկոպոսքն Հրամայել որոց յայն պաշտօն ձեռնադրիլ կամէին՝ զի ըստ քրիստոնէական վարդապետութիւնն թէ ըստ հաւատոյն մասանց, և թէ ըստ այլոց՝ հրապարակաւ ուսուցցեն և քարոզեսցեն, և չթողացուցանել զնոսա 'ի քննութիւն ձեռնադրութեան մտանել. մինչև էին վարժեալք յայտնի և համարձակ 'ի քրիստոնէական վարդապետութիւն, և ոչ զինեալք հոգևոր կրթութեամբ 'ի գիտելիս և 'ի հարկաւոր ծանօթութիւնս գերազանց այսր պաշտաման ։

Փորսիոս անուն ոմն եպիսկոպոս յափշտակել երբեմն 'ի տեսուչ յաւիտենական տանջանացն, ասաց նմա հրեշտակն, 'ի պղերգուէ վերակացուաց որոյ և ելցէ կարգի գոգցես կորնչիլ համարէն տիեզերաց ։ Այս փոյթ կալցուք յուսումն գիտութեան. զբօսարան մեզ լիցին մատեանք իմաստիցն սրբոց, որով լիցի մեզ աստուծութիւն յանգերծ դատապարտուէ անտի ։

Գ. Լուսաւորչի երէցփոխանէրոյդ ։

Թէ ո՞րչափ զաղ բոյի է ոնոնտուր պղծուն 'ի ուսանողաց ։

Գարշ և աղտեղի է ապաքէն պղծուն մարմնական, այլ ոսկայն ամենագարշ և տուաւել

աղտեղի համարի՛ ի քահանայս, և չարագոյն ևս պատժոց արժանաւոր։ Քանզի՝ զի՞նչ այլ ևս աղտեղի տեսիլ, և զի՞նչ այլ չարութիւն դժնդակ, յորժամ՝ որք զհրեշտակացն ունիլ զսրբութիւն մատուցեալ են զանձինս, յանասնական պղծութիւնս վայրենացին։

Պործանելի էր սոդոմ, սակայն առաւել ևս սատակացաւ պատիժն, և վաղվաղ՝ ի վերայ եհաս դառն կատարած. յորժամ՝ ի զուարթուն սրն մատաբերեցին գործել զաղտեղիս։

Սոսկացաւ երկինք հարեալ զապշութեան, և ըստ նորատեսիլ նոցայն մծղնէութեան զկիզանօղն բնութիւն հրոյ՝ ի կայլակս ջրոյ բանտեալ նորատեսակ պատուհասիւ կորոյս զնոսին։ Ա՞ստ՝ եթէ այսպիսի դատաստան վրէժխնդրութեան եղև՝ ի վերայ նոցա, որք անծանօթ էին օրինաց, և հեռի յաստուածպաշտութենէ, զի՞նչ արդեօք ո՛չ անցցէ ընդ քահանայս, որք տեղեակք են օրինաց, և հաղորդք երկնաւոր բարեաց, և քան զպատիւն հրեշտակական գեր՝ ի վերոյ ամբարձեալ՝ ամենասուրբ խորհրդոցն կարգեալ են սպասաւորք, յորժամ՝ ի պղծութեան գարշանսն աղտեղասցին։ Չէն արժանի կեալոյ, և ո՛չ իսկ զարև տեսանելոյ, կամ ողորմութեան և մարդասիրութեան։

Տես զի՞նչ ասէ Սովսէս. զեւտաց՝. ԻԲ. Ամ-

նայն այլ՝ որ մերձենայցէ 'ի սրբութիւն, զոր սրբեցին որդիքն Իսրայէլի տեառն, և պղծութիւն 'ի նմա՝ սատակեսցի անձն այն յերեսաց իմոց։

Եւ արդեօք պատժեալ մահուամբ անկաւ զնայ առաջի տապանակի տեառն, քան եթէ՝ զի ըստ ոմանց վարդապետաց անկեալ էր յայնմ գիշերի ընդ կնոջ իւրում։ Զի՞նչ էր պատճառս որով սատակման որդւոյն հեղեայ, ոչ այլ ինչ, քան եթէ՝ զի սակաւ ունէին զողջախոհութիւն 'ի պատարագսն հնոյ կտակին, որք միայն ստուերք էին սրբութեան մեր պատարագի։

Տես՝ զի՞նչ ասէ նայ Սրբազանն պողոս։ ա։ կորն՝։գ։16։Ոչ գիտէք զի տաճար էք այ։ եթէ ոք զտաճար այ ապականէ, ապականեսցէ զնա ան։ Զրդ՝ եթէ սոսկ աշխարհականք տաճար են այ, քանի՞ առաւել և քահանայք։ Զնոյն ասէ և 'ի ա։ կորնթ՝։ գ։ 15։ Ոչ գիտէք, զի մարմինք ձեր անդամք են քրիստի։ Զրդ՝ առեալ զանդամս քրիստի, առնիցեմ անդամս պոռնկի։

Զնտանելի է այս չարութիւն վրիժապարտ, և իսկոյն 'ի բարկութիւն շարժէ զամենազութ բարութիւն այ, որպէս և սրբազանն Պողոս ա։ առ։եբր՝։ժ։28։Զրհամարհեալ ուրուք զօրէնսն Մովսէսի՝ առանց իրիք ողորմութեան առ երկու կամ երեք վկայիւք մեռանիւր։ իսկ որչափ պատժոց արժանի համարիցիք զայն, որ զոր-

դին ՝այ առ ատն եհար, և զարիւն նորոյ ուխտի խառնակ համարեցաւ, որով և սրբեցաւն, և զհոգին շնորհաց թշնամանեաց։

Ասէ հերոնիմոս 'ի վ՚ր բանին եզեկիէլի։ Գ։26։ Քահանայք՝ որք անարգէին զօրէնս, և պղծէին զսրբութիւնս իմ։ Զմարմին քրիստոսի պղծէ, որ անմաքուր մատչի 'ի սեղան զքրիստոս պատարագել։

Եւ այլուր ասէ։ Զիմրդ կարասցէ տանել քրիստոս շշաւման իւրոյ յանմաքուր ձեռաց, և ճաշակման 'ի պղծալիցն բերանոյ, որ փոքր մի յառաջ զհամբոյր պոռնկի յինքն տպաւորէր։ այն՝ որ կամեցաւ յամենամաքուր կուսէ ծնանիլ, և 'ի յերկինս իսկ 'ի դասուց անբիծ կուսանացն շրջապատեալ, ախորժ հաճութեամբ պաշտի 'ի նոցանէ։

Զնոյն ասէ և սուրբն Յովհան ոսկեբերան։ Որք անմաքուր հոգւով ճաշակեն զմարմին քրիստոսի՝ զնոյն չարչարանս տան նմա, զոր եռուն բևեռօղքն զնա 'ի խաչին։

Եւ սուրբ կոյսն Թերեզիա տեսանէր երբեմն, զի դևք երկու խեղդէին զոմն քահանայ 'ի սեղան բեմին, զի պղծութեամբ շաղախեալ էր։ Եւ իսկապէս անկանէր մեռեալ 'ի բեմէ անտի, եթէ չէր աղօթեալ սրբուհին այն վասն նորա։

Վասն այնորիկ և զծանրագոյն ապաշխարանս դնեն կանոնք և սուրբ ժողովք վասն պոռնկութեան քահանայից. յորոց սակի է և այն՝ զոր յառաջ բերէ կրատիանոս ասելով։ Քահանայ պոռնիկ զամս տասն ապաշխարեսցէ ըստ այսմ կարգի։ Զամս երիս չորապահ կացեալ՝ միայն հացիւ և ջրով շաբաթացի. և միշտ քրձաղգեաց յերկիր տարածել՝ պաղատանօք և արտասուս թողութիւն խնդրեսցէ։ Յետոյ զամ մի և կէս 'ի բաց հանեալ զկիւրակէս և զաւուրս տօնից՝ յայլ աւուրսն հացիւ և ջրով միայն կատարեսցէ զապաշխարութիւնն։ Զաւանտի մինչև ցամն եօթներորդ՝ միայն յերիս աւուրս շաբաթուն ծոմապահեսցէ լոկ հացիւ և ջրով։ Լոկ յեօթներորդ ամացն մինչև 'ի տասներորդն, յաւուր շաբաթու միայն ծոմապահ ապաշխարեսցէ՝ հացիւ և ջրով և եթ կերակրեալ, մանաւանդ զի որպէս գրեալ է 'ի կանոնս, վասն միոյ միայնոյ պարզ պոռնկութեան մշանջենապէս լուծեալ զրկին կղերիկոսք 'ի կարգէ իւրեանց։

Ոչ թէ՝ քանի՞ ահաւոր է անկանիլ 'ի ձեռս աստուծոյ կենդանւոյ՝ որ ասաց. իմ է վրէժխնդրութիւն, և ես հատուցից։ Զու մեք անզգայեալ չառնումք երբէք օրինակ 'ի պատուհասն անտի յանցաւորացն և զգաստանալ։ Լ՚ի՞ են մատեանք զարհուրելի պատմութիւք պատժոց, որք պատահեցան մեղսամած և անմաքուր հոգւով զքրիստոս պատարագողաց, կամ անար

ժանուութիւն հաղորդելոյն, զորս ընթեռնումք, և 'ի մեզ մնամք հաստատուն։ սեմք՝ թէ ոչ հուր ծախիչ է, և ոչ երկնչիմք։

Ընթեռնումք զԱ՝ռաքելին, թէ քահանայք՝ ոչ առ տէր մնային, որբեսցին. զի մի՛ սատակեսցէ զնոսա տէր, և ոչ պատարագիմք։ Մինչև յերբ յայսպիսի անզգայութեան մնասցուք եղբարք, մինչև յերբ յերկիւղէն ասուծոյ օտարացեալ անասունքս ուտահակութիւն հոգւոյն պատուիրանաց, մինչև յերբ զկենդանատուն հոգւոյ մեր զընթրիս՝ չարութեան մեր գործովք 'ի հոգեկորոյս մահացու կերակուր անձանց յեղանակեսցուք։

Տէս, զինչ ասէ սքն։ Յովհան ոսկեբերան։ Ոչ յանդգնաբար ասեմ, այլ որպէս զգամ, և 'ի վերայ հաստատ եմ, ըստ այնմ մակաբերեմ։ Արդ՝ չկարծեմ, թէ փրկեսցին բազումք 'ի քահանայից և 'ի բաժինսն ասուծոյ համարեսցին. զի կարի յոյժ բազում են կորուսեալքն քան զփրկեալսն։ Այս պատճառն է, զի այս պաշտօն զգերամբարձ հոգի պահանջէ. ուստի պարտ է նոցա զանթիւ աչս ունիլ յամ կողմանց, զի նրբագոյն ինն քննութեամբ շուրջ նկատեսցեն յամենայն պարագայս։ Այս պատմէ իսկ, թէ բազում ընդ հանուր հիւանդութիւնք և արվածք թշուառութեան եղեն յիւրուն ժամանակի յաղագս անրժանութեան հաղորդելոյ։ Ուս-

տի և սբն կիպրիանոս ասէ, ով է զբաղը՝ խոր-
հեսցի այր իւրաքանչիւր, ոչ զայն՝ զոր այլ ոք
կրեաց, այլ զայն՝ զոր ինքեան կրել արժան է։
Այս մի՛ հաւատասցէ զինքն աղատ 'ի պատժոյն
լինել, յորժամ առ վայր մի հեռացեալ ատ-
սանէ յինքենէ զերաւունս դատաստանի։ Յայս
միտ և որբազանն պողոս գրէ. «ա կորն"։ Բ։ 3։
Թէ բաղումք 'ի նորահաւատ եկեղեցւոյն յա-
զագս անարժանս հաղորդելոյն յանկարծական
մահուամբ և ընդ երկար հիւանդութիւն պատ-
ժեալ մեռանէին. վասն այնորիկ իսկ են ասէ 'ի
ձեզ բազումք հիւանդ և անխտաժէտք. և շատք
ևս այնք են, որք և ննջեցեալ իսկ իսկեն։ Այթէ
զանձինս քննէտք, ապա ոչ դատապարտէտք։
Ընդ՝ եթէ նոքա որք այնինչ զերծեալ էին 'ի
կռոցն և նորամաւաք 'ի կրօնս սրբութեան, յա-
զագս չխորելոյ զմարմին տեառն՝ յայնպիսի վրէ-
ժիս պահանջեցան, քանի՞ ապա 'ի բիւրապատիկ
չարաչար վրէժս կայ մեզ պահանջել, որք յան-
դստին իսկ յաւաջին տիոցն 'ի սրբութեան ուխ-
տին հաստատեալ և քաղդեաց լեալ՝ անար-
դեմք զշնորհսն սրբութեան, և իբրև զխոզ 'ի
տիղմն մեղայ թաւալեալ, յանդգնիմք անմաք-
բատէս սպասաւորել այնմ, յորմէ և հրեշտա-
կայինն սրբութեան զարհուրեալ՝ 'ի բաց հրա-
ժարի մերձենալ։

Պաշտ-ի. Հրեայ-ական։

Թէ պ՚երբ է Հայրապետին պահել ղողջախոհութիւն՝ օրինաց-
քաւ Հրէացոց։

Օրորինակ հրեշտակային է բարձրութիւն քահանայական աստիճանի, նոյնպէս և պահանջէ ունիլ քահանայից զգերակատարն մաքրութիւն 'ի շշուքեալս. և անախտ ամբծութեամբ 'ի բաց մերժել զմարմնաւորն հեշտութիւն. քանզի յամենեին սրբութեան կարգեալ են մասնիլ, վասն այնորիկ և 'ի ծայրագոյն սրբութեան զանձինս պահել պարտաւորին։ Ընդ ժրեալի այս ճշմարտութիւն, և քան զլոյս միջօրէի գերապայծառ, մինչև 'ի հեթանոսական իսկ 'ի մոլար միտս զճանանչ նշուլից իւրոց փայլատակել, որով և քահանայքն՝ որք կարգեալ էին 'ի պաշտաման անոտի կուռոց, ամենայն ջանիւ ճգնէին հաստատուն ունել զողջախոհութիւն. յամ պատճառացն՝ որք վնասել երևէին այնմ մաքրութեան, բայց 'ի բաց փախուցեալ՝ իսպառ զգուշանային։ Զինչ էին նախընթաց կենաքն կայիոսի վաղերիոսի, բայց եթէ դժոխային լիմ լուաքիք ամենայն աղտեղի խենեշութեանց. սակայն յորժամ իբրու դեղ լիմ սրբագործիչ տուաւ նմա աստիճան քրմապետութիւն ոլիմպիականն դիոսի, այնպիսի արի առաջադրութիւնս գործեաց չնեմացուցանել զեղծ գործով զպատուոյ իւր փայլիւն, մինչև ոչ լինել նման նմա յառաքինութեան յետ այնորիկ։

Հայս կատարելութիւն վերաթեւէր և ջանք քահանայիցն աթենացւոց. որք համակ հրաժարեալք յամբոխէ՝ և զառանձնական զկեանս ընդգրկեալ, միշտ 'ի քարանձաւս լերանց և 'ի յայրս բնակէին. զի մի' ցանկութեան ինչ ախտիւ ողջախոհութիւն իւրեանց սասանեսցի։

Ո՞ վ ի եթէ ընդ պատուհանս կանանց էլ մահ, որպէս ասէ երեմ՝՝. Թ, 21, Ո՞ վ ի՞ արդ ապա կարելի է ումեք 'ի կենդանութեան ունել զիւր ողջախոհութիւն, կենցաղակից գոլով ընդ նոսա։ Ա՞ սան այնորիկ փրկաւէտ իմն դէղ է մաքրութեան մեկուսի մնալ 'ի նոցանէ, որքան և կարէ ոք։

Պոյնպէս և քահանայք եգիպտացւոց խորշէին իսպառ 'ի մոց, 'ի գինւոյ և յամենայն պարարտ կերակրոց և յըմպելեաց, և մանաւանդ 'ի կանանց և 'ի մերձաւորաց, հանապազ 'ի մեհենի անդր բնակելով։ Ո՞ հայ և զձէթ դուն ուրեմն ուտէին. իսկ զկաթն և զձուս ոչ երբէք։ Ո՞ խրճիթս իւրեանց 'ի տերևոցն արմաւենեաց կազմէին. և զաւուրս երիս կամ չորս անճաշակ լինելով, տոկային քաղցու և ծարաւոյ. զի հիւթքն ծնեալք յաւելորդութենէ կերակրոց, ճնշեալ ցամաքեսցին. որով և ինքեանց լինիցի համարձակիւ 'ի պաշտօն իւրեանց և առանց խղճի կատարել զնոյն։

Ոչ՝ չէին ապաքէն սոքա 'ի կրօնաւորացն թե-

բայիդոյ, այլ՝ հեթանոսք և կռոց պաշտօնա-
սարք. և զայսպիսի զգուշութիւն յանձինս ցու-
ցանէին. և այնքան ջանիւք աշխատէին մեռու-
ցանել զկարիս մարմնոյ։ Օ՜ի՜նչ ապա լինիցի,
որ համեմատել քրմացն դիւայ՝ վատթարագոյն
ևս քան զնոսա գտանիմք, բղջախտութեամբ
և որկրամոլութեամբ բոլորովին 'ի մարմին ըն-
կղմեալ։

Տես, զի՞նչ ասէ սքն Յովհան ասկէ՝. Հարկ է
քահանայիցն քրիստոսի կեալ այնպիսի մաքրութ-
ամբ, որպէս թէ յերկինս իցեն, և 'ի մէջ երկնային
զօրութեանցն ունին զտեղի։ Ոչ է պարտ այլ
ինչ իրաց այնպէս մաքրագոյն լինիլ քան զայն,
որ զայսպիսի պատարագ վայելէ. ոչ այնքան պայ-
ծառագոյն լինիլ պարտ է արեգական, որքան
ձեռացն՝ որ զմարմին քրիստոսի և զաստուա-
ծութիւնն շօշափէ. կամ բերանոյն՝ որ ուծային
անմահացոյց հրով լնանի. և կամ լեզուին՝ որ
սարսափելի արեամբն քրիստոսի բոսորերանգ
կարմրանայ։

Լ. Դ. օգոստինոս ասէ. Ոչ քահանայք՝ եթէ
իւրաքանչիւր հոգի ամենա է աստուծոյ, առա-
ւելագոյն ևս ձեզ պարտ է լինիլ մաքուր և ամ-
բիծ տաճար և ամենա այնմ, զոր ճաշակէք. վա-
սն այնորիկ երկիւղիւ նորա սանձեցէք զմարմ-
նոյս ձեր. և բոլորովին 'ինոյն բեւեռեցէք։

Ղ.Ը-ի հնգերորդ։

Թե որ պարտ է Յովհաննայից հրամարիլ յաշխարհական զբաղմանց և յապրուստից պարապիլ։

Զբաղմունք կենցաղականք, և հոգեք աշխարհայինք փուշ են վնասակար և հեղձուցիչ. որպէս ասէ տէրն մեր յիսուս քրիստոս. վասն այնորիկ ամենեցուն իսկ վայելէ ազատ պահել զանձն, և մի՝ իսպառ ընկղմիլ յայն տարապայման զբաղանօք. բայց յաւէտ ագոյն և քահանայից, որ 'ի վիճակ տեսն հրաւիրեցան, որ սեղանոյն այ աշխատեր կարգեցան, որ զբանին կերակուր մատակարարել ամ՝ հասակաց՝ անտեսս կացուցան. որք յաճային պարապիլ գործոց կատարումն՝ յայդ ի եկղեցւոյ գործել կոչեցան։ Յաղագս որոյ ընդդէմ է ամենեքին և դատապարտելի յաշխարհական հոգոյն զբաղմունս անկեալ գլխովին՝ հեղձուցանել զիւրեանցն պաշտօն 'ի վնաս հասարակաց, և 'ի կորուստ հոգւոց իւրեանց յաւիտեան։

Ընթեռնումք զասել սրբազանիցն առաքելոց. ՝ն՝ է հաճոյ մեզ թողուլ զբանն այ և պաշտել զսեղանս, ՝ն. գործ՝. զ. 2։ Պա ընդ որպիսի դատապարտութեամբ ՝ն՝ իցեն, որք զպաշտօն իւրեանց 'ի բաց լքանեն, չարաչար 'ի հոգս կենցաղականացն ընկղմեալք։ Ընկեղեցին է գործարան քահանայից. որ գիրքն են նոցուն զբօսարան. քարոզութիւն բանին է նոցա տուրևատաղօթից պարապումն է այնց զինուորութիւն.

և մատակարարութիւն սրբազան խորհրդոցն է պետութի բարձրաստիճան. ապա յայնս պարտ է եմ ջանից նոցա և գործոց ուղղակի ձգտիլ, և մի՛ յաջ և կամ յահեակ բնաւ ստերիւրիլ։ Ուստի և գրեալ է 'ի կանոնս առաքելոցն։ Մի՛ երբէք զաշխարհական հոգս յանձն առցեն եպիսկոպոսք կամ քահանայք, կամ սարկաւագունք, ապա թէ ՝ՉՀ՝ լուծցին 'ի կարգէ։ Ուր յայլում կանոնի ասեն։ ՀՉՀ՝ պարտ եպիսկոպոսի կամ քահանայի կամ սարկաւագի խառնել զինքն 'ի պաշտօն հասարակաց, այլ միայն պարապիլ, և զձեռն մատուցանել 'ի գործս եկեղեցականս։ Ուրդ՝ յօժարեսցին հոգւով զայս առնել. ապա թէ ոչ՝ լուծցին. զի ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել։ Ուր 'ի ժողովս բազումս նմանապէս արգելանօք և կապանօք սահմանեցաւ այս. որպէս և 'ի ժողովն կարթագինոյ, ուր ասեն։ Մի՛ յանձն առնուցուն եպիսկոպոսք կամ քահանայք զնանամածութիւն, այսինքն զհոգս հասարակութեան, և մի՛ զբաղեսցին 'ի հոգս առտնին, այլ միայն ընթերցման, աղօթից և քարոզութեան բանին պարապեսցին։

Այնպէս գրէ և կլեմէս պապն հռովմայ. Պարտէ ասէ քահանային անաւար լինիլ. և կուռն ջանիւ գործել, զի զամենայն զբաղմունսն կենցաղականս 'ի բաց մերժեսցէ յանձնէ, մի՛ լինիլ երաշխաւոր, մի՛ փոստաբան 'ի դրուանս իշխանաց

և յառեանս դաւառուրայ աշխարհի. և մի՛ այլ ինչ աշխարհական զբաղմամբ պաշարիլ՝ կենցաղական գործոց պատճառաւ. զի մի՛ գուցէ՝ ի՛ մարդկային հոգս ընկղմելով՝ չկարասցեն ըզ պարապու�ունել առ բանն աստուծոյ:

Այլ զի բազումք ասեն, թէ այդ կանոն չէ այժմ՝ ի սովորութեան. և ոչ իսկ հարկ է մեզ՝ ի գործ դնել զայն. լուիցուք, զինչ ասէ առ այս ժողովն Թրեատենդինոյ. որ վերջին է ամ ժողովոց: Կանոնեալ հաստատեաց ասէ ժողովքս, զի որ ինչ յառաջին ժողովս փրկաւէտականոնիւք սահմանեալ են՝ որ հայրապետաք վասն հաստատութեան կենացն եկեղեցականաց, վասն պահելոյ զպաշտօնս իւրեանց և զվարդապետութիւն միանգամայն և վասն աւելորդ ուտելեաց և ըմպելեաց, և վասն փախչելոյ և հրաժարելոյ՝ ի խաղուց, ՝ի պարուց, ՝ի չարագործութեանց և յաշխարհական գործոց, նոքին և առ յապայ նոքին պատժովք կամ ևս աւելի ըստ կամաց ա՛ռաջնորդաց հաստատեցին և անջրելի պահեցին՝ ի վրայ այնոցիկ, որք յանցանիցեն: Այս եթէ ինչ ինչ՝ ի սահմանադրութեանցն յայնցանէ խափանեալ իցեն, և ոչ պահեն, եպիսկոպոսք աստղեացն առանց զանցառութեան՝ ի սովորութի մուծցեն վաղվաղակի. և մեծաւ ջանիւ հոգ կալցեն առ՝ ի տալ պահել ամենեցուն:

Այսոսիկ լսելով եղբարք՝ թողցուք մեռելոց

թաղել զմեռեալս իւրեանց, և մեք զՀետ ՝ած-
այնոցն կրթեսցուք պաշտամանց։

Զ՝ԱԲՐԻԷԼԻ ՉԷՐ յանձնեղեալ հարկանել՝ այլ
պատգամաւոր լինիլ հրամանին աստուծոյ. և վա-
յնորիկ ՝ոչ համարձակեալ ՝ի հարուած՝ զդէս-
պանութեանն պաշտէր զգործ, ասել ցմիքայ-
էլ, հա՛ր զդա։ Այլ զիարդ ապա մեք ՝ի պաշտօն
փառացն աստուծոյ վերառեալք, լքցուք զայն
՝ի բաց, և ընդ խոցոտիչ զբաղմունս հոգոց աշ-
խարհի շրջանակեսցուք, որ ապականիչն է հոգ-
ւոյն բարեշաւութեան։

Զ՝ԼՈՒԿԱՅ ՎԷՃԱՌԱՆԷՐՈՐԴ։
Թէ պարտաւո՛ր էն ՝ահկանայ՝ խորշիլ յո՛ՇԷՐՅ ՇԻՆԼ։

Ա՝ղքատութիւնն է մի ՝ի գլխաւոր ուխտիցն,
զոր պայմանէ ոք անձին, յորժամ ՝ի կրօնաւո-
րական կարգն մտանէ. և այնքան հաճոյ և բարձ-
բագոյն, մինչ ՝ի նոյն պարծիլ սրբազանին պետ-
րոսի առ տէրն մեր. տէր ասէ, ահա՛ մեք զամ-
թողաք և եկաք զկնի քո։ Զրուցմ պատասխանեց՝
որ վասն մեր էր աղքատացեալ, նատջիք (ընդ այնր)
յերկուսասան աթոռս՝ և այլն։ մատթ՝. ԺԲ. 28։
Զ՝ոյն զայս պարտին ամ քահանայք հասաս-
տուն ունել, զի մի՛ ցանկութիւն ընչիցն ապա-
կանեսցէ զնորհուրդս նոցա, և զրկեսցէ յայն-
պիսի փառացն ժառանգութենէ։ Զանգի ասէ սրբ-
բազան առաքեալն պողոս. ՝ա՝. տիմոթ՝. գ. 10։ Ա՝ր-

մատ ամենայն չարեաց արծաթասիրութիւն է. որում ոմանց ցանկացեալ՝ վրիպեցան 'ի հաւատոց, և զանձինս արկին ընդ բազում ցաւովք։ Եւ յիրաւի, զի չի՛ք և չի՛ք բնաւին այնպիսի ինչ յախտս՝ որ այնպէս լուծանել զոլոր սիրոյնասուածոյ գիտիցէ. որպէս զագահութիւն և զարծաթասիրութիւն. ոչ ապաքէն նա՛ է՝ որ զտէրն երկնի և երկրի էած 'ի վաճառ։ Եւ՝ նա՛ է՝ որ զառաքեալն գերեաց վաղվաղակի, նա՝ ամ չարեց և յափշտակուեց և զրկանաց սկիզբն և արմատ ապա ստուգիւ ամենայն մեղք և չարիք անտի ծնանին։

Եւ զի յամենայնի և առ՝ ամ աշգս՝ որք զորբոյ աւետարանին խրատուց երթան զկնի, արգելեալք եկեղեցականաց զհետ լինիլ հարատութեան մարմնական գոյիւք, վասն այնորիկ և գրէ բեռնարտոս։ Բաց 'ի հարկաւոր պիտոյիցն կերակրոյ և հանդերձից՝ զոր ինչ առ քեզ 'ի շահելոցն պահես, այսինքն է՝ 'ի ստացուածոցն քահանայագործութիւն, չէ՞ քո այն, այլ՝ յափշտակութի՛ և սրբապղծութիւն։ Զ 'ի սակ առաքեալն պողոս 'ի տիմ". գ. 8։ Ունիմք զկերակուր և զհանդերձս, այնու շատացուք։ Տէս և 'ի մի՛ առ ոմ պաշտօնեայդ սեղանոյ, զի ոչ ասէ այնու զարդարեսցուք, այնու խենեշացուք, այնու հպարտացուք, և այլն. այլ՝ այնու շատացուք, զհարկաւորն և երթ 'ի ծածկոյթ մերկութեան մարմնոյ ցուցանելով։ Եւ դարձեալ ասէ. վայ

քեզ կղերիկոս, որ ուտես զմեղս ժողովրդեան։ զի լաւ ևս էր քեզ մանաւանդ գործել զերկիր, կամ մուրանալ։ Այլեսցեն եկեղեցականք առաջի աստենին քրիստոսի, և ասելի լինցի յայնժամ ծանրագոյն գանգատ ժողովրդեան և սաստիկ ամբաստանութիւն այնոցիկ, որոց որովք անան ժառանգաւորք եկեղեցւոյ։ Օ՜ինչ շահ քեզ 'ի հարստութեան ոմի անզգամ, որով զայնքան սատակագոյն դատաստան ունիս ստանալ անձին քում։

Այս այլուր ասէ. 'ի սեղանոյ անտի կեցցէ կըղերիկոս, որում սպասաւորէ։ Բայց մի' գանձեսցէ յարկեղ, մի' վատնեսցէ յաւելորդս, և մի' զաղգականս իւր եկեղեցական գոյիւք ճոխացուսցէ։ Այս ևս՝ ծանիք (ասէ ոմի քահանայք) զի 'ի դատաստան ձեր համարին այնոքիկ ամենայն, զոր ընդ վայր 'ի փափկութիւնս ձեր ծախեալով ուտէք։

Այլ Հերոնիմոս սաստիկ և ծանրագոյն ևս բարբառի։ Եթէ 'ի ժանտախտէ փախիր ասէ յայնպիսի կղերիկոսէ, որ յաղքատուն հարստացեալ, և յանաւագութենէ աշնուացեալ, 'ի փառս անցաւորացն կայ ընկղմեալ։

Օ՜նոյն ասէ և օգոստինոս. Պատրաստ է քահանային զաղքատին կեանս ունիլ. և որ ինչ յաւելու քան զչափաւորն կերակուր և հանդերձ իւր,

ոչինչ դանդաղել տալ զայն աղքատաց. զի աղ-
քատաց է այն ամենայն, զոր ունի։

Եվ նոյն և ամենայն ժողովք իսպառ արգելուն,
համաձայն ՝ի հմանելով, զի եպիսկոպոսք և քահա-
նայք բաւականացին միայն պարկեշտ զգեստուք, և չափաւոր ուտելեօք և ըմպելեօք, և մի՛ անիրաւեսցին անչափօրէն յինչս կարօտելոց։

Եվ ասմանչի էր յոյժ անընչասիրուն Թովմայի Տէրլանովայ, յոր վստահացեալ՝ ՝ի սանձել զընչաքաղց բերրումն յօժարութեան այլոց, ասէր համարձակ. ով եղբարք՝ եթէ ՝ի ժամու մահուանս գայցէ քեզ իմ ՝ի սենեկի իմում զեօթըն և տասներորդ մասն ինչ մեոյ դահեկանի՝ գիտասջիք ստուգիւ, թէ դատապարտեալ է հոգի իմ. և մի՛ թաղէք զիս ՝ի ՝ոբ տեղի։ Դարձեալ ասէր նոյն եպիսկոպոսն, յորժամ լսեմ, թէ գտեալ է դրամ ՝ի մահուան առ կղերիկոս ոք ունող զեկեղեցական հասոյթս, այնքան ցաւագինս տապիմ, որպէս թէ ասէին զնա մեռեալ առ սեղեխի։ Եվ սանզի նոյն օրինակ հաւատամամ դատապարտիլ այնմ եկեղեցականի, որ գանձէ անձին յընչից եկեղեցւոյ, որպէս այնմ՝ որ կեայ միշտ ընդ պոռնիկս և ընդ շուն։ Եվ ՝ի զի համարս պահանջէ տէր ամենայն բարեաց և գողից եկեղեցւոյ, եթէ չարաչար վատնեացեն շուայլ աւելորդութեամբ։

Սատանիկ են բանքս, և ահաւոր, Եղբարք՝ զոր և մեք մեզէն իսկ գիտեմք, եթէ բարւոք նկատեսցուք: Լկայք ապա 'ի չափուսորուի բերցուք զշուայլ ջարաչար վարուին. բարեզգեաց հնորհափայլութիւն է մեր հանդերձ զարդու. մի՛ խենեշացուք 'ի ցեցահար դիպակս, և մի՛ պատրաստեսցուք զհոգի մեր և զմարմին կերակուրորդանց և ցեցոց: Բանն այէ մեր կերակուր համադամ, և ուղիղ մատակարարուի պաշամանն մերոյ. զպարկեշտ յարդարուածս մերս սեղանոյ՝ յորում զքրիստոս ունիմք սեղանակից, մի՛ դարձուսցուք 'ի կոչունս հեթեանոսաց: Լմենապարզ մաքրութեան կաթն սուրբ ճծաձնին է մեզ սննդարար հոգւով և մարմնով. մի՛ յօժարեսցուք յարբուին 'ի պղտորս ջուր գետոյն եգիպտոսի. զի որ զովանալ խնդրէ 'ի գետոնէ, պապակեալ տապի 'ի գեհենի: Բարձումն խաչին քրիստոսի է մեր կոչմանն նպատակ, մի՛ անկարգասցուք աշտանակել յերիվարս և 'ի կիսէշս զարդարունս: Ալ ման զի՝ զիարդ կարասցէ ուղիղ տանել ոք զսկօս, յորժամ 'ի վերայ նստեալ ուղտու մաճակալէ. կամ որպէս 'ի սեղանոյ տեառն վայելեսցէ, որ խորակաճաշ յղկութեամբ շուայլ պարարի. կամ զիարդ 'ի հարանարան երկնաւոր փեսային մտանել արժանասցի, որ ապականացու զգեստուցն փայլուածով նսեմութիւն զգեղեցիկ երանգաւ հանիստութեան համակ արկանէ: Շ ուշանասիպ է մեր երանգ պայծառութեան՝ որով և սաղով

մոն անգամ չկարաց պաճուճիլ, 'ի նոյն մեաս-
ցուք յաւէտ հաստատուն, զի յերևիլ սեռն
մերոյ արիւնակերպ փայլեսցուք յարքայու-
թեան երկնից: Քարձրագոյն ևս գերափայլէ
զքեղուութի մերս վիճակի 'ի գծուած խոնարհու-
թեան. յայնմ կաւուսցուք պարզապէս զբաղ-
ձանս պճնասիրութեան, որ վայելուչ իմն 'ի
կերպարանս քրիստոսի զմեզ համակերպեալ՝ ան-
զրաւական նորա փառաց ժառանգս կացուցա-
նէ, որ համայն շքեղութեանց է պանծագոյն:

Պ. ԼՈՒԻ ԷՕՆԷՊՈՍԷՐՈՐԴ:
Թէ զի՞նչ պարտաւորութիւն է ուսնողաց զէկեղեցական
հասոյնս:

Եկեղեցական հասոյթքն են մշանջենաւոր ի-
րաւունք ինչ, որով առնու ոք զպատուս յե-
կեղեցական բարեաց վասն հոգևոր ինչ պաշ-
տաման հաստատելոյ իշխանութեամբ եկեղե-
ցւոյ: Յայսպիսի որոշ սահմանադրութեամբ
կարգեալ եկամուտս թէպէտ և ոչ վայելեն
այժմեան մերս քահանայք, այլ 'ի կամաւորական
նուէրս ժողովրդոց. յորոց էբրու պատուղ ինչ
հոգևոր մշակութեան իւրեանց ընկալեալ՝ 'ի
պիտոյս կեցութեան իւրեանց ընտանեացն մա-
տուցանեն, սակայն գոյ և յայսմ յանցանել,
երբեմն ներելի և երբեմն մահուաւ ևս: Բան-
զի արդա՛րև բնական և աստուածային օրէնք
են, զի որք խաչնարածք են՝ 'ի կաթանէ խաչանցն

ուսեն ըստ պողոսի. «Ա. կորն». Թ. 7։ Այլ ոչք
'ի տաճարին գործեն, 'ի տաճարէ անտի ճաշակեն
և պաշտօնեայքն սեղանոյ 'ի սեղանոյ անտի
վայելեն. սակայն եթէ ոչ 'ի պատճառս շահու
և վարձու, կամ վասն պատուոյ և անարգութեան, և կամ հարստութեան ինչ ախտիւ ա-
գահօրէն ապայեալ մատչի 'ի սեղան, կամ
մուծանէ զանձն 'ի կարգ քահանայութեան,
որբապիղծ է և չար։ Սոքա են աւազակ. զորս
տէրն մեր ոչ հովիւս ոչխարաց, այլ վարձկանս
անուանէ։ Այսոքիկ են, որք անձամբ զանձինս
յառաջ մատուցանեն. և ոչ յաստուծոյ 'ի նոյն
կոչումն հրաւիրեալ գան։

Այլ յիրաւի. քանզի եթէ չկայր նոցա այնպիսի
ինն պատճառ յորդորիչ 'ի նոյն, ապաքէն և
հայիլ անգամ չկամէին 'ի պաշտօն եկեղեցա-
կան յաստուածապաշտիկ ինն. ջերմեռանդու-
թենէ, որպէս և տեսանեմք 'ի հասարակի։
Զինչ վախճան քահանայութեան կամ այլ
եկեղեցական աստիճանաց, բայց եթէ պաշտօն
աստուծոյ, և ըստ ուղղութեան կառավարութի
հոգևորական պաշտամանց։ Այլ զի՞նչ ոչ մեղան-
չեսցէ, որ 'ի կերակուրս և 'ի հանդերձս, 'ի
փառաւորութիւն և 'ի շահ անձին դարցուցա-
նէ զքահանայութիւնն իբրու զաշխարհային ինն
գործ կամ արուեստ համարելով։

Սեղանչեն և, որք զանգին և զաստուածային

ջնորհաց մատակարարուին իբրու ճիշտ իմն հա-
կարկուութեամբ նուաստացուցանեն, այսքան և
այնքան խստիւ պահանջելով, և ոչ բաւական
համարին, զոր ջերմեռանդութիւն ժողովրդոցն
ինքնակամ 'ի պէտս նոցա մատակարարէ։ Զ ի որ
ջերմեռանդութեամբն ժողովրդեան յաղուրդ
կերակրի, յաւելուարանէն կեայ, զոր ամէն հրա-
մայեաց. իսկ որ բռնի իմն խաստուբ 'ի կեղե-
քուումն բերի, զժողովուրդ տեառն ուստէ ոչ կե-
րակուր հացի, և առ ամէր ոչ կարդայ։ Ա՛յ և
անդանօր յաւէտ պարտի պակնուլ երկիւղիւ,
ուր չհամարիգոլ երկիւղ. անշուշտ գիտասցէ,
զի ամէր՝ որ է յաղգս արդարոց, նոյն ինքն ցրուէ
զոսկերս մարդահաճոյից։ Ա՛'ի թիւրեսցէ զնպա-
տակ պաշտաման իւրոյ, մի՛ աղարտեսցէ զվախ-
ճանն կոչման, և մի՛ չարաչար մոլորեցն և ան-
յաւգ զօշաքաղութեան ախտիւ ապականեսցէ
զարբութիւն իրաւանց իւրոց. ապա թէ ոչ՝ 'ի
զեղծումն ստուաածադիր ուղղութեանն բերեալ
ամաչէ և յամօթ լինի ասա և 'ի հանդերձեալն.
զի ստուաած անարգէ զնտ ըստ դաւթի։

Ա՛պա զանասցուք եղբարք՝ զբերել յանձինս
յայնպիսի արատաւոր յոռութեանցն. և զոր ինչ
ընդունիմք 'ի կրօնասիրութենէ ժողովրդոցն
արդիւնս նուիրաց, պարկեշտութիւն մատուս-
ցուք 'ի համեստ պիտոյս մեր և ընտանեաց մերոց՝
առանց աւելորդ շռայլութեան և կծծի ժլա-
տութեան. զի և այս 'ի յանցանս է մեզ. զրկել

զընտանիս, զի դրան կուտեսցուք։ Ա՛ռդիւնք մեր եկամտից թէպէտ կամ առ կամ թողթոր, սակայն անընդհատ մշտահոսութեամբ ըստ իւրոյն եղիսէի գերազանցէ քան զամենայն շահավաճառութեան յորձանս հեղեղատիպ շահուց աշխարհի։ Ո՛չ բաղուսին պարապոյ մեր մի՛այն ասուածայինքն լեցին, և այլ ամենայն յաւելու մեզ՝ի յերկնաւորն հօրէ, որ առաւել ևս գիտէ և տայ զմեր կարեացն պիտոյս՝ քան զոր խնդրեմք և իմանամք։ Ա՛յս ճառ ըստ սահմանին իւրոյ առաւել ևս եպիսկոպոսաց, կամ այլոց ևս՝ որք մատակարարքք են կացեալ արդեանց եկեղեցւոյ, ՝ի դէպ եկանէ. և կամ այնոցիկ՝ որք արդեանցն վանօրէից և այլն՝ կարգին ժողովարար՝ ՝ի դարման աշխարհուրայ աղքատացեալոյ. թէպէտ և զորինչ ասացաք յաղագս քահանայից ստոյգ են ամենեքին և անդիմադրելիք։ Ա՛ռ ան այնորիկ ամ՝ իրօք պարտաւորին եպիսկոպոսք, զի զհատս եկեղեցւոյ և զեկամուտս նորա ըստ կանոնեալ իրաւանցն պաշտպանել և պահպանել և ըստ հրամանաց իրաւանցն մատակարարել. ապա թէ ոչ՝ ծանուցեն։ Ա՛ռ ան զի՝ որպէս առաքելական կանոնքն արգելուին, նոյնպէս և սուրբն խահակ պարթևաղնեայ մեր հայրապետ ժողովս գումարեալ ՝ի վաղարշապատ՝ համահաճ հաւանութեամբ ամենեցուն արգել և փակեաց եպիսկոպոսաց զտուրս եկեղեցւոյ ծախելոյ յընդունայն. կամ տալ աղգականաց, կամ ընծայել իշխանաց

առ շնորհս գտանելոյ։ և այլն։ Զի զոռուրտ ե-
կեղեցւոյ միայն 'ի պէտս եկեղեցւոյ և եկե-
ղեցականց որբոց և այրեաց և կարօտելոցն ծա-
խել պարտաւորին, և ոչ յայլ պէտս։նա՝ և ոչ
յանկարգ վատնումն 'ի վայելս անձանց։

Զ նոյն է ասել և վասն առաջնորդաց վանաց,
որք մահուանչափ մեղանչեն՝ եթէ զարդիւնս վա-
նիցն ոչ 'ի պէտս շինուածոց նորին, կամ 'ի պատ-
շաճաւոր հանդերձս միաբնուածոց, այլ յաւելորդ
պէտս իւրեանց կամ իւրեանցայոց վատնեն չարա-
չար։Սոքա են, որք զսեղանս կողոպտեն։որք քա-
ղոցեն չգողանալ, գողանան։Սոքա են, որք ա-
գահուք մոռացածին բանիւք առնեն վտարան-
դի զմիաբանութիւնն, որոց դատաստանն 'ի բնէ
ոչ դատարկանայ, և կորուսան ոչ նիրհեսցէ։ է։
պետր։ է։3։Յայսպիսեաց ապաքէն աղաւաղին
կարգք և կանոնք։և յաճախեն 'ի վանականս բազ-
մատեսակ անկարգութիւք, շատաշրջիկ թափառիլ
յաշխարհի։և ուրեմն պաշտելոյ զկարգն 'ի յոգնա-
զան վատթարութիս անկարգանալ 'ի գայթակ-
ղութի հասարակ ժողովրդեան։Զոր որ մեծն է, 'ի
յուսահատութիւն կիրս ըմբռնեալ 'ի թագաւո-
րելոյ ախտին, զկարգն անարգեն բաղմապատիկ
հայհոյութեամբ, որպէս և տեսեալ եմք բազ-
միցս։

Սոքին պարտաւորին և այնոքիկ, որ մատակա-
բար կարգեալ են արդեանցն և ընչից եկեղե-
ցեաց և վանօրէից, եթէ ոչ ուղիղ մատակա-

բարեսցեն, և առանց ակնառութեան կամ շը-
ռայլ վատնողութեան։ Այլ կամ ախորժեսցին
ուտելն տալ և զոմն զրկել. և կամ որ 'ի պէ-
տքս հասարակութեան է կարգեալ, յաւելը-
դական հաճոյս իւրեանց վատնել. արդարև զը-
կողութիւն է չարաչար, և պարտաւոր առնէ
զայնպիսիսն հասարակացն իրաւանց, որպէս և
յայտ է։

Այնպէս է և առաւել ևս, յորժամ կար-
գեալքն 'ի պաշտօն հաւաքելոյ զարդիւնս եկե-
ղեցեաց և վանօրէից՝ գողութեամբ պահեսցեն
ինչ վասն իւրեանց, զի շճգրտիւ անտնօրինելի
գողութիւն զի է արտաքոյ կամաց առաջնորդին և
այլոց վերակացուաց. յորոց կարգեալ է ապա-
քէն առանձին տուրք տասանորդաց, և կամ
այլ կերպիւ յաղագս այնց՝ փոխանակ աշխա-
տուեն։ Լաստի և որք յայսմ ագահեն, ոչ ընդ-
հատ ինչ գործեն յայնմանէ, զոր անանիա և
սաֆիրայ գործեցին, ստելով հոգւոյն սրբոյ։
Այա՝ մանաւանդ և ծանրագոյն իսկ. զի նոքա
յիւրեանց ընչից խորեցին. իսկ սոքա զինչս հա-
սարակաց ագահաբար գողանան։

Պատպարտ է ամենեցուն յայսպիսեաց զգաս-
տանալ, և աչալուրջ տքնել 'ի պաշտաման իւր-
եանց. զի մի' անիրաւութեան ախտիւ զեղծանի-
ցին, պարտաւորեալ ամենայնիւ այն մարդկան։
Օ՜ ինչ պատասխանի ընկալաւ պետրոս, յոր-
ժամ եհարց. տե՛ առ մեզ ասացեր զառակդ

զայդ,թէ առ ամենեսեան։Ա՛վ ի՜նչ հաւատա-
ցիմ՝ տնտես և իմաստուն, զոր կացոյց տէր իւր՝ի
վերայ գերդաստանի իւրոյ տալ՝ի ժամու ըզ-
կերակուրս։և երանէ զայնպիսին։Իսկ որ հար-
կանել զծառայսն, ուտել, ըմպել և զմաստա-
կարարութիւն պաշտաման ուղիղ չտնտեսել
յանդգնեցաւ, զընդ մէջ կարելն նմա սպառնայ
և զմասն նո՛ր ընդ անհաւատսն դնել։որ կորոյս
զարդարութի՛ւն, ժխտեաց իրաւանց և մերժեաց
զօրէնս ա՜յ՝ առուտն հարկանելով զկանոնս։

Զ։տանին բաղում վկայութի՛ւք հարցն առաջնոց
՝ի վերայ այսր նիւթոյ։զի Թովմայ աքուինացին
ասէ։կղերիկոսք ո՛չ են իսկական տեարք ըն-
ջիցն եկեղեցւոյ,այլ միայն մատակարարք և տը-
նօրէնք։Ցոյնպէս և հերոնիմոս։աղքատաց է
ասէ ամենայն՝ զոր ինչ ունին կղերիկոսք,և վա՜
յնորիկ հոգ տարցեն այնմ՝ առաքելապէս,տալ
՝ի տասանորդաց և՝ի պաղոց որքան և կարեն՝
՝ի պէտս հիւանդաց և հիւրանոցաց։Զարձեալ
ասէ։յաւանդուէ՛ սէ՜ց հարցն ուսաք, զի գոյքն
եկեղեցւոյ են ուխտք հաւատացելոց,գինք մե-
ղաց և հայրենի թոշակք և ինչք աղքատաց։Ա՜ւ
և՛ս կղերիկոսք՝ որք գոյիւք ծնողաց իւրեանց
կարեն կեալ, սրբապղծութիս գործեն, եթէ
առցեն ինչ՝ի գոյիցն աղքատաց։Ա՜ն ամբոխ-
սիոս ասէ։աղքատաց է այն ա՜մ, զոր ունիմ։
Ա՜յլ կրատիանոս զայս կանոն առաջի եդեալ ա-
սէ ահաւոր բանիւ։Ա՜պիսկոպոս որ՝ եթէ՝ի

փափիկութիւն իւր և յունայն վատնողութիւն կեղեքել կամեսցի զինչս եկեղեցւոյ, և կամ մեր-ձաւորաց և աղգականաց տացէ, հարկաւ պար-տաւոր լինի դատաստանի։ Այս դարձեալ ասէ. եթէ ոք այլ աղգ արասցէ (քան զկանոնեալսն) զգոյշ լիցի, մի՛ գուցէ զպատիժ դատապար-տութեն անանիայ և սափիրայի ընկալցի. պար-տաւոր գտեալ սրբոց օրինաց և կանոնաց իբրև զնոսա, որք խորեցին զինչս աղքատաց։

Այլ ասիցէ Թերևս ոք յեպիսկոպոսաց, եթէ աղգականքն կարօտ իցեն հարկաւոր պիտոյիցն, ոչ տալի է արդեօք այնպիսեացն։ Օ՛ իզանին այդմ կանոնք. որոց տալ պարտ է, ոչ իբրև աղ-գականաց, այլ իբրև աղքատաց. զի եկեղեցին շահեմարան է աղքատաց։ Կանոնքն արգելուն, զի եպիսկոպոսք մի՛ ջանացին հարստացուցա-նել զաղգականս իւրեանց ընչիւք եկեղեցւոյ. և զթոշակս աղքատաց անիրաւաբար տացեն այնց, որք կարօղ են հնարել զապրուստս վայելչակնս։

Զ. ԼՈՒԽ ՈՒՆԻ Ի ՊԱՆԷՐԹՐԴ։

Թէ ցանկուի պապուայ և իշխանուէ՝ զէջիմոնն է եկեղ-ցականաց։

Զ՚ինք ուրեք չի՛նք երբէք այնպիսի վնասակար և սպականիչ բարեկարգութեան և վարուց եկե-ղեցականաց քան զցանկութիւն պատուոյ և իշ-

խանութեան։ և ոչինչ էր այնպէս վեր 'ի վայր տապալէ զեկեղեցական իրացն կառավարութի, որպէս ունիլ զբաղձանս մեծարանաց և ինչանութեան յայնպիսի կարգաւորութիւն՝ յորում, որք մեծքն են և բարձրագոյնք՝ պարտաւորին 'ի կրաւերութեան և 'ի սպասաւորութեան կալ կարգի, որպէս ասէ տէրն մեր յ՚ քս։ Բանզի եթէ բարձրութիւնն աստիճանի եկեղեցական դասուց զսիրտ սբ և զհոգի խոնարհ խնդրէ ամենևին, զինարդ հաստատուն կացցէ 'ի բարեկենդանութեան ուղիղ և անատերիւր կարգաւորութեանն, յորժամ զբք փառամոլք և ամբարտաւանք պատուասիրութեան հոգւով 'ի նոյն մերձենան։ ոչ այլ ինչ ունելով դիտաւորութիւն, քան ինչսել և փառաւորիլ, և 'ի մարդկանէ ռաբբի անուանիլ՝ որ արդարև եղծումն է գովութեանն Աստուծոյ։

() Չարաչար սորա վնասակարութի և զապականագործ աւելածուի զհամբրէն բարեկարգութեամբք՝ բազմիցս լուեալ եմք և ընթերցեալ, և տեսանեմք իսկ հանապազ, 'ի ծայրագոյն աստիճանէ սկսեալ մինչև 'ի խոնարհ, յոր անուղղայ խորհրդով մերձեցեալ ոմանց՝ վեր 'ի վայր արարին զամենայն բարեձևութիւն, յաղարտ վարեցին զբովանդակ հիմունս բարեշաւութեան։ և լցին զամ դժնդակ վատթարութեամբ զաշխարհ ամենայն։

Այեւոյ յառաջին նախահայրն ամբարտաւանեաց, որ հպարտ պատուասիրութեամբ յանձնական եղանեալ պատուոյ բարձրութիւն ըմբռնայանդգնեալ՝ թէպէտ և յաստուածասասան բարկութէ արդար վրէժխնդրութեամբ առաքագրեալ յերկնից խակոյն թօթափեցաւ, սակայն յամառութիւն կամաց նորա 'ի նոյն խրատութեան ոչ զգաստացաւ, այլ եւս քան զեւս 'ի նոյն բորբոքեալ կամակորութեամբ յախտ պատուասիրութեան՝ բազմացոյց զաստուածս 'ի յերկրի ըստ իւրաքանչիւր երկրայնոցն ախորժակաց, և եղեւ զաշխարհ ապականեալ անձածութեամբ։ Զի բազմութիւն աստուածոց բարձուն է ամենայն աստուածոց ըստ ասելոյ սրբոյն աթանասի 'ի ճառն ընդդէմ կռոց, և հիմն ապականութեան վարուց և գնայից, և վերջինն ամենայն չարութեանց։

Պարտացան դադան և աբիրոն 'ի վեր մոլեսի, և առ փառասիրութեան 'ի բարձրագոյն եւս պատիւ քան յոր կոչեցեալն էին յաստուածոյ վերանալ կամեցան հոգւով ամբարտաւանութեան։ Այլ ահա ինձ զնորանշան կատարածնոցուն յանդգնութիւն. եբաց երկիր զբերան, և ընկղմեաց զամենեսին 'ի յատակս դժոխոց։ Պատիժն վաղաժամանակաւ ասասիկ զեռմ չարաչար զեղծումն, որով վարակել ունէին զընտրեալ ժողովուրդն ըստ պարակոնոն իւրեանց գուռողութեան։

Սատոգ և աններելի է դատաստանն այս յայնպիսեացն վերայ, սակայն երբեմն առ 'ի պատիժ մեր Թոյլ տայ այնպիսեացն յառաջ մատչիլ յատուկան ինչ հոգւոյվ փառասիրութեան, և պատճառ գայթագղութեան և պէսպէս անկարգութիւն լինիլ։ Զորոց յիրաւի է բաղձալ բարեսիրաց, և զպողոսին ասել. գաղատ. Ե. 12։ Զրանի Թէ մեծակտուրք իսկ լինէին մերս խնդրելովքը, որ զաշատութիւնն քրիստոնէական 'ի ծառայութիւն պատուասիրութեան համակ շղթայեալ՝ յամ անտեղիս և յանկանոնս անխիղճ ինն մինն, միայն զի զանցաւոր պատիւ ստացին, զոր արդարև անարգութի պարտ է անուանել և ոչ պատիւ։ Այլ զի 'ի վերուստ անտի կարգեսցուք ինչանել 'ի խոնարհութէպէս և յանդգնութեան բերել ցոյց. այլ սակայն և այնպէս յառաջ բերել ըստ կարգի զբեղծմունս ոչինչ վերհերոտիմ, զի ոչ 'ի նախատինս դիմէ կարգ սոյն գրութեան, այլ յաւէտ իսկ 'ի բոլորուն ճառիս և 'ի յայտնութի ճշմարտութեան, առ հասարակս ունելով բանին զդիտաւորութիւն։ Զանաւանդ զի զչարաչար զեղծումն բարձրագունին յեկեղեցականս, մայր չարեաց անուանէ սքն ներսէս շնորհալին. և կարի սատիկ և ծանր բառից կշտամբութեան նախատէ. և էր սակն արդեօք, վասն զի յապականել զլեսոյն՝ ապականի իսկոյն և բոլոր մարմին։ Զի եթէ բարեկարգութեան շնորհացն զեղմունք նմանատիպ ահարհնեան իւղոյն յամենայն

անդամն գետահետեն, և բարեձև յարդարուն
ճոխութեամբ զնոսա զամենեսին հարուստ բար-
գաւաճեն. ապա և չարաղեղծ վատթարութիւ
ապականագործ հրոյ օրինակաւ յամենայն ան-
դամն ճարակեալ խահրեալ խանձատեն զամե-
նայն կարգաւոր ուղղութիւն վայելուչ կա-
ցութեան: Այդ՝ լսես զի բարձրաստիճան պա-
տիւ է հայրապետութիւն, և յայն ձկտիս տեն-
չանօք պատուոյ. փաղփիւն մարմնաւոր շքեղութե,
բարձրութիւն իշխանական հրամայողութեան,
ընդունելութիւն բազմազան յարգանաց՝ ի ըս-
տորակայից, և մանաւանդ բաղձումն աստուածա-
նալոյ յոչ օրինաւորսն՝ ձգեն զքեզ՝ ի դրուն
մարմնաւոր պետութեանց. կամարաձև խոնար-
հեցուցանեն զքոյդ պարանոց՝ ի հաւանութիւն
ամենայն առաջադրութեանց նոցին. ոսկեբուղխ
աղբիւրս յարդարեն զիւրաքանչիւր մատուանդ
ի յագուրդ նոցուն անյագութեան. բարդա-
բարդ տրցակս փինջեն գաւազանաց՝ ի հարուած
չընդունողաց. գործել տան և զանասելիս, ոչ
զի հասցես որում ըղձանաս: Այլ սթափեա՛ց՝ ի
պատուամոլ յիմարութէդ, և տես զի՞նչ գոր-
ծես: Ոչ ժնդակ է, դժնդակ է այս ախտ ապա-
քէն, այլ սակայն և այնպէս գտանին տենչանօք
իմն հետևողք: Այս է, որ բազմացոյց զաթոռ-
ոն, և բազմագլուխ արար զմի ազգ. այս է՝ որ
զանազան անկարգութեանց եբաց դուռն. այս
ախտ է՝ որ փակէ զբերանս գողուղի շաւղաք՝ ի
նոյն ամբարձելոց չլինիլ վրէժինդիր օրինացն

Աստուծոյ։

Ասելով լսես զասել առաքելոյն։ Ա։ տիմ՝։ գ։ 1։ Որ եպիսկոպոսութեան ցանկայ, բարւոյ գործոյ ցանկայ։ և ոչ յառաջ մատուցանես զկարդացումն, թէ պարտ է եպսին լինել հեզ, ցած, պարկեշտ, անարատ, հիւրասէր, ուսուցիչ, մի՝ թշնամանող, մի՝ հարկանող, այլ հանդարտ։ մի՝ կռուող, մի՝ արծաթասէր, մի՝ մատաղատունկ, և այլն։ նոյնպէս և յարտաքնոցն իսկ վկայեալ՝ ի բարութիւն։ Այլ զինչ՝ ի պատուոյն միայն մոլեալ՝ ի ճոխութիւն՝ եռանդեամբ՝ ի նոյն թեւակոխես։ աղաչաւորս յարդարես՝ չածելով զմնաւ զծանրութիւնն պաշտաման, որ ովկիանեան է հոգոց և զբաղմանց, և անդունդ ի մեր տարժանաւոր երկանց և աշխատութեանց։ որպէս Յովհան ոսկեբերան։ բարեկարգութիւն եկեղեցւոյ և յարդարումն ժողովրդեան՝ ի բարեվայելուչ կրօնս ուղղութեան, է ապաքէն վախճան եպիսկոպոսութեան։ Մնուտ վարժութիւն յայնպիսիս, և անխոնջ աշխատութիւն՝ ի գործածումն անաչառապէս իւրումն պաշտաման՝ պակ է եպիսկոպոսի, զորս առանց զանցառութեան ունիլ և կատարել պարտաւոր է անդժրելի ուխտիւք։

Եկեղեցին հարան է եպիսկոպոսի, զոր թէ ոչ ըստ կանոնացն կառավարել փոյթ կալցի, և նա իբրու անխնամ լքեալ, յայլաձևութիւնս գայցէ՝ ի ձեռն անզգոյշ կառավարչաց ստորակարգելոց, նա ինքն եպիսկոպոսն տայ նմա շնալ։

Լսուր, զինչ ասէ սուրբն Ներսէս Շնորհալին։
,, Որք զառաջինն ընկալան 'ի քահէ զգործ ե-
,, պիսկոպոսութեան դասք առաքելոցն, այս-
,, պէս արարին ինքեանք, և ուսուցին հետևո-
,, ղաց իւրենց նովին օրինակիւ վարել։ Իսկ այժ-
,, մու թշուառութեան ժամանակիս այնքան
,, հեռացաք 'ի բարւոյ նոցին նմանուէ, մինչ
,, զի ոչ այլ ինչ գործոյ պատճառ գիտեալ զե-
,, պիսկոպոսուին, բայց միայն զանուշան հնա-
,, ւիւք ինչս ժողովել 'ի հնազանդելոց, և փա-
,, ռաս որսալ 'ի փառաւորութիւն, զոր անար-
,, գանս պարտ է ասել, և ոչ փառս։

Սոքա են՝ ահաւասիկ, որք ոչ 'ի փառս Աստ-
ուծոյ, այլ 'ի փառս անձանց զնոցն պտիւ ստա-
նալ ջանան. և անփոյթ առնեն զբարեկարգու-
թեամբն եկեղեցւոյ առ մարմնոյ դիւրութիւն, և ն։

Լսես զճոխաճաղիկ փառաւորութիւն վար-
դապետական գաւազանին, և զայնր թեկն ա-
ծես. այլ մի՛ պատրեսցէ զքեզ փայլիւն ար-
ժանապատուութեան, և մի՛ յօժարեսցիս մի-
այն 'ի շքեղութիւն անուան։

Բազմաւորձ հետաքննութիւք քննեա՛ զանձն, և
ապա մասի՛ր յաստիճանն. զի բարեպատուղ բար-
գաւաճեսցես զքոյդ գաւազան։

Ասի՛ր զգիտուին սուրբ՝ ողջամիտ յստակութիւն.

մասեան Լ՚ծաշունչ կազմեա զքո միաս, ամբա-
ղեալ 'ի նմա զամենայն պատուիրանացն տեղե-
կութիւն:

Լ՚ուսաջնորդ կարգեցար հօտին քո՚ի շաւիղս հա-
ւատոց, քննեա և տեղեկացիր որոգայթաւոր բա-
նից թիւրելոց. զի մի՚ ընդ ոգիս առաջնոր-
դելոցն 'ի խորխորատ անկանիցիս: Պերահրաշ
իմաստուն զծնօտս քո տաշտս ինկոց անուանէ
յերգս անդր իւրում՝, անաշխատ ինն վարժեա
զանձն յորոճումն իմաստից գրոց, և չափաւոր
պարզութեամբ մատո՚ի բերան մանկանցն եկե-
ղեցւոյ, որոյ փառաւոր առնիցես զպաշտօնքս:
Լ՚պա թէ միայն 'ի պատիւ և 'ի դիւրութիւն
զկամսդ ձկտեցուսցես, չարաչար խոտորիս. և
ոչ անձին միայն՝ այլ և ամենեցուն բերես ըզ-
փնաս: Զ՚ինչ օգուտ է կոչիլ ռաբբի ռաբբի,
և ոնայն 'ի պտղոցն մնալ անուռն: Զ՚ինչ շահ
մատուսցեն քեզ զբօսանք 'ի բուրաստանս, եթէ
ոչ վառեսցիս անխոնջ ջանասիրութեամբ 'ի կա-
տարումն դաշինդ:

Զ՚ինչ լուսաւորութիւն մտաց արդինաւո-
րեսցէ կուտակումն բեռնաբեռն գրոց, յոր-
ժամ իբրև զքարակոյտս հաւաքեալ զքեզ՝ ննջես
'ի միջի, իբրև զսիրամարդ յոսկեթել պարուն-
կըս գրային փեսորոց բարձրավզեալ:

Լ՚ուր, զինչ ասէ սարգիս շնորհալի զայնպիս

վարդապետացն։ ,,Ծոյլ եմք յուսանիլ, և փոյթ
,, ի վարդապետել։ Հեղգ առ ի յընթեռնուլ,
,, և արագ առ իմաստասիրել։ և ի վե՛ր այսոցիկ
,, պղերգուեցեալ գիրս ժողովեմք, ոչ յընթեռ-
,, նուլ և ի քննել զնա՛ ըստ տո՛ն պատուիրանի,
,, խոկալ ի նա՛, և իմանալ զբանս հանճարոյ,
,, և զճառս իմաստնոց և զառակս նոց, այլ՝ ա-
,, նուան սակս և մեծութե՛ն։ ոչինչ շահեալք ի
,, նոցանէ, այլ՝ առաւել ևս դատապարտեալք։
,, վա՛ զի կամ բնաւ ոչ ընթեռնումք զնոսա՝ և
,, կամ ետ ընթեռնումք, ոչինչ օգտիմք։
Օ՜ այսպիսի բանս ի բազում տեղիս յեղյեղէ,
վշտացեալ ընդ ծուլութիս նոցա։ Ա՛պա՝ որ զգօնն
է և երկիւղած, կամ բնաւ ո՛չ կամի յանձն առ-
նուլ, և կամ ետ յանձն առցէ, ա՛մ փութով
գուն գործէ չարատել զաստիճան իւր ի կո-
րուստ և ի գայթագղութի հօտին քրիստոսի։

Բ՛այց եկ ինձ ասասնօր տեսանել զվանգ չա-
րեաց դասուց քահանայից։ Հարց ինձ, առ ինչ
յայդ աստիճան պատուոյ յօժարեցար, վա՛ փա-
ռաց անձին, վասն տէր տէր անուանելոյ և
բարձրագահս բազմելոյ, վասն զձեռադ արդեօք
տալոյ համբուրել փափկագոյն շրթանց։ կո-
րեա՛ր, կորեա՛ր։ և դարձեալ ասեմ, կորեա՛ր խս-
կապէս։ ետ զայդ, և զոր նման են այդմիկ՝
պաշտաման քո դիցես նպատակ։ Օ՜ գոյշ լեր
ո՛վ դու, որ յանձն առնուլ զայդ վիճակ յօ-
ժարեցար, զի զարիւն ժողովրդոցն ի քէն պա-

հանջէ անուշաւ հովուապետան։ Հայր կարգեցար ժողովրդեանն, զորայիր 'ի խնամս. բժիշկ կացուցար ախտացեալոյն, պարտական ես գիտել զորպիսութիւն հիւանդութեան, զկարողութիւն հիւանդին և զներգործութիւն դարմանացն։ Կերակրիչ եղար ամենայն հասակի, առատալիր կաղմեա զշտեմարան մտացդ ամենայն հոգևոր կերակրովք։ Ծածկարան գաղտնեացն յարմարեցար ամենայն հօտին, և անձին անգամ մի՛ հաւատացես բանալ զայն խոկմամբ։ Զ ըջեաց հանապազ յայցելութիւն ո՛չ առ 'ի սնունդ քումդ դատարկութեան, այլ 'ի կաղդուրումն տկարամտութեան՝ որոց կայցել ես տեսուչ։ Յօսեա՛ անդադար ուր և երթիցես, ո՛չ զօղանջանս ունայնաբանութե՛ն, այլ խրատս զգօնութեան։ Ա՛ռ 'ի փրկութիւն հոգւոյ կենդանեաց և մեռելոց զքրիստոս պատարագես, զոյ՛ր ամենայնիւ լիցիս յայնցանէ, որք ո՛չ վայել են այնր բարձրութե՛ն. և սատակապահանջ իմն պարտս վարկջիր զամենայն՝ զոր կարգեալ են նախահարք 'ի մատակարարութի՛ նորա։ Ոչ աղատէ զքեզ 'ի դատապարտութենէ կոչումն տէրտէրական, այլ առաւել ևս պարտաւորէ. վայ է մարդոյն, որոյ անունն մեծ լիցէ քան զգործն. սասցեալ է։ Ընթերցիր զվարս ընտիր քահանայիցն, և ըստ այնմ յարդարեա՛ զքեզ. որպէս զի լիցի՛ քեզ զերծանիլ յանվերջ պատժոցն խստագունից, որ պահեալ է քեզ։

Լա՝ որք զիորձ առին ծանրագոյն վշտաց ընդ եկեղեցականացն պատուով պարունակելոց, թէպէտ սուրբք և անստգտանելիք, սակայն տես զինչ ասեն։ Սուրբն Յովհան ոսկեբերան ասէ։ Այն ինչ զարմացեալ՝ մտայոյզ լինիմ 'ի սրտի, թէ կարիցէ՞ առաջնորդ ոք կամ կառավարիչ արդեօք հասանիլ փրկութեան՝ տեսանեմ անդ ընդ տակաւին զոմանս, զի յօժարութեամբ դիմեն առ այնքան ծանր և դժուարին կառավարութիւն, և 'ի խորս անդերծ դատապարտութեան զանձինս գահավիժեն։

Լա՛ սուրբն Գրիգոր Աստուածաբան. ո՛չ ոք ասէ յիմաստնոց ուրախութեամբ և զուարթ սրտիւ եպիսկոպոս լինել ցանկայ, եթէ զմտաւ ածեալ խորհեսցի զայն ամենայն վտանգս և զտանջանս՝ որ ընդառաջ եղանեն նմա։ Ա՜ այնորիկ յիմար է համարեալ զնա, որ մինչ ընդ հարթայատակ ճանապարհն գնալ կարօղ է, 'ի բազմավտանգ և յանձուկ տեղիս անվերջ տուժանօք զինքն ածեալ մուծանէ։

Յաղագս Ներսիսեանց որ հանդիպին 'ի Տպաուցման սրբոյ պատարագին։

Պրակ ՟։

Լորհուրդ սոսկալի սուրբ պատարագին ըստ ամենաբարձր իւր գերակայութեան զամենայ

նիւ զկատարեալ իմն պահանջէ ունել ամբողջութիւն յամենայն կողմանէ։ վասն այնորիկ հարկաւոր են մատակարարքն ամենազգաստ արթնութեամբ փոյթ յանձին ունել, զի մի՝ թերութիւն ինչ կամ արատ պակասաւորութիւն ըզմաքրագործ շնորհս նորա նուազեցուցէ, կամ խապառ խափանեսցէ։ Վասն զի յանհոգութէ տարտամ պաշտօնէիցս այսմ խորհրդոյ բազմապատիկ պակասութիւք հանդիպին։ որոց ոմանք են և յառաջ գան 'ի կողմանէ նիւթոյն, ոմանք 'ի կողմանէ տեսական բանին և դիտաւորութեան մատուցողին, և ոմանք 'ի կողմանէ կատարիչ պաշտօնէին։ Յորոց երթէ մի ինչ պակասեսցի, անկատար մնայ խորհուրդ պատարագին։ Բայց 'ի լինել այսոցիկ էութենականաց, թէ և այլք ոմանք պակասեսցին՝ գոյ անդանօր ճշմարտութիւն խորհրդոյ, և իսկապէս կատարի։ զի այնպիսիք 'ի զարդ և 'ի յարգութիւն սահմանեալ են նոցա պատարագին, և չեն էականք։ Ուստի թէպէտ և ոչ լինին խափանարարք կատարման, սակայն լինին 'ի յանցանս անզգոյշ պատարագողաց, կամ 'ի գայթագղութիւն ժողովրդեան։ որպէս ունիս տեսանել 'ի յաջորդ պրկան։ Յաղագս որոյ ամենայն աչալուրջ մտօք և արթուն խորհրդով պտրտ է հայիլ այնմ և նախահոգալ, որ հանդերձելն է զքրիստոս պատարագել։ զի մի՝ լինիցի նմա բնաւ զանց առնել զնմին թէ 'ի մեծամեծաց, և թէ 'ի փոքրունց, որք կարգեալ են յամբողջ կատարելութիւն, կամ 'ի շուք և

պատիւ սրբոյ պատարագին։

Զի եթէ 'ի տուրերական պատարագան հին օրինաց զայնպիսի և զայնքան զգուշաւորութիւն փութոյ և երկիւղած յարգման խնդրէր ասուած 'ի քահանայից, մինչև զսատակման մահու պատիժ սպառնալ զանցառուացն զնոսա 'ի պատուիրանացն, քանի՞ ա՞՛՛ւել ապա ընդ պատժաւոր դատապարտութեամբն ոչ անկանիցին նորոյ սրբազան խորհրդոցն քահանայք, որք ըզգուշանալ հեղգանան 'ի մատուցման ահաւոր խորհրդոյ պատարագին, որ փրկութիւն է հաւատացելոցն աշխարհի և թողութիւն մեղաց ամենեցուն, (որք արժանապէս 'ի նոյն մերձենան,) և թոյլ տան թերութեան ինչ անկանիլ յամենասրբոյն յայն մատակարարութիւն։

Գլուխ Բ։

Յաղագս նիւնոյ պատարագին և պաշտաւորութեանց նոցա։

Նիւթ մատուցման սուրբ պատարագին ըստ կացուցման առաւն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ է հաց 'ի ցորենոյ անխմոր, և գինի յորթոյ անապակ։ Այսոքն զի զայնոսիկ հաւ անդր 'ի վերնատան 'ի սուրբ յաստուածային և արարչագործ 'ի ձեռս իւրս և աստուածային բանիւն յիսկական մարմին և յարիւն իւր փոխել ըստ գոյացութեանն՝ 'ի Ճաշակումն մատոյց ընտրեալ

իւր աշակերտացն. և պատուիրեաց իսկ զնոցն առնել հանապազ առիւր յիշատակ։ Զ՝ սանայնորիկ ըստ ամենայնի հարկաւոր է և պարտ ամենայն քրիստոնէից այնու նիւթով կատարել, որով զաւաչին մատոյց նա ինքն ամենատէրն մեր. և որ այլապէս ելմն քան զնոյն արասցէ, կամ խափանէ զնորհուրդն, կամ անպատուէ զայն 'ի դատապարտութիւն անձին իւրոյ։

Ուստի և հարկաւորէ առանց ինչ անօրինման, զի հաց սրբոյ պատարագին յատակ 'ի ցորենոյ լինցի և անխմոր. զի հանապազօր 'ի զատիկ մեր զենանի քրիստոս անարիւն նուիրմամբ։ Զ՝ ընոյն հաց նուիրական միայն քահանայքն պատրաստել պարտին ըստ կանոնացն հրամանի, և ոչ երբէք աշխարհականք. և այն զկարդեալ կանոնս աղօթիւն կատարելով. նա և ոչ օթեկան ջրովն զանգել զխմորն. և զնոյն ինքն զնշխարն խաչաձև դրոշմեալ, և լաւագոյն ելմն զգուշութեամբ եփեալ, ջերմաջերմ հանել 'ի սեղան ըստ կանոնի ՝նբ առաքելոցն և սրբոյն Գրիգորի մեր Լուսաւորչի։

Զ՝ այս պակասաւոր է, եթէ ոչ ելցէ հաց 'ի ցորենոյ. այլ կամ 'ի հաճարոյ, կամ 'ի գարեւոյ, և կամ 'ի կորեկոյ, և այլն։ Զ՝ կամ թէպէտ և 'ի ցորենոյ ելցէ, սակայն այնքան ընդ խառնեալ ընդ այլ սերմանեաց, մինչև չմնալ 'ի նը մա ցորենականութեան, և ոչ ևս կարել հաց

'ի ցորենոյ անուանիլ։ Զմանապէս և՝ եթէ այլ
լով ինչ կերպիւ ինչ ապականեալ, որպէս թէ՝
զանգեալ իւղով, կամ ընդ մեղր. և այլն։ Զիւ
կամ ջնջէ եւիեալ 'ի հուր պատշաճապէս, այլ՝
յարևու ջրացուցեալ՝ և այլն։ Զ 'ի այսպիսիք
ամենեքեան, և որք 'ի սոցին սակի, են խափա-
նարար պակասութիւնք սրբոյ պատարագին. և
ջնատարի խորհուրդն այսպիսի նիւթով. և որ
յանդգնի, ընդ նզովիւք կանոնաց է խնկապէս։

Զ՝ա և՝ եթէ ալիւր նշխարին ջրբեացի տարբա-
կան ջրով, այլ արուեստահնար ինչ հեղուկք,
որպէս՝ վարդեջրով և այլն. թէպէտ աւանդու-
թիւն լատին եկեղեցւոյ ընդ երկբայութեամբ
թողու զկատարումն կամ զոչ կատարումն,
բայց յաւանդութեան մերս եկեղեցւոյ չի՛ք
երբէք տեսեալ կամ լուեալ զայնպիսի մտա-
ծութիւն. ուստի ընդ անընդունական է հա-
մակարգել։

Նակ և հայ խմորուն ըստ կացուցման քրիս-
տոսի ոչ համարի պատշաճաւոր նիւթ սրբոյ
պատարագին, այլ՝ միայն բաղարջ. և չէ՛ պարտ
երբէք հայոց խմորեալ հայիւ պատարագել.
ապա թէ ոչ՝ 'ի կանոնական նզովս գրաւեալ՝
արտաքս անկանի 'ի հաղորդութէ եկեղեցւոյ.
որպէս և վճռի յութերորդ կանոն Յովհան-
նու իմաստասէրի և Ժողովոյն կարնոյ։ Զիւ չէ՛
փոյթ՝ թէ այլ եկեղեցիք կատարեն. զի մեք 'ի

սկզբանէ և այսր ուսեալ եմք անխմոր պատա-
րագել։ Ուրեմն պարտիմք մնալ հաստատուն
'ի նախնի մեր աւանդութիւն. և զայլոցն ևս
մի՝ անգոսնել. ոչ համարելով իսկապէս մաք-
մին և արիւն քրիստոսի զխմորուն հացի զմա-
տուցեալն առ 'ի նոցանէ. զի նոցա է տալ պա-
տասխանի, որք նորաձևիցեն զնախկին կացու-
թիւնն զինչ և իցէ պատճառաւ։

Զ. այսոսիկ գիտելով՝ պարտ է ապա ժամարա-
րին յառաջագոյնկատել, զի մի՝ պակասութիւն
ինչ գոյի 'ի հացն նուիրական, և այնպէս անխիղճ
մատուցանել զնոր պատարագն։ Ուստի եթէ
կայցէ պակասութիւն ինչ 'ի նշխարն, և ինքն
ապա իմացաւ. որ եթէ յառաջ քան զառաջին
աղօթքն իմացի, որ է՝ տէր աստուած մեր,
զայնպիսի պակասութիւն, որ արգելու 'ի նիւ-
թին գոլոյ, պարտի իսկոյն փոխել զայն, և զա-
նարատն դնել. սկսանելով 'ի բանէ անտի, որ
ասէ՝ յիշատակ տեառն մերոյ յիսուսի քրիստո-
սի և այլն։

Իսկ եթէ 'ի ժամ բաշխելոյն իմացաւ, խա-
փանեսցէ զպատարագն։ Սակայն եթէ 'ի մկը-
տելն իմացաւ, և պակասութիւնն իսկ չիցէ յա-
մենեւին խափանարարայն, զորօրինակ՝ թէպէտ
և անարատ իցէ նշխարն, սակայն իմանայ, թէ
մուկն արածեալ իցէ 'ի վերայ, և այլ այս-
պիսիք՝ կատարեսցէ զպատարագն. և ապա է-

ըեք շաբաթ կարգ կրեսցէ. որպէս ասէն կա-
նոնքն։ Այլ սակայն եթէ իմացաւ և անիծոյթ
արար իբրու առ ոչինչ համարելով՝ տարի մի
ամբողջ ապաշխարեսցէ։ Որ այսմ և էական
նիւթ է սրբոյ պատարագին գինի անապակ 'ի
բերոյ որթոյ ամենևին անխառն ընդ ջրոյ, որ-
պէս աւանդութիւն առաքելական եկեղեցւոյն մերոյ
'ի սրբոյ լուսաւորչէ մերմէ և այլոց. զոր և աշ-
առաքեալն Թադէոս աւանդէ յեօթնեերորդ
կանոնին իւրում. ընդ նմա և սուրբն մակար 'ի
խնդրոյ սրբոյն Վլթանէսի, կանոն. ը. յովհան
իմաստասէրն՝ կանոն. ը. և Ժողովն կարնոյ՝ կա-
նոն. ը։ Որոյ զհշմարտութիւնն նորուն իսկ
տեսուն մերոյ բանք ուխտին ցուցանեն. ոչ ըմ-
պել 'ի բերոյ որթոյ, (յետ վերջին այն ընթ-
րեաց 'ի վերնատան անդր,) յորոյ վերայ ասէ
նա ինքն սուրբ Հայրապետն յովհան ոսկեբե-
րան. թէ որթն գինի բերէ և ոչ ջուր։ Այլ
պակասաւոր է, եթէ ամենևին 'ի քացախ լցէ
փոխարկեալ, և կամ խառնութեամբ ջրոյ ա-
պականեալ, և կամ թէ հացիւ կամ այլ նիւ-
թով պղտորեալ, և յետոյ պարզեալ. զի այս-
պիսի գինեաւ ոչ կատարի խորհուրդն։ Ուստի
և չէ՛ պարտ ուրեք յանդգնիլ բնաւ, և զմա-
տուցումն փրկաւէտ խորհրդոյն 'ի դերևս հա-
նել. ապա թէ ոչ՝ ամենայնիւ ընդ նզովիւք
անկանի։

Այլ սակայն՝ եթէ գինին նոր լցէ սկսեալ
քացախիլ, կամ սակաւ ինչ թթուահամ լցէ,

կամ՝ նոր 'ի խաղողոյ մշեալ, և այլն. թէպէտ և կատարի խորհուրդն, սակայն ծանր մեղանչէ կատարիչն յաշագս անհոգացող լինելոյ՝ զբարի և զկրօնասիրական յարգուութիւն առ ահաւոր խորհուրդն ոչ ցուցանելով:

Ոչ՝ եթէ Ճապաղեսցի խորհուրդն յորժամ հանէր 'ի սեղանն, եթէ նախքան զառաջին աղօթքն պատահեսցի, որ է՝ ուէր աստուած մեր. և հարկ 'ի վերայ կայ, կատարեսցէ զպատարագն. և ապա երեք օր ընդ կարգաւ կացցէ. սակայն եթէ յետ աղօթիցն Ճապաղեսցի, մի՛ մատուսցէ. այլ լոկ Ճաշակեսցէ, և քսաներեք օր կարգ ածցէ: Լակ եթէ յանդգնիցի մատուցանել, զտարի մի պահօք և աղօթիւք ապաշխարեսցէ. քաւեալ զմեղս իւր, որպէս և կանոնէ շնորհաչին:

Դայց և զայս իսկ պարտ է գիտել, զի այսքիկ նիւթք՝ հայ և գինի պարտին ներգործուք առաջի քահանային լինիլ՝ և նա ինքն ժամարարն անթարթափ զդաստուք մտայ զդիտաւորութիւն իւր յատկապէս 'ի նոսա ուղղել պարտաւոր է մինչև ցաւարտումն պատարագին, ոչ զի երկիւղած կրօնասիրութք կատարեալ զնոյն՝ բարեյաջող ճոխութեան կենդանեաց. և յաւէժական հանգստեան յուսով ննջեցեալոցն լեցի երաշխաւոր, և մեծամեծ բարեաց համարէնաշխարհի պատճառ և մատակարար:

Այլ և ըստ կանոնացն արգելման չէ պարտ նմա յաւարտման որբ պատարագին լուանալ զինեաւ զմատունս իւր ի սկիհ անդր, և ոչ թաշկինակաւ մաքրել զսկիհն. այլ միայն մատամբք իւր՝ ջերմեռանդ սրտիւ և հոգւով ըստ աւանդութեան սուրբ եկեղեցւոյ մերոյ:

Պրակ Դ:

Յաղագս պէսահան բանի սուրբ պատարագին և պակասութեան նորա:

Պեսահան բանք կատարիչք բարձրագոյն խորհրդոյ սուրբ պատարագին՝ են այնոքիկ, զոր ասաց նոյն ինքն՝ տէր մեր յիսուսէ, յորժամ ի յընթրիս վերնատան զհացն և զգինին խնկական մարմին և արիւն իւր արար: Այլ անդանօր առեալ զհացն յածային ձեռս իւր՝ ասց, Առէք կերէք, այս է մարմին իմ, և այլն: Նոյնպէս և զգինին առեալ ասաց, Արբէք ի սմանէ ամենեքեան, զի այս է արիւն իմ, և այլն: Ապա այսոքիկ են առեսական բանքն, որոնք կատարի խորհուրդ սուրբ հաղորդութեան: Որս պարտաւոր է սրբագործող քահանայն լի և անթերի արուեստանել առանց աւելման և նուազութեան, որոշ ի վերայ հացին և որոշ ի վերայ գինւոյն, իւրաքանչիւրում՝ զիւրն խօսելով հանդերձ անշփոթ դիտաւորութեամբ մատաց առ նոյն: Բանդի թէպէտ և լատինաւոր խորհրդոյն և

նշանակացն 'ի հոգեւոր և յանմահարար կերա-
կուր փոխարկութիւնն կատարի յասել քահա-
նային՝ որով զհայս, և այլն. սակայն որովհետև
տեսական պատճառ կատարիչ խորհրդոյ պա-
տարագին ըստ ամենայն ազգացն Աստծաբանից
են նոյն իսկ բանքն քի, զոր 'ի վերոյ եդաք,
յարտաբերութեան նոցին ճշմարտապէս և կա-
տարեալ փոխարկումն լինի գոյացութիւն հացին
'ի մարմին քի, և գինւոյն՝ յարիւն իսկական:
Այլ կայ այնուհետև նոյն ինքն քն ըստ կատա-
րեալ միաւորութեան աստծային և մարդկային բը-
նութեանցն 'ի ներքոյ տեսակաց հացին և գի-
նւոյն: Այլ այս իսկ է պատճառն, զի քահանայն
զայգ ընդ ասելոյն զբանս զայսոսիկ՝ բարձրա-
ցուցանէ զընծայսն 'ի տես և յերկրպագութիւն
ամենեցուն հաւատով և սէր սրտիւ ներկայ է-
ղելոցն: Այլ սակայն և զայս ևս յուշ ածել
'ի դէպ է, զի կատարիչն խորհրդոյս քահանայ
զբանսն զայնոսիկ ըստ երկու մասացն ևս ասել
նկատէ, մի՝ պատմաբար, ըստ որում սկըս-
եալ 'ի վերուստ անտի՝ զկատարումն խորհրդ-
ոյ անօրէնութեան քի առաջն առնէ, առ հայր
խօսելով, և տարեալ աւարտէ մինչև 'ի միւս-
անգամ գալուստն: Այլ երկրորդ՝ տեսակաբար
ըստ որում նա ինքն մաքրագործ պատարագիչ
զդէմս քի զգեցեալ անդանօր, և զդիտաւորու-
թիւն մտաց իւրոց հաստատութեամբ առնոյն
իսկ 'ի նշանական ուղիղ ձկտեցուցեալ՝ յլա-
տակ և մաքուր ջերմեռանդութիւն ասէ զբան-

սքն, զի իսկապէս գոյակիսեսցին նշանակքն 'ի մարմին և յարիւն քրիստոսի։ Եւ առանց երկբայութեան հաստատ՝ թէ իսկ և իսկ կատարեցաւ խորհուրդն ահաւոր մարմնոյ և արեան տեառն մերոյ յիսուսի։

Անդիմադրելի է այս ճշմարտութիւն, և ոչ ոք ընդդէմ ինչ ասել կարող է։ բայց քանզի որպէս 'ի մարմնաւիկ տնօրէնութեանն քրիստոսի իսկապէս մարմին եղեալ էր բանն ճշ։ և անդամին իսկ 'ի ծննդենէ 'ի հրաշս փառաց աստուածաբար իմն բարձրացեալ, սակայն և 'ի մկրտութեան անդր ընկալաւ տնօրինապէս ըստ հոգին սուրբ, որ եկն աղաւնակերպ և հանգեաւ 'ի վերայ նորա։ և նոյն տէր՝ որ իսկութիւնն է համայն փառաց և փառաւորութեանց, նորին գործակցութեամբ 'ի գործ սքանչելեացն փառաւորեցաւ։ Այսպէս և աստանօր ընդ ասել քահանային մաքուր դիտաւորութեամբ։ Այս է մարմին իմ, այս է արիւն իմ։ թէպէտ և իսկոյն կատարի ճշմարտապէս փոխարկումն, և ստուգապէս մարմին և արիւն քրիստոսի լինին նշանակքն, բայց սակայն՝ որպէս զի և ներգործութիւն սրբութեան հոգւոյն ընկերեսցէ 'ի կատարումն խորհրդոյս, և գործ նորա յայտնի երևեալ ծանուսցի յայսմ խորհրդեան, անդրէն երկրորդ օրհնութեամբն աղաչէ քահանայն զհայր առաքեալ զհոգին սուրբ յընծայսն, ըստ որում և առաջին մարդեղութիւնն իսկ հա-

ձուլթեամբ հօր և գործակցութեամբ հոգւոյն սրբոյ եղև։ Եւ այսպէս՝ որ յառաջն խսկապէս 'ի մարմին և յարիւն քրիստոսի գոյատիսեալ էր, ճշմարտապէս հոգեւոր կերակուր լինի հոգւովն սրբով ամենայն արժանաւորաց, և զօրանայ 'ի հրաշս զարմանալեաց, միաւորելով ըմարդիկ ընդ աստուծոյ։ և շնորհօք ՅԾս և որդիս Աստուծոյ առնելով զարժանապէս ճաշակօղսն՝ ընդ նմին և զայլ ևս բազմապատիկ հրաշս գործելով։ զորս շնորհել մաղթէ 'ի հօրէ 'ի յաջորդ աղօթսն վասն կենդանեաց և նշնջեցելոց։

Այլ ասիցէ ոք թերևս, եթէ յասել քահանային զտեսական բանսն՝ ստուգապէս 'ի մարմին և յարիւն տեառն գոյատիսեցան նշանակքն, զիարդ ապա համարձակի խաչակնքել, յորժամ զորով օրհնեալն ասէ։

Պատասխանեմ, վասն զի ներգործութիւն հոգւոյն սրբոյ խաչիւն յայտնեցաւ, և սուրբ եկեղեցին 'ի ձեռն խաչին եղև բազմապատիկ շնորհաց նորին արժանաւոր, որով և նոյն ինքն հոգին անուանի պարգև սուրբ խաչին։ ըստ այնմ՝ յովհան. է 39։ Զև' էր հոգի, քանզի յիսուս չև' էր փառաւորեալ։ այսինքն է՝ խաչեալ։ Զասն այնորիկ և յասելն զնոյն առ հայր, խաչանքէ զընծայսն առ 'ի ցուցանել զճշմարտապէս եկաւորութիւն հոգւոյն սրբոյ, (որ խա-

չիւն շնորհեցաւ,)և զբուսանդակապէս լրակա-
նութիւն սարսափելի խորհրդոյն յաստուածա-
հրաշ ներգործութիւնս զարմանալեաց։ Բայս
իսկ և 'ի դէմս իւր խաչակնքէ, զի և յինքն իսկ
հաճեսցի ի ջանել մարդասիրութեամբ, և շնուլ
շնորհօք որպէս զառաքեալսն, որով աներկբայ
ճշմարտութեամբ լեցի նմա հաւատալ զնոյն խ-
կական մարմին և արիւն աստուն. և առանց դա-
տապարտութեան մերձենալ 'ի քաւութիւն և
'ի թողութիւն մեղաց։

Զ՝ դ՝ զծայրագոյն իմն զդուշութիւն պարտ է
քահանային բերել յանձն, յորժամ արտաբե-
րել ունի զբանսն զայնոսիկ, զի յատակ և բա-
ցայայտ ասասցէ առանց այլայլուն՝ անպակաս
և առանց յաւելման։ Զանգի եթէ դիպեսցի
նմա թողուլ զնիմն յէականացն տեսակին՝ որք
են, այս է մարմին իմ, այս է արիւն իմ, ոչ կա-
տարի խորհուրդն. վասն զի տեսակաւորիչ խոր-
հրդոյն են նոքին, և այնպէս ունայնանայ շնորհ-
սրբոյ պատարագին 'ի դատապարտութիւն ին-
քեան։ Այնպէս եթէ այլայլեսցէ զձևն, նուա-
զեցուցեալ ինչ 'ի հարկաւորաց, կամ փոփո-
խեալ ըստ նշանակութեանբառիցն զնիմն յէ-
ական եղերայ, ոչ կատարի։ Սակայն եթէ յա-
ւելուցու ինչ 'ի հատարակ բանսն, որք միայն
ըստ հրամանի են, և յառաւել բացայայտուի
մտաց տեսական բանին, թէպէտ և կատարի
խորհուրդն՝ բայց ինքն մեծապէս ևս մեղանչէ։

Ուստի ասեն աստուածաբանք, թէ յորժամ հաւատի խմանայ ժամարարն՝ թէ թողեալի՝ ցէ կամ մոռացեալ ինչ յէական հարկաւորացն, իսկոյն կրկնեսցէ զոնեայ լռելեայն թէ՝ ուրեմամբ, բայց եթէ հաւատի գիտասցէ՝ թէ մոռացեալն կամ թողեալն չէ՛ 'ի հարկաւորացն առ կատարումն խորհրդոյն՝ ոչ է պարտ կրկնել։

Պրակ Դ։

Յաշտպ պահանջելոն կոպարիչ պաշտօնէին։

Պաշտօնեայ կատարիչ աստուածային խորհրդոյս է ճշմարիտ և օրինաւոր քահանայ, որում չէ՛ պարտ լինիլ անգործունեայ և տարտամ 'ի դիտաւորութեան, ոչ անզեղջ շաղախեալ 'ի մեղս մահացու, ոչ լինիլ բանադրեալ կամ արգելեալ, որով արժանապէս կարասցէ մատուցանել զսուրբ պատարագն։ Ուստի և 'ի հինգ կողմանէ հանդիպիլ կարէ այս պակասութիւն. այսինքն է՝ 'ի դիտաւորութէն, 'ի տրամադրութենէ հոգւոյ, 'ի յորպիսութէ մարմնոյ, յանպատշաճութէ զգեստուց և 'ի մատակարարութենէ խորհրդոյն՝ զոր կատարէ։

Պակասութիւն դիտաւորութեան է, յորժամ ընդ խաղ կամ յայպանել կատարեսցէ. որով թէպէտ և խորհուրդն ոչ կատարի, սակայն և

ինքն իսկ 'ի պատիժ քահանայիցն է անտարա-
կոյս, որք անդոսնէին զսէրն 'ի խաչին և ասէին.
վա՜հ, որ քակէիր զտաճարն. և այլն։ Այսպէս
և ես անկատար է դիտաւորութիւնն, յորժամ
վարանուս և տարտամ մտօք զբաղեալ՝ մատչի
'ի սեղանն, և ոչ նկատէ ներգործական դիտա-
ւորութեամբ 'ի նոյնինքն 'ի հացն և 'ի գինին,
զոր սրբագործէ, այլ իբրու սովորական ինչ
գործ համարելով կատարէ միայն զօրութե-
նական դիտմամբ։ Այլ և՝ յորժամ չունի փոյթ
որոշելոյ, թէ որպէս զպատարագն՝ զոր մատու-
ցանէ, նախկնաբար նուիրել պարտ էր զէր
յանուն քրիստոսի. և զինարդ ապա զշնորհս ար-
դեանց նորա տարածանել առ սպասաւորս և 'ի
գործակիցսն սրբոյ պատարագին մատուցման.
և թէ որպէս պատշաճաւոր է զշնորհս սբոյ պա-
տարագին ընդ արձակել առանց, յորոյ անուն
մատուցանի. և և առ ուխտաւորս և առ պըտ-
զաբերիչս սբ եկեղեցւոյ, առ կենդանիս և առ
ննջեցեալս. և այլն։ Զ ասն զի թէպէտ և 'ի լի-
նել զօրութենական դիտաւորութեամբ առ այս-
պիսի՝ իբրու թէ նկատելով առնել, զոր առնէ
եկեղեցի՝ կատարի խորհուրդն. բայց սակայն առ
անբաւիր և անսահմանելի աղաւուն 'ի խղճա-
հարութենէ լաւագոյն ևս է, զի առ ամենե-
սին յընդունական պտղոյս սուրբ պատարագին
ներգործական և որոշ դիտաւորութեամբ հաղորդես-
ցէ զշնորհսդ արդիւնս։

Ա՛յլ վայ է մեզ և բիւրիցս վայ, որք 'ի սաբ-
սամիելի յայս խորհուրդ իբրու 'ի սովորական
ինչ գործ մատչիմք, բերանք մեր ՀԱԾաբան, և
ձեռք մեր ՀԱԾագործ, բայց սակայն սիրտ մեր
թափառական, և միտք մեր ընդունայնախոհ.
հոգի մեր անպտուղ, և կամք մեր առանց ե-
ռանդեան. ոտիք 'ի սեղան անդր կանգնեալ,
և խորհրդով յունայն մատածութիւնս համարձն
ցնդեալ։ Եւ այսպէս փոխանակ հաշտեցուցա-
նելոյ զՀԱԾ ընդ մարդկան, 'ի պատճառս այսպի-
սեայ 'ի ցասումն բարկութեան զամենողորմ
բարերար բնութիւնն բերեալ։

Այս առդեռ ինձ և զանապարծուն 'ի փող-
փող փայլմունս ոսկեթել զգեստուց, և զա-
ջացն ագահութիւն յախորժականս երկրաւո-
ր այ, զցամաքեռանդն բարբառումն աղօթական
բանից, և զառանց ուշադրութեան շտապումն, նման
նատիպ աննշան հնչման զրնձոյ և ծնծղայից
ըստ առաքելոյն։ Ա՛յսոքիկ ամենեքեան տոյժ
տագնապի են հոգւոյ՝ Եղբարք, և մեք 'ի նոսին
ախորժանօք ինն շրջանակիմք առանց զդաստու-
թեան։

Պակասաւորութիւնն յառաջ եկեալ 'ի տրա-
մադրութէ հոգւոյ՝ է, յորժամ պատարագիչ
քահանայն լինի բանադրեալ՝ կամ 'ի կարգէ լու-
ծեալ, և կամ այլ զինչ և ինչ կերպիւ ըստ
կանոնացն արգելեալ, զի չկարէ այնպիսին լի-
նել պաշտօնեայ խորհրդոյ. և եթէ յանդգնես-

ցի՝ պատժեսցի խսպառ անկանելով յեկեղեց-
ւոյ 'ի բաց, որպէս ասէ կգ. կանոն առաքելոց.
և դ. կանոն անտիոքայ ժողովոյն։ Ա. յԼ խոր-
հուրդն՝ զոր մատակարարէ, կատարի ըստ ա-
սելոյ ոմանց, իսկ ոչքան վասն յանարժանս հա-
ղորդելոյն, նոյնքան և վասն 'ի գործ դնելոյ
զպաշտօնն, որ արգելեալ էր ինքեան՝ ծանրա-
գոյն և մեղանչէ։ Նոյնպէս և ծանուցնս մե-
ղանչէ, որ ունի զնոսատովանահարս և 'ի մահ-
ցու մեղս մնալով պատարագէ. կամ թէպէտ
և չունի զնոսատովանահարս, սակայն 'ի հարկ-
աւորութեան պատարագէ առանց զղջանալոյ։
Բայց սակայն՝ եթէ զղջացի 'ի բոլոր սրտէ և
առաջադրեսցէ ոչքան և կարելին է վաղվաղ-
կի խոստովանիլ, ոչ այնքան ծանր մեղանչէ։
Պատայամ և եթէ 'ի մատուցման անդր 'ի
միտս բերցէ լինել ինքեան 'ի մեղս ինչ մա-
հացու, յամենայն սրտէ զղջացեալ առաջադրես-
ցէ ստուգութիւն իմն խոստովանիլ և ապաշխա-
րել ըստ արժանւոյն։ Նմանապէս և յորժամ
իմանայ զինքն արգելեալ կամ բանադրեալ,
իսկոյն պարտի հաստատուն զղջմամբ ապաշ-
ւեալ, և ջերմեռանդ սրտիւ առաջադրել ինքեն
զընդունելուն արձակման։ Ա. յոգբիկ թէպէտ
և այսպէս, սակայն յորժամ չկայ վտանգ ինչ գայ-
թակղութեան, լաւ և առնէ յառաջ քան զսրբա-
գործուին՝ թողուլ զպատարագն և ոչ կատա-
րել։

Պակասուին յառաջ եկեալ յորպիսուէ մարմնոյ՝

է, յորժամ պատարագիչն չէ՛ ծոմ յետ ընթ-
բեայց երեկոյին և անդր՝ կամ որոշագոյն՝ յետա-
սեալոյ զեկեսցեն, այլ կերեալ է ինչ կամ ար-
բեալ զջուր. և այս՝ որով պատճառաւ և իցէ.
մինչ նա և իբրև զդեղ ինչ կամ զըմպելիս բժշ-
կական, որքան և փոքր իցեն ըստ քանակութե՛.
զի արգելուն կանոնք զայնպիսին 'ի պատարա-
գելոյ և 'ի հաղորդութենէ ։ Այլ եթէ նախ-
քան զգիշերն առցէ կերակուր կամ ըմպելի,
թէպէտ և յետոյ ննջեսցէ, և կերակուրն և ս-
ւապէս չէ՛ մարսեալ՝ ոչ մեղանչէ ։ Բայց վասն
շրխոթման մոռացն՝ որով բառնի ջերմեռանդու-
թիւնն, զգուշացուցանեն յետս կալ 'ի պատա-
րագելոյ և 'ի հաղորդելոյ։ Նոյնպէս և՝ եթէ
կլցին մնացորդք կերակրոյ յատամունս, ոչ ար-
գելուն. զի ոչ կլանին իբրև զկերակուր, այլ
իբրև զթուք ։ Ոչ նոյն է իմանալ, յորժամ 'ի լ-
ւանալ զբերանն՝ կայլակ ինչ ջրոյ կլցի առանց
դիտաւորութեան ։ Եթէ երաշխան հոսուն
պատահեսցի, պատճառեալ 'ի յառաջագոյնի-
մըն մոռացութենէ՝ որ իցէ մեղք մահացու, և
կամ 'ի զեղխելոյ 'ի կերակուր և յըմպելի, ար-
գելանի մերձենալ 'ի խորհուրդն սուրբ. բայց
եթէ այլապէս ինչ թուեսցի խոստովանահօրն ։
Իսկ եթէ յերկբայութեան է. թէ արդեօք
նախընթաց մոռացութէն մահացո՞ւ էր՝ թէ նե-
րելի, դաձեալ հրամայի յետս կալ 'ի պատա-
րագելոյ. սակայն ըստ դիպուածոյ հարկաւորու-
թեան. ևն ։ Բայց եթէ հաւաստի է չլինիլ մա-

հայոց մեղայ 'ի յառաջնթացիւր մտածուէն, այլ միայն բնական պատճառաւ թուլութեան 'ի քնոյ, կամ դիւական խաբէութեամբ լեցէ պատահեալ, և պատճառաւ շարժուէ մարմնոյ չեցէ հանդիպեալ այնպիսի վրդովումն մտաց, որով անկաւոր լեցի արգելումն, յայնմ աւուր սրբեալ զինքն հառաչանօք և աղօթիւք՝ հաղորդեսցի կամ պատարագեսցէ և մի' զրկեսցի 'ի շնորհայն, որպէս և կանոնադրեն սուրբ հարքն:

Եվ յարարողութենէ անդր պատարագին, և թէ 'ի զգեստս հանդիպիլ կարեն բաղում պակասութիւք, յորոց զոմանս գրեսցուք սասանօր: Արդ՝ նախ չէ' կարելի մատուցումն պատարագի արտաքոյ ՝ուր եկեղեցւոյ և ո՛չ 'ի յեկեղեցի՝ որ ո՛չ օծեալ լեցէ, և չունիցի զբեմ և զօծեալ վէմ, զի արդարև հեբրի այր ըստ օրինի, որ արտաքոյ սուրբ եկեղեցւոյ մատուցանէ զսուրբ պատարագն ըստ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն: Եվ պէտ և առ հարկաւորութեանէ երբեմն որ նօրինի որոշել տեղի մի, և անդ 'ի վերայ օծեալ վիմի հրամայի յեպիսկոպոսէն մատուցանել, որպէս տեսեալ եմք 'ի բաղում տեղիս, և որպէս երբեմն ժողովք տնօրինեցին 'ի Նեբքոյ խորանի 'ի վերայ շարժական սեղանոյ պատարագել յաւուրս զաքարիայ սպասաւորին, ուր երգեցաւ զառաջինն և խորհուրդ խորին՝ երգ զգեստաւորման: Այսպէս և պակասաւոր է, եթէ սեղանն չեցէ ծածկեալ մաքուր պատառաւ և

գորփուրայիւ։ Այթէ չիցեն մոմք 'ի լուսաւո-
րութիւն։ Այթէ ժամանակն չէ յարմարաւոր,
որ է յառաւօտէ մինչև 'ի կէս օր. բայց յա-
ւուրց շաբթու ճրագալուցի ծննդեան և զատ-
կի։ Այթէ պատարագիչն չէ կատարեալ զգիշե-
բային պաշտամունս և զառանձնական աղօթսն
և զաղմոսերգութի։ Այթէ քահանայական ըն-
գեստքն չեն օրհնեալք։ Այթէ չկայցէ դպիր
կամ ապաստաւոր։ Այթէ ո՛չ գոյ պատշաճաւոր
սկիհ հանդերձ մաղզմայիւ, որոյ սկաւառակ
կամ աւազան պարտի լինել կամ յոսկւոյ կամ
յարծաթոյ և կամ յանագէ, այլ ո՛չ 'ի պղն-
ձոյ կամ յապակւոյ և կամ 'ի փայտէ։ Զ 'ի-
պղինձն ժանգահամ է և ապակին դիւրաբեկ,
իսկ փայտն յինքն ծծէ զհեղուկ։ Այթէ մարմ-
նակաչքն կամ գորփուրայքն չիցեն մաքուր և
յաննկար կտաւոյ, և օրհնեալք յեպիսկոպոսէ
կամ յայլմէ ումեքէ, որ ունի զիշխանութիւն
օրհնելոյ։ Այթէ պատարագեսցէ զգլուխն ծած-
կեալ ունելով առանց անօրէնութեան վասն
հարկաւոր պատճառի։ Այթէ չկայցէ խորհրդա-
տեսոր առաջի ժամարարին, թէպէտ և սերտ 'ի
բերան գիտասցէ զամենայն աղօթսն և այլն։

Զոն և այլ բաղումք, որք հանդիպիլ կարեն
'ի մատակարարութեան խորհրդոյն, որոց տե-
ղեկութիւնն կարևոր է ժամարարաց, որպիսի
են հետագայքն։ Այթէ 'ի պատարագել քահա-
նային ահ հասցէ 'ի թշնամեաց, և ինքն սկիզբն

արարեալ էր արբոյ խորհրդոյն՝ թողուլ պարտ
է զպատարագն և փախչիլ, և ոչ անկանիլ 'ի
ձեռս թշնամեաց, որ ոչ համարին նահատակու-
թիւն. բայց զբաժակն արբցէ, և զսուրբ հա-
ցըն ընդ իւր բարձցէ, և զայլ ոք սպասս և՝
որքան կարէ աղատեսցէ։ Եթէ 'ի խորհուրդն
մաշ կամ ճանճ և կամ այլ ինչ նման՝ անկցի,
զորս առանց նողկոտանաց և վտանգի փախելոյ
չկարէ ըմպել, հանցէ զգուշութեամբ, և 'ի
ծերպս եկեղեցւոյ դիցէ. իսկ եթէ չկայ վը-
տանգ զգուանաց՝ արբցէ ընդ խորհրդոյն։ Ե-
թէ 'ի սուրբ յարեանէն 'ի վերայ հանդերձից
սեղանոյն կաթեսցի, մաքրել պարտ է զգու-
շութեամբ. այլ թէ 'ի հանդերձս իւր՝ կարել
և 'ի ծերպս եկեղեցւոյ պահել։ Իսկ եթէ 'ի
գետին կամ 'ի վր տախտակի լինիցի կաթիլ,
ըստ բաւականին քերել պարտ է զայնս և ծած-
կել ընդ սեղանով։ Եթէ պատճառաւ ինչ
փախեսցէ ժամարարն, և տեսակք հաղորդու-
թեան ամբողջ երևեսցին 'ի նմա, մեծարանօք
առցէ զտեսակքն և ճաշակեսցէ, եթէ հնար
ի՞նչ. բայց չկարէ առ նողկոտանաց, զգուշութ
հաւաքեսցին, և տեղին լաւագոյն և քերեսցի,
և պահեսցին ամենեքին թաղեալք 'ի ներքոյ սե-
ղանոյն։ Եթէ ցամաք մասն խորհրդոյն 'ի վը-
րայ ծածկոցին անկցի՝ չէ ինչ. բայց եթէ յեր-
կիր, պատուով և յարգանօք 'ի վեր առցի, և
տեղին քերեալ՝ ընդ սեղանով ծածկեսցի քե-
րածն։ Արեն և այլ այսպիսի բաղում պակա-

սուրթիւնք հանդիպիլ 'ի մատակարարութեան
զորոց ուղղաւորութիւն ըստ կանոնացն առ-
նել պարտ է, և ոչ թողուլ անապաշխար զքա-
հանայն, որ ոչ զդուշացաւ և եբեր զթերութի-
յամենակատար յայն խորհուրդ։ Այլ աղաչէս-
ցուք զտէր տալ մեզ զգաստութիւն մտաց և
հոգւոյ, զի արժանապէս ուպասահարիցեալ սրբ-
բազան պատարագին և այլոց ևս սրբազան խոր-
հրդոցն եկեղեցւոյ՝ մատակարարք շնորհացն
հաղիսասցուք արժանաւորաց, և վայելեալ 'ի
նմին բարւոք պաշտամամբ՝ կրկնակի պատուոյ
լիցուք ժառանգաւոր 'ի քրիստոս յ՚ի տէր
մեր. որում փառք և երկրպագութիւն ծնրա-
դրութեամբ բարեբանութիւն ընդ հօր և ընդ
հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս։

Ընդ պաղեցու�հեղինակին առաջոց ինչ յաւելման։

Վա՜հ, ով թշուառական քահանայ՝ որ մեռեալ ես յերկինս և կենդանի կեաս 'ի դժոխս, և զնոյն ինքն զսատանայ 'ի քումդ սրտի զեռեղեալ՝ մատչիլ ժպրհիս 'ի սեղանատեառն՝ պղծել զարբու�թիւնորա, և այպանել զանուն նորա սուրբ, բերանով օրհնես՝ և սրտիւ անիծանես։ Ո՜ քանան խորհրդոյն պղծալից շրթամբք արտաբերեալ՝ յամենաբարի փրկչին քո յերեսս թքանես։ Ո՜ մեծ վայելչութի նորին՝ զոր ցանկան հրեշտակք գոնեայ ընդ աղօտ տեսանել և ամենայն երկնային զօրացն դասակցութիւնք անլռելի ձայնիւ վերագոչեն սուրբ, սուրբ, սո՜ւրբ, դու ամբարշտութեամբ ծանակեալ հայհոյես, յորժամ սրտիւ լռես, և բերանով իբրև զշուն զշոշանջեալ գոչես, տէ՛ր՝ չեմ բաւական, թէ ընդ յարկաւ իմով մտցես, այլ ասա բանիւ՝ և բժշկեսցի հոգի իմ։ Ո՜ ամենասուրբ մարմինն զայն՝ որ 'ի մաքրագոյնանդր արգանդի երջանիկ կուսին յղացաւ 'ի հոգւոյն սրբոյ, յանմաքուր բերան քո եդեալ՝ և որ գիւնն է բոլոր աշխարհի՝ թունաւոր ատամամբք խածատեալ՝ ծատքեալ կլանես և յապաւառարանն հոգւոյդ ըզտիղմ գռեհայց ձգես։ Վասն զի չէ դուշնաքեայ ինչ պղծագործութիւն յաղտեղամածբերան՝ քան 'ի տղմի թաղել զորդին ասատուծոյ, զհայր քո և զարարիչ, զստեղծիչ քո՝ զկենդանարարիչ և զփրկութեան քո։ Ո՜վ չարա-

գոյն քան զյուդայ, և վատթարագոյն քան զ-
հրէայս, զարհուրին դէպ, սարսափին դժոխք,
այն ինչ ժպրհիս դու անարժան ճաշակել զմար-
մին և զարիւն տեառն, որ թէ ոչ սատակես-
ցիս իբրև զյուդայ զկնի սրբապիղծդ ճաշակ-
ման, մեծագոյն ևս տանջանաց և խստագոյն ևս
պատժոց պահիս: Այլ թէ ոչ դարձցիս և զզղ-
ջասցիս, գանձես քեզ բարկութիւն յաւուր
բարկութեան և յայտնութեան արդար դատա-
ւորին աստուծոյ, որ հատուցանէ իւրաքան-
չիւր ըստ գործոց իւրեանց: Բանդի այնքան խիստ
և անաչառ լիցի քեզ դատաստանն յայն ատեն
սոսկալի, որքան ևս առաւել համբեր քեզ նախ
քան զայն:

Զանիր ապա զվիճակ քո մաքրագոյն, թէ յոր-
պիսի պատիւ ճոխացար, զի զոր կոյսն երանել
ամենասուրբ մայրն մարիամ միանգամ և եթ
ծնաւ, դու ինքն քանիցս անգամ և պատարա-
գես, բանիւ զնոյն կատարես, իբրև 'ի սեղանոյ
վայելես, և տեառն մերոյ յիսուսի քրիստոսի
մարմնովն և արեամբ կերակրիս: Ով երջանիկն
քահանայութեան, ով սրբութեանն ձեռաց,
ով օրհնեալն լեզուի, ով սրբազանն կրծոց և
երանեալ որովայնի, եթէ յայսմ առաւօտու
այնուիկ մաքրութեամբ մարմնոյ՝ սրտի և մտա-
ցըն ընկալցիս զմարմին քրիստոսի որպէս ար-
ժանն է, միւս ևս մարիամ լինիս արդարև, ո-
րոյ արգանդն դրախտ եղև որդւոյն Աստուծոյ
և սրբարար հոգւոյն Սրբոյ:

Յովհաննու Գլխոց պարտուհանիլոց յայսմ Գրքոյս։

Երես

Ընծայաբերութիւն։ . . . . . .
Յաղագս պատուոյ քահանայից։ 1
Գլուխ ա։ Թէ արքայական է քահանա-
յականն պատիւ։ 3
Գլուխ բ։ Թէ քահանայք գեր ի վերոյ
են քան զմարդիկս. և են հրեշտակք։ . . . 5
Գլուխ գ։ Թէ քահանայք են սիրելիք
և բարեկամք Աստուծոյ։ 10
Գլուխ դ։ Թէ քահանայք են Աստ։ . . . 14
Գլուխ ե։ Հաստատուի քահանայական
գերազանցութիւն բանիւք սրբոց հարց։ . . . 18
Գլուխ զ։ Զարմանաւոր միաւորութիւն
քի ընդ քահանային ի նոր հաղորդութիւն։ . . 21
Գլուխ է։ Թէ ոմանք ճշմարիտ համար
պահանջեսցի ի քահանայից յաւուրն
դատաստանի։ 23
Գլուխ ը։ Թէ ոմանք կատարելութիւն և
սրբութիւն պահանջի ունել քահանային։ . . 29
Գլուխ թ։ Թէ յանցանք քահանայից
ծանրագոյնս վճռացուցանեն զնոսա։ . . . 34
Գլուխ ժ։ Թէ զնոսրդ անաչառ պատ-
ժէ նոսա զքահանայս վասն մեղաց։ 39
Գլուխ ժա։ Թէ ոմանք պարտաւորութիւն
է քահանայից օրինակ բարեաց լինիլ
ժողովրդեան։ 48

Գլուխ ԺԲ։ թէ որքան հարկաւոր է քա-
հանայից ուսնել զգիտութիւն։ 51
Գլուխ ԺԳ։ թէ որքան զաղտոտի է անմա-
քուր պղծութիւն 'ի քահանայս։ 54
Գլուխ ԺԴ։ թէ պարտ է քահանայից պա-
հել զողջախոհութի օրինակաւ քրմաց։ . . 61
Գլուխ ԺԵ։ թէ պարտ է քահանայից
հրաժարիլ յաշխարհական զբաղմանց
և յառաուաձայինսն պարապիլ։ 64
Գլուխ ԺԶ։ թէ պարտաւոր են քահա-
նայք խորշիլ յուսնելոյ զինչս։ 67
Գլուխ ԺԷ։ թէ զի՛նչ պարտաւորութի
է ունողաց զեկեղեցական հասոյթս։ . . . 72
Գլուխ ԺԸ։ թէ ցանկութի պատուոյ և իշ-
խանութե՝ զեղծումն է եկեղեցականաց։ . . 79
Պրակ Ա։ յաղագս թերութեանց որք հան-
դիպին 'ի մատուցման սքի պատարագին։ . . 89
Պրակ Բ։ յաղագս նիւթոյ պատարագին
և պակասութեանց նորա։ 91
Պրակ Գ։ յաղագս տեսական բանի սբ
պատարագին և պակասութեան նորա։ . . 97
Պրակ Դ։ յաղագս պակասութեան կատա-
ռիչ պաշտօնէին։ 102
Ա՛ռ աղդեցութիւն հեղինակին առանց ինչ
յաւելման։ 111

ԱՎԱՐՏ։

ՀՍՍՀ-ՍՍՌ Ա.
Գ. Մ. ՄԱՇՏՈՑԻ

ՀՀ Ազգային գրադարան
NL0127264